«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



«ԵՐԵՎԱՆԻ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի (այսուհետ՝ ՄՈւՀ կամ ԵԻՊՔ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձնահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ....4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ....5
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....13
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....13
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....13
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....15
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ....15
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ....17
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ....23
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ....32
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ....36
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....39
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....43
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....46
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ....49
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ....53
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....58
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....59
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....59
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ....61
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....63
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....64
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....65
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....66

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը հիմնադրվել է 1960 թվականին՝ «Երևանի էլեկտրոնային հաշվողական մեքենաների տեխնիկում» անվանումով: Տարիների ընթացքում այն մի քանի անգամ վերակազմավորվել է, և 1999 թվականին վերանվանվել է «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ: Քոլեջի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց փողոց 52[1]:

2021 թվականին Քոլեջը մասնակցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին և ստացել է չորս տարվա հավատարմագրում[1]:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

2023-2024 ուսումնական տարում Քոլեջում սովորում է 982 ուսանող, որից 980-ը՝ առկա, իսկ 2-ը՝ հեռակա ուսուցմամբ: Դասավանդում են 67 մասնագետներ, որոնցից 66-ը՝ բարձրագույն, իսկ 1-ը՝ միջին մասնագիտական կրթությամբ: Դասախոսներից 14-ը համատեղությամբ են, հինգն ունեն գիտական աստիճան, որոնցից երկուսը՝ դոցենտի կոչումով: Ներկայումս Քոլեջում դասավանդում են նաև երկու շրջանավարտ-դասախոսներ:

Քոլեջում կրթությունը կազմակերպվում է հետևյալ վեց մասնագիտություններով. «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Մեխատրոնիկա», «Համակարգչային գրաֆիկա» և «Ռոբոտաշինություն»:

Շրջանավարտների հետագծի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2023-2024 ուստարվա 332 շրջանավարտներից 117-ը շարունակում են ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մասնագիտությանը համապատասխան ուղղությամբ, իսկ 97-ը՝ աշխատում են, որոնցից 59-ը՝ իրենց մասնագիտությամբ: «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունն ունի ամենաբարձր զբաղվածության ցուցանիշները:

[1] ԵՐԵՎԱՆԻ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԷՋ 4-5

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի (ԵԻՊՔ) ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է՝ իր սահմանված առաքելությամբ, և երկրորդ անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում:

ԵԻՊՔ առաքելությունը և ռազմավարական նպատակները սահմանված են 2023-2027 թթ.-ի ռազմավարական ծրագրում (ՌԾ): Առաքելությունն արտացոլում է գիտելիքի փոխանցման, ազգային մտածողության ձևավորման և որակյալ մասնագետների պատրաստման ուղղվածությունը: Քոլեջում իրականացվել է SWOT վերլուծություն, իսկ ՌԾ իրականացումն ուղեկցվում է պլանավորման և հաշվետվությունների մեխանիզմներով: Քոլեջի առաքելությունը ճանաչելի է շահակիցների շրջանում, ռազմավարական նպատակների իրագործման համար մշակվել է պլան-ժամանակացույց, իսկ կառուցվածքային ստորաբաժանումները կազմել են գործողությունների տարեկան պլաններ՝ հաշվետվությամբ:

Սակայն առկա են նաև որոշ թերություններ, մասնավորապես՝ ռազմավարական փաստաթղթերում գերակշռում են վերլուծական և փաստաթղթային արդյունքները՝ գործնական ազդեցության և արդյունքների չափելիության ցածր արտահայտվածությամբ: Մշտադիտարկման գործիքները դեռևս ձևավորման փուլում են, իսկ գնահատման արդյունքները չունեն բավարար չափելիություն՝ հիմնավորված բարելավման գործողություններ նախաձեռնելու համար:

ԵԻՊՔ-ում ձևավորված է գործունակ և հստակ կառուցվածքային մոդել ունեցող կառավարում, որը մասնավորապես արժևորվում է իր ուղղահայաց-համագործակցային կապերով, ներքին մասնագիտական ստորաբաժանումների ակտիվ մասնակցությամբ և որոշ գործընթացներում շահակիցների ներգրավմամբ: Կառավարման ներկայիս մոդելը նպաստել է ռազմավարական նպատակների սահմանմանը, պլանավորման և որոշ մեխանիզմների ներդրմանը: Փորձագիտական խումբը արձանագրում է, որ քոլեջում ռազմավարական կառավարման և որակի ապահովման գործընթացների միջև ձևավորված փոխկապակցվածությունը նպաստել է դրանց համադրման ու փոխլրացման միջոցով շարունակական զարգացման խթանմանը:

ԵԻՊՔ-ում ՊԻԳԲ շրջափուլով գործընթացների իրականացման ուղղությամբ առկա են դրական տեղաշարժեր բոլոր փուլերում, սակայն գնահատման և բարելավման փուլերը դեռևս հիմնականում գտնվում են զարգացման փուլում. գնահատումները հաճախ չեն իրականացվում համակարգված ձևով, բավականին արդյունքներ վերլուծվում են բանավոր ձևաչափով, իսկ բարելավման գործողությունները հաճախ չեն հիմնվում չափելի ցուցիչների վրա:

Քոլեջը ցուցաբերում է ռազմավարական կայունություն, սակայն առկա են թերություններ: Այս համատեքստում առաջնահերթություն պետք է դիտարկել մասնակցային և տվյալահենք գնահատման մշակույթի խորացումը, ինչպես նաև ներքին ու արտաքին միջավայրի վերլուծության մեխանիզմների ներդրումը, ինչը կխթանի կառավարման համակարգի առավել ճշգրտված, ներառական և հաշվետու գործունեությունը:

ԵԻՊՔ-ում որակի ներքին ապահովման համակարգը ձևավորված է կառուցվածքային մակարդակում, սահմանված է փաստաթղթային հենք, ստեղծվել է ՈԱԿ և ՈԿՀ, որտեղ ընդգրկված են անձնակազմի տարբեր ներկայացուցիչներ և ուսանողներ: Հստակեցված են գործընթացների կանոնակարգման մեխանիզմները՝ ներառյալ պլանավորումը, մոնիթորինգը և որոշ վերլուծական գործընթացներ: ՈԿՀ-ն կարևոր դերակատարում ունի որակի մշակույթի ձևավորման, ինստիտուցիոնալ բարելավումների գործում: Հարցման և հետադարձ կապի որոշ մեխանիզմներ ներդրված են, իրականացվել են շահակիցների կարիքների բացահայտման, բավարարվածության գնահատման և որոշակի վերլուծությունների գործընթացներ: Այդուհանդերձ, որակի ապահովման գործընթացների ամբողջական մեխանիզմների գործարկումը դեռևս լիարժեք չէ: Հարցաթերթիկների մեթոդաբանությունը, արդյունքների վերլուծությունը և գործողությունների պլանավորումը հաճախ չեն ունենում համակարգված և չափելի արտահայտում: Բացի այդ, բացակայում է որակի ներքին ապահովման համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմը:

Վերոնշյալի արդյունքում փորձագիտական խումբը եզրակացնում է, որ քոլեջում իրականացվող բարելավումները կարևոր են և նպաստում են ռազմավարական կառավարման համակարգի և որակի ապահովման մշակույթի, ինչպես նաև հետազոտահենք կառավարման գործընթացների զարգացմանը, սակայն այս ուղղությամբ նաև դեռևս անելիքներ կան:

ԵԻՊՔ-ի կողմից իրականացվող կրթական ծրագրերը ձևավորված են պետական չափորոշիչներին համահունչ՝ կառուցվածքային և բովանդակային հստակությամբ: Դրանք ներառում են արդիական, աշխատաշուկայում պահանջված տարրեր, ինչպես նաև նորարարական բաղադրիչներ՝ ապահովելով ուսանողակենտրոն մոտեցում և տեխնոլոգիական ուսուցում: Քոլեջը ցուցաբերում է ռազմավարական մոտեցում կրթական առաջարկների ձևավորման գործում՝ ներգրավելով ինչպես դասախոսական կազմը՝ պետական չափորոշիչների վերանայման գործընթացում, այնպես էլ արտաքին շահակիցներին՝ նոր ծրագրերի և բովանդակային բարեփոխումների նախագծման փուլում: Դասավանդման, գնահատման և հետազոտական հմտությունների զարգացման մեթոդները նպաստում են ուսանողի մասնագիտական և սոցիալական լիարժեք կայացմանը: Քոլեջում ձևավորվել են պրակտիկա-գործատու-ուսանող կապի արդյունավետ մոդելներ, իսկ գնահատման բազմաստիճան կառուցվածքը ապահովում է թափանցիկություն: Այնուամենայնիվ, կրթական ծրագրերի կառավարումը դեռևս պահանջում է համակարգված և տվյալահեն բարեփոխումների մոդել, աշխատաշուկայի պահանջների վերլուծության պարբերական գործիքներ, ինչպես նաև բենչմարքինգի հստակեցված մեխանիզմներ՝ մրցունակության բարձրացման համար:

Քոլեջը քայլեր է ձեռնարկել դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների ապահովման, զարգացման և կայունության ուղղությամբ՝ համաձայն ռազմավարական ծրագրով ձևակերպված նպատակների: Դասախոսների ընտրության, ներգրավման, գնահատման ու խրախուսման որոշ գործընթացներ կանոնակարգված են, առկա են տարաբնույթ մեխանիզմներ՝ ինչպես ներքին գնահատման, այնպես էլ մասնագիտական զարգացման աջակցման համար: Քոլեջում դիտարկվում է որոշակի զարգացում նաև վերապատրաստումների ֆինանսավորման, գործատուների ներգրավման, ինչպես նաև երիտասարդ մասնագետների ընդգրկման ուղղությամբ:

Միաժամանակ, դասախոսների գնահատման և որակների վերլուծության գործիքները դեռևս ունեն համակարգայնացման և արդյունքահենության ընդլայնման կարիք: Սկսնակ դասախոսների աջակցման և դասալսումների կարգավորման մասով բացակայում են հստակ սահմանված ընթացակարգեր:

Քոլեջն ապահովել է կրթական գործընթացների կազմակերպման համար հիմնական ենթակառուցվածքային և նյութատեխնիկական ռեսուրսների առկայություն: Քոլեջն ունի

բավարար լսարանային, լաբորատոր և տեղեկատվական ռեսուրսներ, որոնք հիմնականում վերազինվել և արդիականացվել են վերջին տարիներին: Առկա են համակարգչային տեխնիկայով հագեցած լսարաններ, վերանորոգված լաբորատորիաներ, գրադարան և ընթերցասրահ, անվտանգության ապահովման միջոցներ (հակահրդեհային համակարգ, տեսահսկում, տարհանման պլաններ), ինչպես նաև բուժկետ: Քոլեջն օգտագործում է որոշ թվային գործիքներ փաստաթղթաշրջանառության համար՝ մասնավորապես Mulberry և Classroom հարթակներով:

Այնուամենայնիվ, արձանագրվում են նաև մի շարք մարտահրավերներ, մասնավորապես՝ ֆինանսական պլանավորման բացակայությունը, եկամուտների աղբյուրների միատարրությունը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգի բացակայությունը, ռեսուրսներից օգտվողների բավարարվածության ցածր ցուցանիշները:

Վերոնշյալը նկատի ունենալով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԻՊՔ-ն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:

ԵԻՊՔ-ն ձևավորել է համակարգված մոտեցում ուսանողների ներգրավման, կրթական կարիքների բացահայտման և խորհրդատվական ու կարիերային նպաստող ծառայությունների մատուցման ուղղությամբ: Քոլեջն իրականացնում է մասնագիտական կողմնորոշման և դիմորդների ներգրավման նպատակային միջոցառումներ՝ քարոզչական խմբերի միջոցով դպրոցներում, ինչպես նաև «Բաց դռների օրեր» և «Մասնագիտության օր» նախաձեռնությունների շրջանակում: Կրթական գործընթացին զուգահեռ իրականացվում են խորհրդատվական պարապմունքներ, լրացուցիչ դասընթացներ և վարպետաց դասեր, որոնք նպաստում են ուսանողների ակադեմիական առաջընթացին:

Քոլեջում առկա է ՈւԽ, որը գործում է որպես ուսանողության ձայնը ներկայացնող մարմին, ինչպես նաև գործում է կարիերայի կենտրոն՝ աջակցելով ուսանողների զբաղվածությանը, կրթության շարունակականությանը և գործատուների հետ կապի հաստատմանը: Սակայն միաժամանակ արձանագրվում են մի շարք խոցելի կողմեր, ինչպիսիք են ուսանողների հետադարձ կապի ցածր մակարդակը, խորհրդատվական ու աջակցող ծառայությունների գնահատման մեխանիզմների արդյունավետության բացակայությունը և ՈւԽ-ի գործունեության թափանցիկության ու թերի պլանավորվածության խնդիրները:

ԵԻՊՔ-ն 2023-2027 թթ. ՌԾ-ով հետազոտական աշխատանքներն ընդունել է որպես առաջնահերթություն՝ նպատակ ունենալով խթանել ուսանողների և դասախոսների ստեղծագործական և նորարարական ներուժը: Քոլեջում ձևավորվել են համապատասխան քաղաքականություններ և ընթացակարգեր, կարգավորվել են կուրսային և դիպլոմային աշխատանքների կատարման մեխանիզմները, ինչպես նաև մշակվել են մեթոդական ուղեցույցներ ու գնահատման չափանիշներ ըստ մասնագիտությունների: Ուսանողների հետազոտական ակտիվության ապահովման նպատակով կիրառվում են մի շարք մեխանիզմներ՝ ներառյալ պարտադիր կուրսային աշխատանքներ, դիպլոմային նախագծերի թեմաների տարեկան վերանայում, գործատուների հետ համագործակցություն և կիրառական արդյունքների ընդգրկում կրթական գործընթացում:

Բովանդակային առումով հետազոտական աշխատանքները ներառում են տեսական, վերլուծական և կիրառական բաղադրիչներ՝ ընդգծելով ինքնուրույնության և գործնական արդյունքի կարևորությունը: Դիպլոմային աշխատանքները գրախոսվում են նաև գործատուների կողմից՝ ամրապնդելով աշխատաշուկայում դրանց կիրառելիությունը: Սակայն նկատվել է, որ քոլեջում հետազոտական աշխատանքների թեմաների ձևավորման ժամանակ կարիքների գնահատման մեխանիզմներ չեն կիրառվում, բացակայում են

ֆինանսավորման քաղաքականություն և դասախոսների հետազոտական գործունեության խթանման ընթացակարգեր։

Քոլեջը ձևավորել է հաշվետվողականության ներքնից վերև համակարգ, որը տարեկան հաշվետվությունների միջոցով ապահովում է կառուցվածքային միավորների գործունեության թափանցիկությունը։ Տնօրենի հաշվետվությունը հիմնված է ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների վրա և քննարկվում է կառավարման խորհրդում, ինչը վկայում է կառավարման հրապարակային և մասնակցային մոտեցման մասին։ Հասարակության հետ հետադարձ կապն ապահովվում է պաշտոնական կայքէջով, ֆեյսբուքյան հարթակով, ինչպես նաև մշակված քաղաքականության միջոցով։ Քոլեջը կազմակերպում է գիտելիքի փոխանցմանն ու հասարակության հետ համագործակցությանը միտված միջոցառումներ, սակայն կրթական ծառայությունների՝ մասնավորապես կարճաժամկետ վերապատրաստումների ակտիվությունն անկում է ապրել վերջին տարիներին։

Քոլեջը ձեռնարկել է որոշակի համակարգված քայլեր արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ՝ սահմանելով համապատասխան ռազմավարական նպատակներ և ներգրավելով մասնագիտական ստորաբաժանումները համագործակցային գործընթացներում։ Գործատու հաստատությունների հետ կապերի ընդլայնումը, մասնավորապես՝ կիրառական ուղղվածություն ունեցող կրթական ծրագրերի գործնական բաղադրիչի ամրապնդումը, կարևոր ձեռքբերում է։ Այս ամենը վկայում է որոշակի կազմակերպչական պոտենցիալի և գործընկերային հարաբերությունների զարգացման նախադրյալների առկայության մասին։

Այնուամենայնիվ, քոլեջը դեռևս չի ապահովել չափանիշի պահանջներին համարժեք մակարդակի համապատասխանություն։ Գործունեության մեջ առկա են ռազմավարական պլանավորման և իրականացված քայլերի միջև անհամապատասխանություններ։ Քոլեջը ակտիվորեն ներգրավված չէ միջազգային շարժունության ծրագրերում, չի իրականացնում տարածաշրջանային համագործակցություններ, բացակայում են ինստիտուցիոնալ հստակեցված ծրագրեր՝ օտար լեզվի իմացության և անձնակազմի կարողությունների զարգացման ուղղությամբ։ Բացի այդ, օտարալեզու տեղեկատվության սահմանափակ հասանելիությունը խոչընդոտում է միջազգային տեսանելիության և գործընկերային ներուժի ընդլայնմանը, սահմանափակում է քոլեջի ճանաչելիությունը, գործընկերային ներուժը և մրցունակությունը կրթության գլոբալ համակարգում, արտաքին կապերի և միջազգայնացման հետևողական զարգացումը դեռևս չի դիտարկվել ռազմավարական մյուս ուղղությունների զարգացման հնարավոր հիմք։

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է եզրակացնել, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի գործընթացները մշտապես ուղղված են տարբեր ուղղությունների շարունակական զարգացմանը։ Միաժամանակ, հատկապես կարևոր կլինի արտաքին կապերի և միջազգայնացման հետևողական խորացումը՝ այն դիտարկելով ոչ միայն որպես ինքնուրույն ռազմավարական ուղղություն, այլ նաև որպես հիմք՝ հաստատության առաջընթացը խթանող նոր հնարավորությունների և զարգացման հորիզոնների ձևավորման համար։

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Ուսանողների փափուկ հմտությունների զարգացման վրա հատուկ շեշտադրմամբ առաքելությունն ու նպատակները։
2) Ուղղահայաց և համագործակցային, ինստիտուցիոնալ ձևավորված և զարգացող մեխանիզմներով կառավարման համակարգը՝ ամբիոնների ուժեղացված դերակատարությամբ։

3) Ռազմավարական կառավարման ներդրված և զարգացող մեխանիզմները՝ որակի և կառավարկան համակարգերի փոխկապակցված զարգացմամբ։
4) Որակի ներքին ապահովման համակարգում ձևավորված բազմաշերտ կազմը և փաստաթղթային հենքը, անձնակազմի ներգրավվածության և պատասխանատվության ընկալման բարձր մակարդակը։
5) Կրթական ծրագրերի համապատասխանությունն արդիական պահանջներին, նորարարական և տեխնոլոգիական բաղադրիչների առկայությունը, պրակտիկաների բովանդակային ճկուն կառուցվածքը։
6) Դասավանդման մեթոդների բազմազանությունն ու ուսանողակենտրոն մոտեցումը՝ տեսական գիտելիքների, գործնական կարողությունների և վերլուծական-հետազոտական հմտությունների կարևորմամբ, հստակ չափանիշներով գիտելիքների գնահատման համակարգը։
7) Ըստ կրթական ծրագրերի համապատասխան դասախոսական կազմի առկայությունն ու գործատուների ներգրավվածությունը։
8) Ձևավորված բազային նյութատեխնիկական միջավայր կրթական ծրագրերի իրականացման համար։
9) Մասնագիտական կողմնորոշման ակտիվ գործունեությունը, կրթական և խորհրդատվական աջակցությունը։
10) Հստակ փաստաթղթային հենքի, ընթացակարգերի, մեթոդական ուղեցույցների և ձևաթղթերի առկայություն ՝ հետազոտական աշխատանքների իրականացման համար։
11) Հետազոտական աշխատանքների առկայությունը բոլոր կրթական ծրագրերում, գործատուների ներգրավումը հետազոտական աշխատանքների ղեկավարման և գրախոսման գործընթացներում։
12) Դասախոսների կողմից ստեղծված և կրթական գործընթացում կիրառելի մեթոդական գրականության առկայությունը։
13) Ստորաբաժանումների և տնօրենի գործող հաշվետվողական համակարգը՝ վերլուծական որոշ տարրերի առկայությամբ։
14) Գործատու կազմակերպությունների հետ համագործակցությունների ընդլայնում պրակտիկայի կազմակերպման ուղղությամբ։
15) Միջազգայնացման կարևորում՝ ռազմավարական նպատակների և միջազգային կապերի պատասխանատու պաշտոնի ներդրմամբ։

Հաստատության թույլ կողմերն են.

1) ՌԾ մշտադիտարկման արդյունքների վերլուծության մեթոդաբանության թերի լինելը, SWOT վերլուծության հիմքում փաստաթղթային և վերլուծական հենքի բացակայությունը։
2) ՌԾ-ում գործնական արդյունքներով բարելավումների հստակության պակաս, ակնկալվող արդյունքների չափելիության և գործնական արդյունքների վերլուծության թերություններ։
3) Ֆինանսական մուտքերի սահմանափակ աղբյուրներ (դրամաշնորհների, կարճաժամկետ դասընթացների և այլընտրանքային ֆինանսավորման բացակայություն) և ըստ ՌԾ նպատակների ու երկարաժամկետ պլանավորման թերի տեսանելիություն։
4) Ներքին և արտաքին միջավայրերի վերլուծության գործիքակազմի թերզարգացում, գործընթացների հետազոտությունների և վերլուծությունների մեթոդաբանական թերություններ։
5) Կրթական բարեփոխումների՝ տվյալահեն և համաչափ մոտեցման պակաս։
6) Դասալսումների և ուսանողների հարցումների արդյունքների վերլուծության համապարփակության և արդյունքահենության թերություններ, դասավանդման որակի չափման մեթոդաբանական գործիքների թերի համակարգվածություն։

7) Ուխ գործունեության ոչ ամբողջական պլանավորում և հաշվետվողականության բացակայություն։
8) Դասախոսների հետազոտական գործունեության, միջազգային փորձի ուսումնասիրության խթանման և խրախուսման մեխանիզմների բացակայություն։
9) Միջազգային շարժունության բացակայություն՝ «Erasmus+» և այլ շարժունության ծրագրերում, դուալ կարճաժամկետ ծրագրերի ընդհատում։
10) Դասախոսների և վարչական անձնակազմի լեզվական կարողությունների զարգացման հստակ քաղաքականության բացակայություն, օտարալեզու տեղեկատվության բացակայություն կայքում։
11) Միջազգայնացման ուղղությամբ ռազմավարության և գործողությունների միջև անջրպետ, տեսլականի անհստակություն։

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Սահմանել ռազմավարական նպատակներին և ակնկալվող արդյունքների համար՝ ապահովելով իրականացման գործընթացի արդյունավետ վերահսկում,առաջընթացի հստակ և անընդհատ գնահատում։
2. Ապահովել ռազմավարական ծրագրի մշտադիտարկման և գնահատման գործընթաց՝ հենված վերլուծությունների վրա։
3. Ապահովել ռազմավարական կառավարման գործընթացների շարունակական բարելավումը՝ շեշտադրելով տվյալահեն վերլուծությունների կիրառումը և ապացույցների վրա հիմնված որոշումների կայացումը։
4. Խթանել գործառնական կառավարման գործընթացների արդյունավետությունը՝ ներդնելով մասնակցային պլանավորման մեխանիզմներ, կառուցակարգված հետադարձ կապի համակարգ և ստորաբաժանումների միջև գործողությունների համաժամեցման հստակ ձևաչափեր։
5. Ապահովել իրականացված գործողությունների ազդեցության գնահատում և վերլուծություն՝ նպաստելով չիրականացված գործընթացների արդյունավետ վերապլանավորմանը։
6. Մշակել ֆինանսական ռեսուրսների բազմազանեցման ռազմավարություն, ընդլայնել ֆինանսավորման աղբյուրները՝ տեղական և միջազգային համագործակցությունների, ծրագրային դրամաշնորհների և այլընտրանքային ֆինանսական գործիքների միջոցով՝ ապահովելով ռազմավարական պլանների ֆինանսական ապահովման կանխատեսելիությունը։
7. Ամրապնդել ներքին և արտաքին միջավայրի վերլուծության գործիքակազմը՝ պլանավորման ճշգրտության և ռազմավարական ճկունության բարձրացման նպատակով։
8. Խթանել շահակիցների ներգրավվածությունը՝ նիստերի և որոշումների արդյունքների համակարգված տարածմամբ, մոտիվացիոն մեխանիզմների զարգացման միջոցով՝ խնդիրների բարձրաձայնման և առաջարկությունների ներկայացման համար։
9. Կիրառել ՊԻԳԲ շրջափուլի մեթոդը բոլոր գործընթացներում՝ ներառելով նաև փաստաթղթերի վերանայման և մշտադիտարկման համակարգ, որակի շարունակական բարելավման ապահովման համար։
10. Գործածել հետազոտությունների մեխանիզմների (հարցաթերթիկներ, ֆոկուս խմբային հանդիպումներ և այլն) մշակման և բարելավման հստակ մեթոդաբանություն՝ ապահովելով դրանց արդյունավետ և նպատակային գործածում և շարունակական բարելավում և կարևորելով տվյալների հավաքագրումը ևս։

11. Ձևավորել որակի ապահովման գործընթացների և համակարգի գնահատման մեխանիզմներ և ապահովել շարունակական բարելավում՝ հիմնված վերլուծությունների (այդ թվում՝ բերչմարքինգ) վրա:
12. Խթանել շահակիցների ակտիվ ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում՝ ընդլայնելով ներգրավվածության շրջանակը:

Որակավորումների արժանահավատ շնորհում

13. Մշակել և ներդնել բենչմարքինգի քաղաքականություն և մեխանիզմներ՝ ներառելով տեղական և միջազգային համադրելի հաստատությունների ծրագրերի վերլուծությունը:
14. Ապահովել կրթական ծրագրերի ներդրման և բարելավման մշակված ինստիտուցիոնալ մեխանիզմների գործածումը՝ հենված բազմակողմանի տվյալների և համակողմանի վերլուծությունների (այդ թվում՝ համեմատական վերլուծության) վրա:
15. Ապահովել դասախոսական կազմի կարիքների վերհանման գործընթաց և այդ մեխանիզմների բարելավման գործընթաց, իրականացնել դասախոսների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ՝ ըստ կարիքների:
16. Մշակել և ներդնել դասալսումների ընթացակարգ և սկսնակ դասախոսների մենթորության քաղաքականություն և այլ անհրաժեշտ մեխանիզմներ՝ դասավանդման որակի շարունակական բարելավման արդյունավետ գործընթացին միտված:
17. Մշակել և ներդնել դասախոսների խրախուսման և մասնագիտական առաջընթացի միասնական քաղաքականություն՝ ուղղված դասախոսների մոտիվացմանը, ներառելով՝ հրապարակային գնահատում, ֆինանսական խրախուսում, մասնագիտական առաջխաղացման հնարավորություններ և ներգրավում միջազգային ծրագրերում:
18. Իրականացնել ռեսուրսների արդյունավետության և կրթական ծրագրերի ինքնաածախսաածածկման վերլուծություն՝ ապահովելով ռեսուրսների տվյալահենք պլանավորում և բաշխում:
19. Ներդնել միասնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ՝ գործընթացների թափանցիկության և արդյունավետության բարձրացման համար:

Երկարաժամկետ զարգացում

20. ՈւԽ-ի գործունեության համար մշակել և ներդնել պլանավորման և հաշվետվողականության հստակ մեխանիզմներ՝ ապահովելով կառույցի գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը:
21. Ներդնել կրթական, խորհրդատվական և օժանդակ ծառայությունների որակի գնահատման, արդյունքների հրապարակման և հետադարձ կապի մեխանիզմներ՝ բարձրացնելու ուսանողների իրազեկվածությունը:
22. Ներդնել հետազոտական գործունեության ֆինանսավորման, կարիքների գնահատման հենքով հետազոտական աշխատանքների կիրառելիության ապահովման քաղաքականություն:
23. Մշակել և ներդնել դասախոսական կազմի հետազոտական գործունեությունը և միջազգային փորձի ուսումնասիրումը խթանող և խրախուսող քաղաքականություն և ընթացակարգ:
24. Ամրապնդել հասարակության հետ հետադարձ կապը և զարգացնել հաղորդակցության բազմաբնույթ հարթակներ:
25. Դուալ կրթության վերագործարկման նախաձեռնություն ցուցաբերել, ուսումնասիրել ծրագրերի ընդհատման պատճառները, զարգացնել նոր գործընկերություններ՝ հատկապես գործատուների հետ, կիրառել միջազգային լավագույն փորձը և ներառել դրանք նոր մոդելների մշակման մեջ:

26. Արտաքին կապերի և միջազգայնացման հետևողական զարգացումը դիտարկելով որպես հաստատության ռազմավարական ուղղություններով առաջընթացի ապահովման հիմք՝ մշակել և ներդնել այս ուղղությամբ հստակ զարգացման ծրագիր (ազգային և միջազգային շարժունության և այլ դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը դիտարկել որպես առաջնահերթություն):
27. Հստակեցնել «Միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման քաղաքականությունը»՝ այն կապելով կոնկրետ, չափելի գործողությունների ծրագրի հետ, ներառել միջազգային համագործակցության ընդլայնման, շարժունության ծրագրերում ներգրավման, նոր միջազգային գործընկերների որոնման և առկա կապերի ակտիվացման ուղենիշներ, ինչպես նաև ռեսուրսների պլանավորում, գործընկերների գնահատման մեխանիզմներ և կատարողականի մոնիթորինգ:
28. Ձեռնարկել դասախոսների և վարչական աշխատակիցների կարողությունների զարգացմանն ուղղված գործընթացներ՝ հատկապես օտար լեզվի տիրապետման, միջազգային ծրագրերի կառավարման և միջմշակութային հաղորդակցման ուղղությամբ՝ ուղղված միջազգայնացման ռազմավարական գործողությունների արդյունավետ իրականացմանը:
29. Ապահովել կայքի կառուցվածքի բազմալեզու գործունակություն՝ ուղղված միջազգային տեսանելիության բարձրացմանը:
30. Զարգացնել տարածաշրջանային քոլեջների հետ կապերը՝ դիտարկելով տարածաշրջանային մակարդակում փորձի փոխանակման և համատեղ նախագծերի իրականացման հնարավորությունները:

_____

Փորձագիտական խմբի ղեկավար

Արմենուհի Սարգսյան
Հուլիսի 11, 2025թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[2] կողմից.

1. **Արմենուհի Սարգսյան՝** Շիրակի պետական համալսարանի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Արաքս Աղաջանյան՝** Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջի կրթության որակի պատասխանատու, ֆիզիկայի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
3. **Գայանե Համբարձումյան՝** Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, փորձագիտական խմբի անդամ,
4. **Մարիա Կիրակոսյան՝** Հայաստանի Եվրոպական համալսարանի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈՒԱԱԿ, տնօրենի օգնական **Լիանա Ալավերդյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈՒԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի և ՈՒԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈՒԱԱԿ–ը 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒՀ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[3]:

Նախնական այց

19.04.2025թ.-ին հանդիպում է տեղի ունեցել Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈՒԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2025թ.ապրիլի 16-18-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ռեսուրսերի դիտարկում[4], փաստաթղթերի[5] դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈՒԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 11.07.2025թ.-ին:



_____

Համակարգող
Լիանա Ալավերդյան

Հուլիսի 11, 2025թ.

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
[5] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ԵԻՊՔ կամ Քոլեջ) առաքելությունը ձևակերպված է 2023-2027 թվականների քոլեջի Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ)։ Քոլեջի առաքելությունն է՝ «Գիտելիքի որոնումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ բարձրորակ մասնագետների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում»: Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱԾ-ի 5-րդ մակարդակին համապատասխան։ ՌԾ-ում ձևակերպված են քոլեջի առաքելությունն ու տեսլականը, հիմնարար նպատակներն ու դրանց իրականացման ռազմավարական ուղենիշները, ինչպես նաև հիմնական խնդիրները, որոնք կառուցված են ինստիտուցիոնալ հավատարմագրման տասը չափանիշներին համապատասխան։

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջի կարևոր ընդգծված առանձնահատկությունն է ուսանողների փափուկ հմտությունների զարգացումը։ Այս շեշտադրումն առկա է ՌԾ-ում, բացի այդ ընդգծված է կրթական գործընթացում։

Քոլեջի ռազմավարության մեջ որպես առաջնահերթություն ընդգծվել է ոլորտում գերազանցության կենտրոնի վերածվելը։ Քոլեջի հիմնական նպատակները ներառում են՝ բարձրորակ կրթության ապահովումը, մասնագիտական բարձր որակավորում ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ներգրավումը՝ մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով, ինչպես նաև հետազոտական և նորարարական գործունեության խթանումը ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների շրջանում, ուսումնական բարենպաստ միջավայրի ապահովումը, ինչպես նաև արտաքին կապերի համակողմանի զարգացումը, փորձի փոխանակման ծրագրերի իրականացումը՝ քոլեջի միջազգայնացմանը միտված։ ՌԾ նպատակների իրականացման համար կազմված է համապատասխան պլան-ժամանակացույց:

Առկա են նպատակներ, որոնց ուղղությամբ քոլեջն իրականացրել է համապատասխան քայլեր։ Մասնավորապես՝ պարբերաբար վերանայվել և բարելավվել են մասնագիտական կրթական ծրագրերը, ստեղծվել է գործատուների և շրջանավարտների միություն, բարելավվել է նյութատեխնիկական բազան։ Ըստ նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցի՝ քոլեջում արձանագրվել է կրթական ծրագրերի որակի բարելավման գործընթացում արտաքին շահակիցների ներգրավվածության պակաս։ Փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի արդյունքում պարզվել է, որ կրթական ծրագրերի որակի բարելավման նպատակով քոլեջը կնքել է համագործակցության հուշագրեր, ինչպես նաև կատարել է հետադարձ կապի մեխանիզմների և ընթացակարգերի բարելավում։

Ըստ «Քոլեջի ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման քաղաքականություն» փաստաթղթի քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները և դասախոսական կազմը, իսկ արտաքին շահակիցներն են դիմորդները, շրջանավարտները և գործատուները։

2023-2027 թթ. ՌԾ-ն մշակելու նպատակով քոլեջում ստեղծվել է աշխատանքային խումբ, որն իրականացրել է SWOT վերլուծություն, առանձնացրել հիմնական խնդիրներն ու հարցերը, ինչպես նաև որոշ քոլեջների ռազմավարական ծրագրերի ուսումնասիրություն, ընդ որում ուսումնասիրությունները վերլուծական փաստաթղթային հենք չունեն: Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է, որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունը և սահմանված նպատակները:

Փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի արդյունքներով պարզվել է, որ կառուցվածքային ստորաբաժանումները ՌԾ-ի ձևաչափով իրականացնում են տարեկան գործողությունների պլանավորում և տարեվերջյան հաշվետվություններ: Քոլեջի հաշվետվությունները հիմնականում կապակցվում են ՌԾ-ով սահմանված նպատակների հետ:

Քոլեջում մշակվել և ներդրվել է ՌԾ-ի մշտադիտարկման ձևաթուղթ, որի նպատակն է վերահսկել ծրագրով սահմանված պլան-ժամանակացույցի կատարման ընթացիկ վիճակը և անհրաժեշտության դեպքում իրականացնել որակի ապահովման մեխանիզմների բարելավում: Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է, որ քոլեջը մշտադիտարկման ձևաթուղթը կիրառել է 2024 թ.-ին՝ ՌԾ-ի արդյունավետության գնահատման նպատակով: Միաժամանակ, արձանագրվել է, որ մշտադիտարկման գործընթացում իրականացված արդյունքները հիմնականում վերլուծվել են բանավոր ձևաչափով, իսկ կատարված գործողությունները չեն հիմնավորվել հստակ չափորոշիչներով և ցուցիչներով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը որդեգրել է հստակ և ազգային արժեքների վրա հիմնված առաքելություն, որը լիարժեք արտացոլված է նրա ՌԾ-ում: Այդուհանդերձ, կրթական միջավայրի, աշխատաշուկայի պահանջների և տեխնոլոգիական զարգացումների դինամիկայից ելնելով փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է պարբերաբար ուսումնասիրել՝ գնահատելու առաքելության և տեսլականի արդիականությունն ու համապատասխանությունը աշխատաշուկայի և միջազգային զարգացման միտումներին: Ինչպես նաև կարևոր է առաքելությամբ արտահայտել քոլեջում իրականացվող մասնագիտությունների առանձնահատկությունները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը կարևորում է փափուկ հմտությունների զարգացումը՝ ներառելով այն թե՝ ՌԾ-ում, թե՝ կրթական գործընթացում, ինչը համահունչ է ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը ռազմավարական առաջնահերթություն է սահմանել գերազանցության կենտրոն դառնալը, այնուհանդերձ գերազանցության կենտրոն դառնալու ռազմավարական նպատակին հասնելու համար դեռ պահանջվում է համակարգված և նպատակային աշխատանք:

Դրական է, որ քոլեջը մշակել է ՌԾ-ից բխող պլան-ժամանակացույց, ինչը որոշակի հիմքեր է ստեղծում ռազմավարական պլանավորման գործընթացների իրականացման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում ռազմավարական նպատակների իրագործման ուղղությամբ ձեռնարկված և կատարված քայլերը: Դրական է նաև այն, որ քոլեջն արձագանքելով նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցի խորհրդատվություններին՝ ձեռնարկել է արտաքին շահակիցների ներգրավման մեխանիզմների բարելավում, ինչը խթանում է համագործակցության արդյունավետությունը և կայուն կապերի ձևավորումը՝ կրթական ծրագրերի շարունակական զարգացման և բարելավման ապահովման նպատակով: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ այս գործընթացները պետք է ունենան համակարգային և վերլուծական փաստաթղթային հիմք երկարաժամկետ արդյունավետություն ապահովելու նպատակով: Աշխատանքային խմբի ստեղծումն ու SWOT վերլուծությունների իրականացումը ցույց են տալիս նախաձեռնողականություն ՌԾ մշակման հիմքում որոշակի վերլուծություն ունենալու հարցում, այնուամենայնիվ խումբը կարևորում է, որ նման վերլուծությունները պետք է լինեն խորքային, հիմնված փաստերի վրա և իրականացվեն

մասնագիտական դիտարկումների հիման վրա՝ ռազմավարական որոշումների կայացումը դարձնելով առավել հիմնավորված։

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը մշակել և կիրառել է ՌԾ-ի մշտադիտարկման ձևաթուղթ, սակայն նշում է, որ արդյունքների վերլուծության առավելապես բանավոր ձևաչափով իրականացումը կարող է սահմանափակել արդյունքների համակողմանիությունն ու հիմնավորվածությունը։ Փորձագիտական խումբը գտնում է, որ փաստաթղթային հիմքերի ամրապնդումը և մշտադիտարկման արդյունքների քանակական վերլուծությունները կապահովեն հիմնավորված և տվյալահեն որոշումների կայացմանը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի ձևակերպված առաքելություն, կարևորում է փափուկ հմտությունները, ունի ՌԾ պլան-ժամանակացույց, ՌԾ նպատակների ուղղությամբ ձեռնարկում է քայլեր, ստորաբաժանումների տարեկան պլաններն ու հաշվետվությունները որոշակի չափով փոխկապակցված են ՌԾ նպատակների հետ, ներդրել է ՌԾ-ի մշտադիտարկման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 1-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵԻՊՔ-ի համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

«Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ընթացիկ կառավարումն իրականացվում է տնօրենի, Կառավարման, Մանկավարժական խորհուրդների կողմից։ Նաև առկա է տնօրենական խորհուրդ, որը խորհրդակցական մարմին է։

Քոլեջն ունի հետևյալ կառուցվածքային միավորներն ու պաշտոնները՝ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, վարչատնտեսական աշխատանքների գծով փոխտնօրեն, երկու ուսումնական մաս, Որակի ներքին ապահովման կենտրոն, Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոն, Պրակտիկայի բաժին, հինգ ամբիոն և այլ ստորաբաժանումներ։ Վերջին ուսումնական տարում ներդրվել է Միջազգային կապերի պատասխանատուի հաստիք՝ պայմանավորված այս ուղղությամբ ռազմավարական նպատակներով և ինստիտուցիոնալ հավատարմագրման նախորդ գործընթացում բացահայտված խնդիրներով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի հաստիքային աշխատողները հիմնականում իրականացնում են իրենց սահմանված գործառույթները՝ առանց հավելյալ դերերի միաժամանակյա կատարողականի։ Սակայն առկա են որոշ առանձին դեպքեր, երբ նույն անձը համատեղ վարում է մի քանի պատասխանատվություն։ Օրինակ՝ Պրակտիկայի բաժնի ղեկավարը միաժամանակ հանդիսանում է ամբիոնի վարիչ և Որակի կառավարման հանձնաժողովի (այսուհետ՝ ՈԿՀ) նախագահ, իսկ փոխտնօրենը՝ նաև գնումների պատասխանատու։ Փորձագիտական այցից պարզվեց, որ նման համատեղված գործառույթները չեն հանգեցրել գործընթացների թերի կատարման, իսկ նման պատասխանատվությունների վստահումը քոլեջը պայմանավորեցնում է համապատասխան փորձառությամբ, ներուժով և աշխատանքին նվիրումով։

ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև առկա ուղղահայաց կապերը։ Փորձագիտական այցից պարզվեց, որ ստորաբաժանումների միջև գործում են նաև համագործակցային կապեր։ Քոլեջում գործող խորհուրդների,

ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում են Քոլեջի կանոնադրությամբ, պաշտոնների անձնագրերով, ստորաբաժանումների կանոնակարգերով:

Դասախոսները ներգրավված են կառավարման, մանկավարժական և տնօրենական խորհուրդներում, ուսանողները՝ կառավարման խորհրդում: Մանկավարժական խորհուրդը հաճախ է նիստեր անցկացնում, ինչպես նաև կազմակերպվում են ընդլայնված նիստեր՝ տնօրենի նախագահությամբ: Կառավարման խորհրդի ուսանող անդամներն ընտրվում են դասախոսների առաջարկությամբ՝ հիմք ընդունելով ուսանողների առաջադիմությունը և վարքը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառավարման խորհրդում ներգրավված ուսանողները և դասախոսները սահմանափակ նախաձեռնողականություն են ցուցաբերում կարիքների վերհանման գործում: Տեսանելի չեն նիստերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման կամ մյուս շահակիցների իրազեկման մեխանիզմները:

Փորձագիտական դիտարկումները ցույց տվեցին, որ կառավարման խորհուրդը սահմանափակ նախաձեռնողականություն է ցուցաբերում: Այնուամենայնիվ, քոլեջում ձևավորվել է կառավարման միջավայր, որտեղ ստորաբաժանումներն ընկալվում են որպես արդյունավետ կառավարման ուժեղ օղակներ: Մասնավորապես՝ կարևոր դերակատարություն են ստանձնել ամբիոնները: Փորձագիտական այցից պարզվեց, որ այս օղակների միջոցով ապահովվում է դասավանդողների մասնակցայնությունը իրենց վերաբերող հարցերին:

Քոլեջը ունեցել է 2017–2022 թթ. ՌԾ, որի ավարտից հետո մշակվել և ներդրվել է 2023–2027 թթ. ՌԾ: Նոր ՌԾ-ում ներառված ռազմավարական ուղղությունները մեծամասամբ համընկնում են նախորդ ծրագրի ուղղությունների հետ: ՌԾ մշակման նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ և իրականացվել է SWOT վերլուծություն:

2023-2027 թթ.-ի ՌԾ-ն կազմված է ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշների հիման վրա՝ ներառելով համապատասխան նպատակներ և խնդիրներ: Վերջիններս փոխկապակցված են ինստիտուցիոնալ հավատարմագրման նախորդ գործընթացում վեր հանված խնդիրների և փորձագիտական խորհրդատվությունների հետ:

ՌԾ իրականացման համար մշակվել է պլան-ժամանակացույց, որում յուրաքանչյուր խնդրի համար սահմանվել են գործողություններ, քայլեր, ժամկետներ, պատասխանատու անձինք, ֆինանսական աղբյուրներ և ակնկալվող արդյունքների ցուցիչներ: Սահմանված քայլերը հիմնականում վերաբերում են փաստաթղթերի և մեխանիզմների մշակմանը, ուսումնասիրությունների, գնահատման և վերլուծության իրականացմանը: Դրանց մեծ մասի համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն, իսկ որոշ դեպքերում նշվում է՝ «ըստ բյուջեի»: Որպես ակնկալվող արդյունքի ցուցիչ հիմնականում նշվում են մեխանիզմներ, վերլուծություններ, գնահատման արդյունքներ, հաշվետվություններ: Միաժամանակ, արձանագրվել է որոշ անհամապատասխանություն գործողությունների բնույթի և ակնկալվող արդյունքների միջև: Օրինակ՝ «Հասարակությանը լրացուցիչ կրթական ծառայությունների իրականացման գործընթացի մշտադիտարկում և բարելավում» քայլի դեպքում որպես արդյունք նշվում են միայն մշտադիտարկման արդյունքները: Նկատվում են նաև ոչ հստակ չափելի արդյունքներ, օրինակ՝ գրքերի քանակ, վերազինված լսարաններ և լաբորատորիաներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսական համապատասխան պլանավորում դեռևս չի իրականացվել՝ գնահատելու համար, թե ինչպիսի ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ ՌԾ նպատակների իրականացման համար: Քոլեջը ֆինանսական երկարաժամկետ պլանավորումն անհնար է համարում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ֆինանսական մուտքերը գոյանում են ուսանողների թվով պայմանավորված:

Ֆինանսների բաշխումը քոլեջն իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա: Ըստ 2024 թ.-ի ֆինանսական հաշվետվության՝ մուտքերի շուրջ 63 %-ը պետբյուջեից է, իսկ շուրջ 37 %-ը՝ ուսման

վարձավճարներից: Ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատակիցների աշխատավարձերը (շուրջ 85 %), կրթաթոշակներ (շուրջ 5 %), ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսեր (շուրջ 7 %) և այլն:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին ֆինանսական եկամուտներն ու ծախսերը հիմնականում նույնն են:

2021 թ.-ին քոլեջը հաստատել է «ԵԻՊՔ ֆինանսական միջոցների կառավարման քաղաքականություն», ինչը ենթադրում է ֆինանսական պլանավորումների փոխկապակցում ռազմավարական ուղղությունների հետ՝ քոլեջի ֆինանսատնտեսական վիճակի վերլուծմամբ:

Քոլեջի գործունեությունը հիմնված է ռազմավարական (երկարաժամկետ) և ընթացիկ տարեկան (կարճաժամկետ) պլանավորման վրա: Աշխատանքային պլանները կազմվում են նոր հաստատված ձևաչափով, որտեղ տնօրենի պլանը ներառում է ՌԾ նպատակներին համարժեք խնդիրներ, քայլեր, պատասխանատուներ, ժամկետներ, ֆինանսական միջոցներ և ակնկալվող արդյունքներ: Հաճախ քայլերի իրականացման համար ֆինանսական միջոցներ անհրաժեշտ չեն, սակայն որոշ դեպքերում դրանք նախատեսված են: Արդյունքները հաճախ ներկայացվում են փաստաթղթային ձևով կամ բացակայում են:

Տարեկան պլաններում հաճախ հանդիպում են կրկնվող գործողություններ ըստ տարբեր տարիների, օրինակ՝ կազմակերպական կառուցվածքի գնահատում, շարժունության խթանման խնդիրների վերհանում և ՄԿԾ-ների վերանայում: Բացի այդ, ընդգրկված են տարբեր քաղաքականությունների և փաստաթղթերի մշտադիտարկման գործողություններ:

Փոխտնօրենների և ՈԱԿ-ի պլանները տրամաբանորեն բխում են տնօրենի պլանից, մասնավորապես՝ ՄԿԾ-ների և մարդկային ռեսուրսների գնահատման մեխանիզմների մշակման ու ներդրման ուղղությամբ: Ուսումնական մասի, պրակտիկայի բաժնի և կարիերայի կենտրոնի պլանները հիմնականում կազմված են ըստ իրենց գործառույթների: Այնուամենայնիվ, վերջիններս ներառում են նաև ՌԾ-ից և հավատարմագրման բարելավման պլանից բխող գործողություններ, որոնք, սակայն, հաճախ կրկնվում են և ձևաչափից դուրս են ներկայացվում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջում կառավարումն իրականացվում է վերևից ներքև ուղղահայաց կառավարմամբ, իսկ հաշվետվողականությունը՝ ներքևից վերև: Ստորաբաժանումների միջև գործառնական կապերը զարգացած են: Աշխատանքային պլաններում առկա են գործողություններ, որոնք ներկայացված են որպես տարբեր ստորաբաժանումների համատեղ աշխատանք:

ՄՈՒՀ-ը վերահսկում է ստորաբաժանումների աշխատանքները՝ ուսումնասիրելով հաշվետվությունները, որոնք կազմվում են ըստ քոլեջի կազմակերպական կառուցվածքի ներկայացված երնթակայության: Ամբիոնների և Պրակտիկայի բաժնի հաշվետվություններում ներկայացված են ինչպես պլանով նախատեսված, այնպես էլ ՌԾ-ով պայմանավորված գործընթացներ: Ներկայացված են իրականացված աշխատանքների նկարագրություն, տվյալներ, բարելավումներ՝ դասալսումների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի, գործատուների առաջարկությունների հիման վրա: Ներառված է նաև համեմատական վերլուծություն նախորդ տարվա հետ, ինչպես նաև չիրականացված աշխատանքներն ու առաջարկությունները: Գոյություն ունեն կրկնվող գործընթացներ և բարելավման առաջարկություններ, օրինակ՝ թեստային հարցաշարերի ընդլայնում ուսանողների տեսական գիտելիքների պատշաճ գնահատման նպատակով:

Կարիերայի բաժնի, Գրադարանի և Ուսումնական մասի հաշվետվություններում նկարագրվում են կազմակերպված միջոցառումները: ՈԱԿ-ի հաշվետվությունն ընդգրկում է գործողությունների նկարագիր՝ կրկնվող վերլուծություններով: Տնօրենի և փոխտնօրենի հաշվետվություններում ներկայացված են իրականացված գործողությունները ըստ ՌԾ 10 չափանիշների, սակայն որոշ գործողություններ կրկնվում են և ունեն ընդհանուր բնույթ՝ առանց տեսանելի արդյունքների:

Հաշվետվություններից և փորձագիտական այցից պարզ է, որ կան կարևոր ձեռքբերումներ՝ փաստաթղթային հենքի, կրթական ծրագրերի, գնահատման համակարգի և գործատու-համագործակցությունների ոլորտներում: Սակայն առկա են նաև չլուծված հարցեր՝ կապված լրացուցիչ կրթական ծառայությունների, միջազգային համագործակցության և այլ ուղղությունների հետ: Քոլեջը կարևոր ցուցիչ է համարում շրջանավարտների ըստ մասնագիտության զբաղվածության մակարդակը, որը կազմում է շուրջ 30–35%:

Քոլեջը մշակել և ներդրել է ՌԾ մշտադիտարկման ձևաթուղթ, որի հիման վրա 2024 թ.-ին իրականացվել է գնահատում: Արձանագրվել է, թե տվյալ քայլը իրականացվել է, թերի կամ առհասարակ չի իրականացվել, ներկայացված են համապատասխան արդյունքի ցուցանիշներ՝ փաստաթղթեր, բանավոր վերլուծություններ, տվյալների բազաներ և այլն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գնահատումը կատարվել է պատասխանատուների հետ քննարկումների և որոշ ուսումնասիրությունների հիման վրա, սակայն բացակայում են հստակ հիմնավորումներ և վերլուծություններ: Քոլեջը նախատեսում է կատարելագործել այս գործընթացը:

Քոլեջն ունի ներքին և արտաքին միջավայրի վերլուծության ընթացակարգ, որը հաստատվել է 2021 թ.-ին ՈԿՀ նիստում: Սակայն այն հիմնականում անդրադառնում է ընդհանուր մոտեցումներին և չի ներառում ընթացակարգային հստակ դրույթներ:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ քոլեջն իրականացնում է քննարկումներ գործատուների հետ, հարցումներ շրջանավարտների շրջանում: Քոլեջը հարցումներ է իրականացնում ուսանողների և դասախոսների շրջանում: Այս ուսումնասիրությունները և ՌԾ մշակման համար կատարված SWOT վերլուծությունը ու ինստիտուցիոնալ հավատարմագրման համար իրականացված ինքնավերլուծությունները քոլեջի կողմից դիտվում են որպես քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրության միջոց: Փորձագիտական այցից պարզվեց, որ գործատուների հետ կապը ազդեցություն է ունեցել կրթական ծրագրերի բարելավման գործընթացի վրա, իսկ հարցումների արդյունքները հատկանշական կիրառելիություն չեն գտել: Հարկ է նշել, որ նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամանակ արտաքին գնահատումները և ՈԿՀ ուսումնասիրությունները նպաստել են բացահայտելու, կառավարման գործընթացներում փաստաթղթային հենքի խնդիրները և այս ուղղությամբ քայլեր ձեռնարկել, մշակել ու ներդնել մի շարք մեխանիզմներ, իրականացնել պլանավորման և հաշվետվողականության բարեփոխումներ:

Քոլեջը փորձ է կատարել բոլոր գործընթացներում ներդնել ՊԻԳԲ սկզբունքները, այս հանգամանքը կարևորել է նաև ՌԾ-ով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում առկա հիմնական գործընթացները գտնվում են տարբեր փուլերում: Մասնավորապես մի շարք փաստաթղթեր, մեխանիզմներ մշակվել և ներդրվել են, դեռևս չեն գնահատվել, որոշ փաստաթղթեր մշակվել են, սակայն դեռևս չեն ներդրվել: Կրթական ծրագրերը իրականացվել են ՊԻԳԲ շրջափուլի բոլոր փուլերով, սակայն գնահատման գործընթացը հենված է որոշ առանձին ազդակների վրա, ոչ թե համընդհանուր վերլուծությունների: ՌԾ-ն պլանավորվել է, իրականացվում է և մասնակի գնահատման է ենթարկվել: Հարցումների հարցաթերթիկները ներդրվել են, սակայն դրանց գնահատում չի իրականացվել: Ուսանողների գնահատման մեխանիզմները ՊԻԳԲ շրջափուլն անցել են:

Քոլեջը չունի տեղեկատվության հավաքագրման վերլուծությունը և հավաքագրումը գնահատող մեխանիզմների արդյունավետությունը գնահատող գործիքակազմ: Սակայն տեղեակատվության հավաքագրման մեխանիզմները փոփոխություններ են կրել: Մասնավորաբար ներդրել են «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակում, հաստատում, պարբերաբար վերանայում» փաստաթուղթը, հաշվետվությունների ձևաչափեր են ներդրվել, որ

տվյալներ են պարունակում, հարցումներ են ներդրվել, ֆոկուս-խմբային քննարկումներ են իրականացվում, ՌԾ մշտադիտարկման ձևաթուղթ է գործածվում և այլն:

Քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, կայքէջ, որտեղ լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները: Միաժամանակ կայքէջում առկա են 2022-2023 ուստարվա հարցումների վերլուծությունների հրապարակումներ, նորմատիվ իրավական ակտեր, սակայն մասնավորապես քոլեջի ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում չի իրականացվում, կառավարման որոշումների թափանցիկությունը արտաքին շահակիցների համար դեռևս լիարժեք ապահովված չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում ձևավորված է և գործում է կառավարման հստակ կառուցվածքավորված մոդել՝ ուղղահայաց և համագործակցային կապերով և բազմաշերտ մասնակցությամբ: Այսպիսի մոդելը թույլ է տվել ապահովել տարբեր մակարդակների համադրված աշխատանքը, ինչը նպաստել է ռազմավարական կառավարման մեխանիզմների ներդրմանը: Այս մոդելը նվազեցրել է ռազմավարական երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի իրականացման ընթացքում առաջացող խոչընդոտները՝ ապահովելով փոխկապակցվածություն և նպատակային ուղղվածություն: Միաժամանակ ստորաբաժանումների միջև գոյություն ունեցող կայուն և նպատակային կապերը խթանել են կազմակերպության ներսում հաղորդակցման որակի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում մանկավարժական խորհրդի կանոնավոր նիստերի անցկացման պրակտիկան, որը վկայում է կրթական գործընթացի կառավարման կարգապահության և հետևողականության մասին, ինչը նպաստում է կրթական որակի նկատմամբ հետևողական մոտեցմանը:

Խումբը նշում է, որ ստորաբաժանումների և աշխատակիցների դերերի ու լիազորությունների հստակ սահմանումը և դրանց փաստաթղթային ապահովումը նպաստում են գործառնական գործընթացներում գործառույթների կրկնությունների նվազեցմանը և պատասխանատվության հստակ բաշխմանը: Դրական է նաև այն հանգամանքը, որ համատեղված գործառույթների առկայության դեպքում պատասխանատվությունների իրականացումն ընթանում է համապատասխան փորձառությամբ և նվիրումով՝ առանց որակական թերությունների:

Դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը կառավարման տարբեր խորհուրդներում բարելավել է ներառականության սկզբունքը՝ ապահովելով շահակիցների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում: Այնուամենայնիվ, ուսանողների և դասախոսների սահմանափակ նախաձեռնողականությունը կարիքների վերհանման և հիմնախնդիրների քննարկման գործում սահմանափակում է կառավարման համակողմանիությունն ու արձագանքման ճկունությունը: Նիստերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման բացակայությունը կարող է խոչընդոտել թափանցիկության, պատասխանատվության և լայն ներգրավման սկզբունքների իրագործմանը: Կառավարման խորհուրդներում ներգրավվող ուսանողների ընտրման չափանիշների՝ դասախոսների սուբյեկտիվ կարծիքների վրա հիմնվելը կարող է սահմանափակել ներկայացվածության բազմակողմանիությունը: Դա կարող է բխել ոչ թե ուսանողական համայնքի լայն վստահությունից, այլ միայն ակադեմիական առաջադիմության և կարգապահ վարքի հիման վրա ընտրված խմբի կարծիքներից:

Դրական է, որ ստորաբաժանումների դերակատարությունը քոլեջում բարձր է գնահատվում, հատկապես ամբիոնները վերածվել են կառավարման ուժեղ օղակների: Սա նշանակում է, որ որոշակի հարցերում նախաձեռնողականությունը կենտրոնացած է մասնագիտական ստորաբաժանումներում, որոնք կարողանում են ապահովել գործունեության

համադրվածություն և մասնագիտական վերահսկողություն, ինչը կարևոր է մասնագիտական կրթության որակի պահպանման համար:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ նոր ՌԾ-ն (2023-2027 թթ.) ուղղահայաց համընկնում ունի նախորդի (2017-2022 թթ.) հետ, քանի որ սա վկայում է հաստատության ռազմավարական ուղղությունների կայունության և երկարաժամկետ նպատակային մտածողության մասին: Միաժամանակ կարևոր է, որ ՌԾ ձևավորումը որոշակի վերլուծության հիմք ունի, թե՛ SWOT վերլուծության, թե՛ նախորդ փորձագիտական գնահատումների տեսքով, սա վկայում է շարունակական բարելավման սկզբունքի կիրարկման մասին: Իսկ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների հետ ներդաշնակեցումը կարևոր է ազգային պահանջներին համապատասխանության և որակի կառավարման տեսանկյունից: Փորձագիտական խումբը նաև դրական է համարում ՌԾ պլան-ժամանակացույցի ներդրումը և մշտադիտարկման ուղղությամբ քայլերի ձեռնարկումը, սա կարևոր քայլ է ռազմավարական կառավարման համակարգի կայացման համար:

Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է ռազմավարական կառավարման ուղղությամբ գործընթացների բարելավումը՝ անդրադառնալով համապատասխան խնդիրներին: ՌԾ-ի մեջ գերակշռում են փաստաթղթերի մշակումն ու վերլուծությունները՝ առանց գործնական կամ նյութական բարելավման հստակ նշման: Ակնկալվող արդյունքների չափելիության պակասը դժվարացնում է արդյունքների գնահատումը իրական ազդեցության տեսանկյունից և կարող է նպաստել ձևական իրականացմանը: Ֆինանսական պլանավորման թերի տեսանելիությունը սահմանափակում է ՌԾ նպատակների իրականացման հնարավորությունների գնահատմանը, ռիսկեր ստեղծում իրականացման փուլում և դժվարացնում ռազմավարական նպատակների իրագործման ֆինանսական ապահովման կանխատեսումը: Փորձագիտական խումբը ընդգծում է, որ ֆինանսական մուտքերի աղբյուրների բազմազանեցումը կարող է էապես ընդլայնել հաստատության երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի իրականացման հնարավորությունները: Այս համատեքստում առաջնահերթություն է համարվում արտաքին համագործակցությունների խորացումը՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակներում, ինչը կնպաստի կայուն զարգացման ֆինանսական հիմքերի ձևավորմանն ու ընդլայնմանը:

Խումբը արձանագրում է, որ կառավարման գործընթացներն իրականացվում են վերևից ներքև ուղղահայաց մոդելով՝ ներքևից վերև հաշվետվողականությամբ: Գնահատելի են պլանավորման և հաշվետվողականության մեխանիզմների բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքները և առանձին ոլորտներում քոլեջի նշանակալի ձեռքբերումները, սակայն դեռևս առկա են պլանավորման և գործառնական մշտադիտարկման որոշակի թերություններ: Մասնավորապես, իրականացված քայլերի ազդեցության վերաբերյալ վերլուծությունների բացակայությունը կարող է հանգեցնել ռեսուրսների (ժամանակի, մարդկային, ֆինանսական) անարդյունավետ կառավարման: Աշխատանքային պլաններում գործողությունների կրկնությունները և որոշ բարելավումների առաջարկություններ շարունակաբար չիրականացումը փաստում են պլանավորման և մշտադիտարկման գործընթացների որոշ թերությունները: Սա կարող է նվազեցնել շահակիցների ներգրավվածությունն ու մոտիվացիան: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է մասնակցային և տվյալահեն կառավարման մոդելի կայացումը՝ ներդնելով կայուն մշտադիտարկման և հետադարձ կապի մեխանիզմներ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ներքին և արտաքին միջավայրի վերլուծության գործիքակազմի սահմանափակ զարգացվածությունը, ինչպես նաև համակարգված ռիսկերի գնահատման մեխանիզմների բացակայությունը սահմանափակում են ռազմավարական պլանավորման և գործառնական արդյունավետության բարելավման հնարավորությունները:

Խումբը գնահատում է ՊԻԳԲ սկզբունքի ներդրումը և այս առումով գնահատելի է ՈԿՀ դերը, սակայն ընդգծում է, որ գործընթացների մեծ մասը գտնվում են տարբեր զարգացման փուլերում: Տեղեկատվության հավաքագրման և դրա արդյունավետության գնահատման համար քոլեջում առկա են որոշակի փորձառություններ և ձևաչափեր, սակայն արդյունավետության համակարգային գնահատում դեռևս չի իրականացվում:

Փորձագիտական խումբը նշում է, որ տեղեկատվության հրապարակայնության ուղղությամբ քոլեջը կատարել է որոշ առաջընթաց՝ սոցիալական ցանցերի և կայքի միջոցով, սակայն կառավարման որոշումների թափանցիկության և շահակիցների ներգրավվածության ապահովման առումով դեռևս առկա են բացթողումներ, մասնավորապես մասնագիտության կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը կարող է բացասաբար անդրադառնալ արտաքին շահակիցների հետ վստահության ամրապնդման վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը կառուցել և գործարկում է համեմատաբար հստակ ձևավորված և կառուցվածքավորված կառավարման մոդել, որը ներառում է ուղղահայաց և համագործակցային կապեր և արտահայտված է ստորաբաժանումների կարևորությունը, քայլեր են ձեռնարկվել ռազմավարական կառավարման համակարգի ձևավորման և կայացման ուղղությամբ և առկա են ձեռքբերումներ, բարելավվել են պլանավորման և հաշվետվողականության գործընթացները, նախաձեռնություններ են կատարվել թափանցիկության և հրապարակայնության ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը համապատասխանում է չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

«Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ն իրականացնում է միջին մասնագիտական *6* կրթական ծրագիր՝ Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր; Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում; Համակարգչային գեղարվեստական նախագծում; Համակարգչային գրաֆիկա; Մեխատրոնիկա; Ռոբոտաշինություն: Վերջին ուսումնական տարում ներդրվել է Համակարգչային գրաֆիկա կրթական ծրագիրը: Նոր մասնագիտության ներդրման համար հիմք է հանդիսացել արտաքին շահակիցներից ստացված արձագանքները, հատկապես՝ գործատուներից և շրջանավարտներից: Այնուամենայնիվ, աշխատաշուկայի ուսումնասիրություն չի իրականացվել քոլեջի կողմից: Փորձագիտական այցից պարզվեց, որ Ռոբոտաշինություն մասնագիտությամբ ընդունելություն չեն իրականացրել և այդ կրթական ծրագրի շարունակելու հարցը դեռևս նախատեսում են որոշել որոշակի ուսումնասիրությունների հիման վրա՝ պայմանավորված ծախսատարությամբ, աշխատաշուկայի և ուսանողների հետաքրքրվածությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը նկատի ունենալով աշխատաշուկայի զարգացումները նախատեսում է ներդնել Տեղեկատվական անվտանգություն կրթական ծրագիրը, կամ առավել ուշադրություն դարձնել անվտանգության և կիբեռանվտանգության ուղղություններով համապատասխան մոդուլներ ներդնելուն։

ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը մասնակցում է պետական կրթական չափորոշիչների կազմմանը և վերանայմանը։

Բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, ուսումնական պլաններում առկա են նաև առարկաներ, որոնք ներդրվել են ընտրովի և պահուստային ժամերի հաշվին։ Մասնավորաբար, Մեխատրոնիկա կրթական ծրագրի շրջանակներում նախատեսված է Ռոբոտաշինություն առարկան, որը պայմանավորված է այդ մասնագիտության զարգացման միտումներով և աշխատաշուկայի պահանջներով։ Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում կրթական ծրագրի շրջանակներում նախատեսված է երկրորդ ծրագրավորման լեզու։ Նույն մասնագիտության կրթական ծրագրի շրջանակներում 1-ին կուրս ավարտին ներդրել են մեկ շաբաթ ուսումնական պրակտիկա Ինֆորմատիկա առարկայից։ Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր կրթական ծրագրի շրջանակներում ընտրովի և պահուստային ժամերի հաշվին ուսումնասիրում են Հաշվողական տեխնիկայի միջոցների աշխատունակության վերականգնում և Հաշվողական տեխնիկայի միջոցների ապարատածրագրային համակարգերի գործունեության ապահովում առարկաները։

Յուրաքանչյուր կրթական ծրագրի իրականացման համար քոլեջն առաջնորդվում է ՊԿՉ-ներով, որոշակի փոփոխություններ են իրականացվել նախատեսված ժամաքանակներում։ ՊԿՉ-ների հիման վրա յուրաքանչյուր դասընթացի համար կազմվել են Մոդուլային ուսումնական ծրագրեր, թեմատիկ պլաններ, ուսումնառության ծրագրեր։ Մոդուլային ուսումնական ծրագրերում յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված են կատարման չափանիշներ, գնահատման միջոցներ, մեթոդաբանություն և ռեսուրսներ։ Թեմատիկ պլաններում յուրաքանչյուր դասի թեմայի համար սահմանվում է ըստ դասավանդման ձևի հատկացվող ժամաքանակը։ Ուսումնական պլաններում յուրաքանչյուր դասի թեմայի շրջանակներում սահմանված են կատարման չափանիշներ, ուսումնառության գործընթացի նկարագիր, գնահատման միջոցներ, ուսումնառության ռեսուրսներ։ Որպես գնահատման միջոց հիմնականում նշվում է հարց ու պատասխան, սահիկահանդեսի ցուցադրում, թիմային աշխատանքի ամփոփում։ Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագարային ապահովում մասնագիտության կրթական ծրագրի մասնագիտական մոդուլներում որպես գնահատման մեթոդ հիմնականում նշված են բանավոր հարցում, պրակտիկ աշխատանք, անհատական հարցում, պրակտիկ հարցում գրատախտակի մոտ։

Ուսումնական պլաններում առկա են պրակտիկաների հետևյալ տեսակները՝ ուսումնական, արտադրական կամ արտադրատեխնոլոգիական, նախադիպլոմային/նախաավարտական/, որոնք իրականացվում են ըստ ուսումնական պլանի։ Հարկ է նշել, որ Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագարային ապահովում ՄԿՕ-ի ուսումնական պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ։
Մասնավորապես՝ քոլեջը որոշակի ուսումնասիրություններից հետո կատարել է պրակտիկայի շաբաթների բաշխման փոփոխություն՝ 18 շաբաթ տևողությամբ մասնագիտական և նախաավարտական պրակտիկան տեղափոխել է 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակ։

Ուսումնական պրակտիկաներն անցկացվում են քոլեջում ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից կազմված և տնօրենի կողմից հաստատված պրակտիկաների անցկացման ժամանակացույցի համաձայն։

Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում կրթական ծրագրի շրջանակներում պրակտիկաների անցկացման համար քոլեջը համագործակցում է 62, Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր կրթական ծրագրի շրջանակում՝ 14, Համակարգչային գեղարվեստական նախագծում կրթական ծրագրի շրջանակում՝ 12, Մեխատրոնիկա կրթական ծրագրի շրջանակում՝ 7 կազմակերպությունների հետ: Յուրաքանչյուր պրակտիկայի համար առկա են ծրագրեր: Պրակտիկաների համար առկա է նաև օրագրի ձևաչափ: Փորձագիտական այցից պարզվեց, որ պրակտիկաների կազմակերպման նպատակով գործատուների հետ համագործակցության շրջանակի ընդլայնումը պայմանավորված է քոլեջի կողմից վարվող քաղաքականությամբ: Ըստ որի կարևորվում է նաև փոքր կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ շեշտադրելով ուսանողների՝ պրակտիկայի գործընթացում ակտիվ ներգրավվածության ապահովումը և պրակտիկայով սահմանված նպատակների իրագործումը: Միաժամանակ այդ քաղաքականությամբ կարևորվում է ուսանողների մոտ գործատուների հետ հաղորդակցման հմտությունների ձևավորումն ու աշխատանք որոնել, գտնելու կարողությունների զարգացումը: Այս միտումով ուսանողները իրենք իրենց պրակտիկայի վայրը որոնողի դերում են հանդես գալիս՝ ծանոթացնելով քոլեջի կողմից սահմանված մոտեցումներին, իսկ հաջողության պարագայում ներկայացնում քոլեջին՝ համագործակցությունն ինստիտուցիոնալացնելու համար: Փորձագիտական այցից պարզվեց, որ այսպիսի քաղաքականության արդյունքում աճել է ուսանողների թիվը, ովքեր անմիջապես աշխատանքի են անցել այդ նույն պրակտիկայի վայրում՝ կամ ուսումնառության տարիներին կամ ավարտելուց հետո:

Քոլեջում դասավանդման մեթոդների ընտրությունն իրականացվում է դասախոսների կողմից, դրանք քննարկվում են ամբոնների նիստերի ժամանակ: Մեթոդների ընտրությունը պայմանավորված է մոդուլներով նախատեսված արդյունքների ապահովմամբ, հաշվի են առնում մոդուլների առանձնահատկությունները: Դասախոսները ուսումնական նյութեր են տրամադրում սովորողներին, որտեղ հղումներ են արվում էլեկտրոնային գրադարանում առկա գրականությանը, այդ թվում նաև՝ դասավանդողների կողմից հեղինակված: Դասախոսները կարևորում են դիդակտիկ նյութերի կիրառումը, գործածում են շնորհանդեսներ, տեսանյութերի դիտում և վիրտուալ սիմուլյացիոն ծրագրեր: Դասախոսները կարևորում են փափուկ հմտությունների զարգացումը ևս, մասնավորաբար հաղորդակցման, թիմային աշխատանքի հմտություններ և այլն: Դրան միտված հանձնարարվում է ուսանողների խմբին ուսումնասիրել և պատրաստել դասավանդման նոր նյութը: Թիմի անդամները համատեղ ուսումնասիրում են նյութը, պատրաստում շնորհանդես և համապատասխան մասնաբաժիններով ներկայացնում: Այս մոտեցումը միտում ունի նաև հետազոտական հմտություններ զարգացնելու: Հարկ է նշել, որ առանձնակի կարևորություն ունեն լաբորատոր աշխատանքները, որտեղ ուսանողները տեսական գիտելիքները գործնականում դրսևորելու և հմտության վերածելու հնարավորություն են ստանում: Այնուամենայնիվ, առանձին որոշ դասընթացների պարագայում թույլ է արտահայտված ուսանողների ակտիվ ներգրավվածությունը դասապրոցեսին:

Դասալսումների և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացում դասախոսները կարևորում են ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացումը: Քոլեջն ունի հետազոտական աշխատանքների կատարման քաղաքականություն և ընթացակարգ: Քոլեջն ունի Կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կարգ, ընդ որում, կուրսային աշխատանքը հետազոտական աշխատանքի կատարման ձևերից է, որ պարտադիր է բոլոր ուսանողների համար: Ըստ կարգի կուրսային աշխատանքները նաև գրախոսվում են՝ ըստ համապատասխան չափանիշների (տեսական և գործնական նյութերի օգտագործման և մշակման մակարդակը, գիտական մեթոդների տերմինաբանության իմացության մակարդակ, պլանով նախանշված խնդիրների լուծման խորությունը, կատարած աշխատանքի առավելությունները և թերությունները և այլն), ինչպես նաև սահմանված են գնահատման համապատասխան չափանիշներ (խնդրի դրվածքի ձևակերպում, կատարման ինքնուրույնություն, դատողությունների, եզրակացությունների հիմնավորում և փաստարկում, գրականության և այլ փաստական նյութերի կիրառություն և կիրառման հմտություն, աշխատանքի ներկայացման կարողություն, սեփական տեսակետը պաշտպանելու կարողություն և այլն): Ամբիոնները մշակել են կուրսային աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ: Կուրսային աշխատանքներն իրականացնում են հատուկ մասնագիտական Նախագիծ մոդուլի շրջանակներում: Ներկայացված թեմաների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ինքնուրույն ստեղծագործ աշխատանք են պահանջում: Մասնավորապես, Մեխատրոնիկա մասնագիտության պարագայում՝ Բազմաֆունկցիոնալ ռոբոտ-մանիպուլյատորի մշակում, Հաշմանդամների կողմնորոշման և տեղա-շարժման էլեկտրոնային համակար-գի մշակում և այլն: Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում կրթական ծրագրի շրջանակներում կուրսային աշխատանքները ևս պարունակում են վերլուծական բաղադրիչ, ուսանողները կուրսային աշխատանքի շրջանակներում պատրաստել են կրթական, մթերքի, սննդի առաքման, հյուրանոցի, քաղցրավենիքի վեբ կայքեր, ինչպես նաև Մասնիկների տեղաբաշխման վերլուծությունը Գաուսյան և գամմա մեթոդներով, օնլայն գրադարան և այլ հարթակներ: Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր կրթական ծրագրի պարագայում՝ Հաշվողական տեխնիկայի միջոցների (այսուհետ՝ ՀՏՄ) նախագծում, արտադրություն, շահագործում և նորոգում Գիտահետազոտական իստիտուտի լոկալ հաշվողական ցանցի կազմակերպում, ՀՏՄ նախագծում, արտադրություն, շահագործում և նորոգում Հանրային գրադարանի լոկոլ հաշվողական ցանցի կազմակերպում, ՀՏՄ նախագծում, արտադրություն, շահագործում և նորոգում, Կինոթատրոնի լոկալ հաշվողական ցանցի կազմակերպում և այլն:

Կուրսային աշխատանքներն իրականացնում են ըստ կուրսային աշխատանքների կատարման մեթոդական ցուցումների և կուրսային աշխատանքների համար նախատեսված համապատասխան չափանիշների:

2023-2024 ուսումնական տարում «Համակարգչային գեղարվեստական նախագծում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունների 3-րդ կուրսերում ներդրվել է «Նախագծային քննություն» փորձնական գաղափարը: Այս պարագայում դասախոսը մշակում է նախագծեր, որոնց բաղադրիչներ են իրական աշխատանքային իրավիճակների վրա հիմնված փոքր առաջադրանքները: Մոդուլի ամփոփումն իրականացվում է ամբողջական նախագծի ներկայացմամբ, որտեղ կարևորվում է տվյալ մոդուլի շրջանակներում նախատեսված բոլոր արդյունքների ապահովումը: Փորձագիտական այցից պարզվեց, որ այս մոտեցումը դեռևս շարունակվում է փորձնական գործել, չնայած որ արդեն իսկ հաջողված փորձ են համարում:

Փորձագիտական այցից պարզվեց, որ հետազոտական աշխատանքների պարագայում նաև կարևորվում է շարունակականության ապահովման հանգամանքը: 2-րդ կուրսի ավարտին ուսանողներն ունենում են որոշակի ուսումնասիրման արդյունք, որը զարգացնում են 3-րդ կուրսում և 3-րդ կուրսի 3 շաբաթյա պրակտիկայի ժամանակ վերածում են հստակ թեմայի ու իրականացնում նախագիծ: Վերջինս զարգացնում և դարձնում են կուրսային աշխատանք: Առանձին դեպքերում դրանք զարգացնում և դարձնում են դիպլոմային աշխատանք:

ՄՈՒՀ-ում առկա է «Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման, բողոքարկման և վերահանձնման կանոնակարգ»: Տարբերակում են գնահատման հետևյալ ձևերը՝ ընթացիկ (անընդհատ) ստուգում, միջանկյալ ստուգում, կիսամյակային քննություններ, պետական ամփոփիչ ատեստավորում: Գնահատումն իրականացվում է 10 միավորային համակարգում: Նման մոտեցումը ընդունված է բոլոր մասնագիտություններում: Մոդուլային ծրագրերում ներկայացված է յուրաքանչյուր արդյունքի գնահատման միջոցը, որը կարող է լինել հարց ու պատասխան, սահիկահանդեսի ցուցադրում, թիմային աշխատանքի ամփոփում և այլն: Հարցաշարերի և գնահատման թերթիկների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար առանձնացված են բանավոր հարցեր և տրվում է գործնական առաջադրանք: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում մասնագիտական մոդուլները ևս մեկ անգամ ամփոփվում են, առկա են կիսամյակային ամփոփիչ հարցաշարեր, որոնք հիմնականում պարունակում են ինչպես տեսական գիտելիքին ուղղված հարցեր, այնպես էլ՝ գործնական կարողությանը:

Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր կրթական ծրագրի մոդուլների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ որոշ մոդուլներ ունեն սահմանված գնահատման միջոցներ՝ հարց ու պատասխան, գրավոր թեստային աշխատանք, լաբորատոր աշխատանքի կատարում, կամ օրինակ աշխատանքը ներկայացնել տրամաբանական սխեմաների միջոցով, լրացնել աղյուսակը և այլն, իսկ որոշ մոդուլների պարագայում որպես կատարման չափանիշները համարվում են արդյունքների նկարագրությունները:

Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում մասնագիտության կրթական ծրագրի մոդուլների գնահատման թերթիկների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ որոշ մոդուլներ ունեն հստակ առաջադրանքներ համապատասխան գնահատման սանդղակով, օրինակ Էլեկտրոնային աղյուսակներ, Վեկտորային գրաֆիկա, Կետային գրաֆիկա, Կիրառական հավելվածների ստեղծման միջոցներ: Սակայն որոշ մոդուլների գնահատման թերթիկները չունեն հստակ առաջադրանքներ, գնահատման թերթիկը կազմված է ըստ մոդուլային ծրագրի արդյունքի, իսկ կատարման չափանիշները համարվում են արդյունքների նկարագրությունները: Ըստ կատարման չափանիշների տրվել են գնահատման չափորոշիչները, օրինակ Օբյեկտ կողմնորոշված ծրագրավորում, Գրաֆիկական միջերեսի ծրագրավորում, Ալգորիթմների տարրերի կիրառումը, Ծրագրավորման հիմունքները մոդուլները:

ՄՈՒՀ-ում սահմանված են ընթացիկ գնահատման հստակ մոտեցումներ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները կարող են փոխել իրենց գնահատականը տեղում՝ ըստ համապատասխան ընթացակարգի, սակայն ըստ ընթացակարգի գնահատականի բողոքարկման դեպքեր չեն գրանցվել: Ուսանողները, խնդիր լինելու պարագայում, հիմնականում կարգավորում են դասախոսների հետ զրույցով:

Ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատման համար յուրաքանչյուր դասախոս կազմում է համապատասխան հարցաշարեր, թեստեր, ստուգողական աշխատանքներ, գնահատման թերթիկներ և այլ միջոցներ, որոնք քննարկվում և հաստատվում են ամբիոնում, ապա՝ ներկայացվում ուսումնական գծով փոխտնօրենի հաստատմանը: Գնահատման համար սահմանված են համապատասխան չափանիշներ և մեկնաբանություններ:

Բոլոր կրթական ծրագրերի դեպքում ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ քննություններ կամ ներկայացնում դիպլոմային աշխատանքներ: Ամփոփիչ հարցաշարերի և գնահատման թերթիկների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում առկա են և՛ տեսական գիտելիքները, և՛ գործնական հմտությունները ստուգող հարցեր: Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում մասնագիտության պետական ամփոփիչ քննություններն անցկացնում են համակարգչով: Համապատասխան ծրագիրը 14 մասնագիտական մոդուլներից կազմված հարցաշարից կազմում է 80 հարցից բաղկացած թեստ, որը լուծելով ուսանողը կարող է ստանալ 16 միավոր, իսկ մնացած 4 միավորը ստանալու համար հանձնարարվում է լուծել 4 խնդիր իր համար նախընտրելի ծրագրավորման լեզվով: Քննության այս ձևը ներդրվել և գործում է շուրջ 1 տարի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն այն արդյունավետ է համարում:

Ըստ սահմանված կարգի ուսանողներն հնարավորություն են ստանում պատրաստել դիպլոմային աշխատանք, եթե մասնագիտական մոդուլների գնահատականների միջին թվաբանականը համապատասխանում է սահմանված շեմին, հակառակ դեպքում՝ հանձնում են պետական ամփոփիչ քննություն: Ընդ որում փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ շեմը յուրաքանչյուր տարի և յուրաքանչյուր խմբի համար սահմանվում է առանձնակի՝ նկատի ունենալով, թե քանի դիպլոմային աշխատանքի իրականացումն է իրատեսական համարվում՝ ապահովելով որակական կողմը: Առանձին դեպքերում, անցողիկ շեմը հաղթահարած ուսանողը կարող է նախընտրել քննության հանձնումը սեփական դիմումի համաձայն: Միաժամանակ առանձին դեպքերում անցողիկ շեմը չհաղթահարած ուսանողը կարող է դիմել դիպլոմային աշխատանք իրականացնելու համար, եթե ներկայացնում է կարգով սահմանված բավարար հիմնավորումներ: Փորձագիտական այցից պարզվեց, որ դիպլոմային աշխատանքների կատարման ժամանակ ևս ամբիոններն առաջնորդվում են սահմանված մոտեցումներով և կարևորում են աշխատանքների որակական կողմը և կիրառելիությունը: Կրթական ծրագրերի համար սահմանված են դիպլոմային աշխատանքների կատարման մեթոդական ուղեցույցներ, գնահատման չափանիշներ, դիպլոմային նախագծի ղեկավարի կարծիքի և գրախոսման համար ձևաթղթեր:

Դիպլոմային աշխատանքների թեմաների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք միտված են կիրառական արդյունքի: Մասնավորաբար, Մեխատրոնիկա մասնագիտության պարագայում՝ Խելացի Զամբյուղի մշակում, Խելացի կերարտադրման մեխատրոնային համակարգի մշակում; Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր կրթական ծրագրի պարագայում՝ FTP սերվերի նախագծում և ստեղծում OS Linux-ի հիման վրա, Հաշվարկա-բացատրական մաս ռոբոտ փոշեկուլի նախագծում, Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում կրթական ծրագրի պարագայում՝ Բացակայող տվյալների լրացման ալգորիթմների ուսումնասիրումը և կիրառումը, Մասնագիտական կրթական վիրտուալ լաբորատորիա, Մոբայլ հավելվածում ուսման արդյունքների վերահսկում, Տարեցների խնամքի և հանգստի կազմակերպման հարթակ, SmartHome Control:

Ամբոնների հաշվետվությունների ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից 2 տարի անընդմեջ կարևորվել է դիպլոմային աշխատանքներում հղումների, աղբյուրների հիշատակման ուղղությամբ բարելավումների իրականացումը և ամբիոնը կարևորել է այս ուղղությամբ աշխատանքները:

Հարկ է նշել, որ կուրսային և դիպլոմային աշխատանքներով ստացված մի շարք արդյունքներ կիրառվում են դասավանդման գործընթացում: Մասնավորաբար, Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում և Համակարգչային գեղարվեստական նախագծում կրթական ծրագրերի շրջանակներում ստեղծվել և ձևավորվել է քոլեջի պաշտոնական կայքէջը, Մեխատրոնիկա մասնագիտության շրջանակներում ստեղծվել է հոսքագիծ և այլն:

Ընթացիկ և ամփոփիչ գնահատականների ուսումնասիրությունից և փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ քոլեջը մեծ կարևորություն է տալիս գնահատման գործընթացի օբյեկտիվությանը՝ կարևորելով կրթական ծրագրով նախատեսված արդյունքների ապահովմամբ պայմանավորված գնահատումը և ակադեմիական ազնվությունը: Նախագծային աշխատանքների համար գրագողության համապատասխան քաղաքականություն է իրականացվում՝ գործածելով նաև ժամանակակից տեխնոլոգիաները:

Ուսանողները գնահատվում են նաև պրակտիկաների ընթացքում: Գնահատականներն արտահայտված են պրակտիկաների օրագրերում: Պրակտիկայի գնահատման չափանիշներ սահմանված են թե՛ կազմակերպության կողմից, թե՛ քոլեջի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարի գնահատման համար:

Արտադրատեխնոլոգիական և նախադիպլոմային պրակտիկաների գնահատման համար հիմք է հանդիսանում ուսանողի կողմից ներկայացրած օրագիր-հաշվետվությունը և ձեռնարկության կողմից գրված պրակտիկայի ղեկավարի կարծիքը պրակտիկանտի պարտաճանաչության, քոլեջում ստացած մասնագիտական գիտելիքների և կարողությունների մակարդակի, նրանց ինքնուրույնության ու տարբեր մասնագիտական խնդիրներ լուծելու մասին, լրացուցիչ աշխատանք կատարելու պատրաստակամություն, աշխատանքային անձնակազմում շփման հմտությունների դրսևորում և այլն:

ՄՈւՀ-ը կրթական ծրագրերի բենչմարքինգ չի իրականացրել, բենչմարքինգի իրականացման կարգ և հստակ մեխանիզմներ ներդրված չեն: Փորձագիտական այցից պարզվեց, որ այս ուղղությամբ դեռևս հստակ պլանավորված քայլեր առկա չեն: Դրա հետ մեկտեղ, փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ, մասնավորաբար, Մեխատրոնիկա կրթական ծրագիրը ներդրվել է միջազգային համագործակցության արդյունքում, իսկ ՈԿՀ-ն կարևորում է համեմատական վերլուծության որակյալ իրականացումը, և այս ուղղությամբ քայլեր ձեռնարկելու մտադրություն ունեն:

ՄՈՒՀ-ում առկա է 2021 թ.-ին հաստատված ՄԿԾ-ների մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման քաղաքականությունն ու ընթացակարգերը փաստաթուղթը, որում անդրադարձ է կատարվում ՄԿԾ-ների մշակման ու հաստատման, դասընթացների մշակման մեթոդաբանության, ՄԿԾ-ների մշտադիտարկման, գնահատման և պարբերաբար վերանայման հարցերին: Մշտադիտարկման իրականացման համար առկա է ձևաթուղթ, որում կարևորել են անձի որակական հատկանիշներն ու առանցքային հմտությունները, գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, լեզվամիմացությունը ապահովող դասընթացների, հանձնարարականների, պրակտիկ գործունեության, գնահատման միջոցների և վերջնարդյունքի ցուցիչները: Փորձագիտական այցից պարզվեց, որ այս փաստաթուղթը դեռևս չի ներդրվել: Այնուամենայնիվ, փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ կրթական ծրագրերի բարելավման համար հիմք են հանդիսացել ՊԿՉ-ների փոփոխությունները, գործատուների հետ քննարկումները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի առաջարկները, ուսանողների պրակտիկաներով պայմանավորված աշխատաշուկայի դիտարկումները, դասախոսների առաջարկները, դասալսումները: Այս ամենը ամբիոնների նիստերում և Մանկավարժական խորհրդի նիստերում քննարկումների հիմք են դառնում, որոնց արդյունքում իրականացվում են բարեփոխումներ, սակայն վերլուծություններ չեն իրականացվում:

Փորձագիտական այցից պարզվեց, որ ընթացիկ, ամփոփիչ արդյունքների, ամփոփիչ ատեստավորման, պրակտիկաների ու հետազոտական աշխատանքների գնահատման մեխանիզմների հստակեցման, մեթոդական ուղեցույցերի մշակման և մի շարք գործընթացների կանոնակարգման հարցում կարևոր է եղել ՈԿՀ-ի դերը:

Դատողություններ: Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի կողմից իրականացվող կրթական ծրագրերը ձևավորված են կառուցվածքային և բովանդակային հստակությամբ՝ հիմնված պետական չափորոշիչների վրա: Փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթական ծրագրերի կառուցվածքը հնարավորություն է տալիս ապահովել ծրագրերի թափանցիկություն և ուսումնական գործընթացի կանխատեսելիություն: Նաև դրական է, որ դասախոսական կազմը մասնակցում է ՊԿՉ-ների վերանայման գործընթացներին, ինչը նպաստում է կրթական քաղաքականության մեջ ներգրավվածությանը և սեփական ծրագրերի արդիականացման կարողունակության բարձրացմանը:

Կարևոր է, որ քոլեջում իրականացվում են նաև նորարարական տեխնոլոգիաներին ուղղված միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Փորձագիտական խումբը կարևորում է, որ նոր կրթական ծրագրեր ներդնելու և որոշ բովանդակային բարեփոխումների համար հիմք են հանդիսացել արտաքին շահակիցների արձագանքները, բացի այդ, մասնագիտական ծրագրերում ներառված են առարկաներ և բաղադրիչներ, որոնք ուղղված են ժամանակակից պահանջների բավարարմանը: Կրթական ծրագրերը ներառում են արդիական և աշխատաշուկայում պահանջված տարրեր: Միաժամանակ, համակարգային աշխատաշուկայի վերլուծության բացակայությունը կարող է սահմանափակել կրթական առաջարկների առավել նպատակային համադրումը գործատուների ակնկալիքներին՝ նվազեցնելով դրանց հարմարեցման ճկունությունը շարունակաբար փոփոխվող պահանջների համատեքստում: Մասնավորաբար, նաև կարևոր է, որ Ռոբոտաշինություն մասնագիտության շարունակականության հարցը որոշակիացվի համակողմանի վերլուծությունների հիման վրա, քանի որ հակառակ պարագան կարող է ազդել ինչպես ուսումնական գործընթացի կայունության, այնպես էլ շահակիցների վստահության վրա՝ կապված առաջարկվող մասնագիտությունների կենսունակության հետ:

Քոլեջի մասնագիտական կրթական ծրագրերում պրակտիկաները հստակ տեղակայված են տարբեր կիսամյակներում՝ ներառելով տարբեր փուլերը: Տևողության և կառուցվածքի տարբերակված լինելը ըստ մասնագիտության նպաստում է ուսանողների աստիճանական մասնագիտական զարգացմանը: Պրակտիկաների բովանդակային և ժամանակային կառուցվածքը տարբեր ծրագրերում հարմարեցված է մասնագիտության առանձնահատկություններին, ինչը վկայում է ըստ կրթական ծրագրի նպատակների ճկունության և հարմարվողականության մասին: Քոլեջը համագործակցում է տարբեր թվով կազմակերպությունների հետ՝ մասնագիտություններից կախված, ինչը հաստատում է համագործակցային ցանցի դինամիկ զարգացումն ապահովող ինստիտուցիոնալ ջանքերի մասին: Միաժամանակ քոլեջի որդեգրած քաղաքականությունը՝ ուսանողներին ներգրավելով պրակտիկայի վայրի որոնման գործընթացում, խթանում է նրանց նախաձեռնողականությունը, հաղորդակցման հմտությունները և աշխատանքային շուկայի հետ վաղ ինտեգրումը: Նման մոտեցումը նպաստում է կարիերայի պլանավորման տարրերի ձևավորմանը, ինչպես նաև՝ աշխատանքի տեղավորման ցուցանիշների աճին: Փորձագիտական խումբը գտնում է, որ պրակտիկաների կազմակերպման սահմանված մեխանիզմներն ապահովում են պրակտիկայի ընթացքի կառավարման և վերահսկման մեխանիզմների գործարկումը՝ որակի պահպանման տեսանկյունից: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ այս գործընթացների (մասնավորաբար նաև՝ փորձարկվող մոտեցումների) հետ կապված ռիսկերի կառավարման և շարունակական զարգացման ապահովման տեսանկյունից կարևոր է արդյունքահեն մոնիթորինգի և վերլուծության իրականացումը:

Քոլեջում կիրառվող դասավանդման մեթոդների բազմազանությունը, արդյունքահեն և տեխնոլոգիապես խթանող ուսուցման մոտեցումները, ինչպես նաև փափուկ և հետազոտական հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդները վկայում են ուսումնական գործընթացի արդիականացման և կրթական որակի բարելավման ուղղությամբ ձեռնարկվող գործողությունների մասին: Այս ամենը նպաստում է ուսանողի ամբողջական զարգացմանը՝ պատրաստելով նրան ինչպես մասնագիտական, այնպես էլ սոցիալապես պահանջված միջավայրում գործելու համար: Ուսումնական նյութերում հղումների առկայությունը և դասախոսների կողմից հեղինակված աղբյուրների օգտագործումը նպաստում են տեղեկատվության հուսալիությանն ու ակադեմիական մշակույթի ձևավորմանը: Գործնական հմտությունների ձևավորումը լաբորատոր պայմաններում նպաստում է գիտելիքների իրական կիրառման ունակությունների զարգացմանը, ինչը հատկապես կարևոր է տեխնոլոգիական մասնագիտությունների դեպքում:

Քոլեջում հետազոտական և նախագծային ուսուցման ինտեգրումը՝ կուրսային աշխատանքների, փորձնական «նախագծային քննության» և շարունակական ուսումնասիրության ձևով, վկայում է նորարար և ուսանողակենտրոն մոտեցման որդեգրման մասին: Քոլեջը ցուցաբերում է համապատասխան ջանքեր՝ հստակեցնելու ակադեմիական պահանջները, կարգավորելու ընթացակարգերը և ապահովելու կիրառական արդյունքների ձևավորում: Նման մոտեցումները բարձրացնում են կրթական ծրագրերի իրատեսականությունը, նպաստում ուսանողների մասնագիտական և վերլուծական կարողությունների զարգացմանը:

Ամբիոնների կողմից մշակված մեթոդական ցուցումները և հստակ չափանիշները նպաստում են ուսանողների ակնկալիքների հստակեցմանը և արդար ու թափանցիկ գնահատմանը: Հետազոտական աշխատանքների փուլային զարգացումն ամրապնդում է թեմատիկ խորացումը, երկարաժամկետ մտածողությունը և ուսումնասիրության հետևողականությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ կուրսային և դիպլոմային աշխատանքների թեմաները համապատասխան են մասնագիտական դաշտի պահանջներին և նպաստում են ոլորտային համապատասխանության ապահովմանը: Միաժամանակ, հետազոտությունների և նախագծերի կապը պրակտիկայի հետ և կիրառելի արդյունքների ստեղծման վրա շեշտադրումը ուսանողներին հնարավորություն է տալիս իրական խնդիրների լուծման փորձ ձեռք բերելու՝ ամրապնդելով նրանց մասնագիտական ինքնավստահությունը և խթանելով ուսանողների պրոֆեսիոնալ աճն ու հնարավոր կապը գործատուների հետ:

Գնահատման բազմաստիճան կառուցվածքը ապահովում է ուսանողների առաջընթացի հետևողական վերահսկում, իսկ մոդուլային ծրագրերում գնահատման ձևերի ու մեթոդների հստակ սահմանված լինելը նպաստում է թափանցիկությանն ու կանխատեսելիությանը: Փորձագիտական խումբը կարևորում է հմտությունների ձևավորման վրա շեշտադրման առկայությունը, ինչը համապատասխանում է մասնագիտական կրթության բնույթին: Տեխնոլոգիական արդիական մոտեցումները գնահատման գործընթացում ապահովում են արդիական հմտությունների գնահատում:

Պրակտիկայի գնահատման չափանիշների առկայությունը թե՛ քոլեջի, թե՛ արտաքրության կողմից ապահովում է պրակտիկայի արդյունքների համարժեք վերլուծություն և արձագանք:

Փորձագիտական խումբը նաև կարևորում է գրագողության ուղղությամբ քոլեջի նախաձեռնությունները, դրանք նպաստում են ակադեմիական ազնվության ապահովմանը՝ հատկապես նախագծային և դիպլոմային աշխատանքների դեպքում:

Այդուհանդերձ, գիտելիքի գնահատման գործընթացին անդրադառնալով, փորձագիտական խումբը նշում է, որ որոշ մոդուլների շրջանակներում գնահատման իրականացումն ընդհանուր արդյունքների նկարագրությունների հիման վրա կարող է նվազեցնել գնահատման օբյեկտիվությունը: Տարեցտարի և տարբեր խմբերի համար դիպլոմային աշխատանք գրելու համար փոփոխվող շեմերը կարող են առաջացնել որոշակի անարդարության զգացում և նվազեցնել գործընթացի կանխատեսելիությունը: Այս տեսանկյունից կարևոր է բոլոր մասնագիտությունների և խմբերի համար հստակ, որոշակի նվազագույն շեմ սահմանելը կամ գործող շեմի մասին նախապես ուսանողներին իրազեկելը:

Բենչմարքինգի իրականացման մեխանիզմների, ընթացակարգերի բացակայությունը նշանակում է, որ կրթական ծրագրերը համեմատության մեջ չեն դրվում տեղական կամ միջազգային լավագույն փորձի հետ: Սա կարող է սահմանափակել մրցունակության բարձրացմանը, օբյեկտիվ գնահատմանը և թիրախային բարելավումներին: Այս տեսանկյունից, թերևս, դրական է միջազգային համագործակցության արդյունքում կրթական ծրագիր ներդնելու փորձը և բենչմարքինգ իրականացնելու կարևորումը քոլեջի կողմից:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ում կարևորվում է ծրագրերի կառավարման նկատմամբ ռազմավարական մոտեցումը, և առկա են մշակված մեխանիզմներ: Սակայն վերջինս դեռևս հստակ չի գործում: Դրանով հանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է կրթական ծրագրերի շրջանակներում իրականացված բարեփոխումները՝ հենված տարբեր ազդակների վրա: Միաժամանակ, կարևոր է, որ քոլեջն արդեն անցում կատարի համակարգված, տվյալահեն և համակողմանի վերլուծությունների հիմքով բարեփոխումների: Հակառակ պարագան կարող է հանգեցնել ոչ համաչափ բարելավումների, տարբեր ամբիոնների կամ մասնագիտությունների միջև անհամաչափ զարգացման:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ծրագրերը ձևավորված են ՊԿՉ-ների հիման վրա՝ պահպանելով կառուցվածքային և բովանդակային հստակություն, առկա է առաջադեմ մոտեցում՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ կրթական ծրագրերի ձևավորման, ուսուցման մեթոդների բազմազանեցման, գնահատման արդիականացման, հետազոտական ու նախագծային ուսուցման ինտեգրման ուղղություններով՝ շեշտադրելով ոչ միայն մասնագիտական, այլև փափուկ և հետազոտական հմտությունների ձևավորումը, տեսանելի առաջընթաց է առկա պրակտիկաների կառուցվածքի, բովանդակության և համագործակցային ցանցի զարգացման ուղղությամբ, քոլեջը արձագանքում է արտաքին շահակիցների դիտարկումներին և փորձ է անում կրթական ծրագրերը համընկեցնել աշխատաշուկայի պահանջներին, գործում է գնահատման բազմաստիճան մոտեցում և կարևորվում է ակադեմիական ազնվությունը, մշակվել են կրթական ծրագրերի բարելավման ինստիտուցիոնալ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը համապատասխանում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

«Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը դիմորդների ընդունելության գործընթացն իրականացնում է՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ կողմից հաստատված Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին

մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի, առանց քննությունների՝ ավարտական վկայականի գնահատականների հիման վրա: Քոլեջը դիմորդների հավաքագրման նպատակով իրականացնում է մասնագիտական կողմնորոշմանն ու ուղղորդմանը միտված միջոցառումներ:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ յուրաքանչյուր տարի, սկսած մարտ ամսից, Քոլեջը ձևավորում է քարոզչական խմբեր, որոնց կազմում ընդգրկված է կարիերայի ուղղորդման պատասխանատուն, ինչպես նաև ՈւԽ անդամները: Այդ խմբերն այցելում են Երևանի և մերձակա բնակավայրերի հիմնական դպրոցներ՝ կազմակերպելով հանդիպումներ ավարտական դասարանների աշակերտների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվում է Քոլեջի կրթական ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը և բաժանվում են գովազդային բուկլետներ:

Յուրաքանչյուր ուսումնական տարում երկու անգամ Քոլեջում կազմակերպվում են «Բաց դռների օրեր», որոնց ընթացքում ամբիոնի վարիչները և ուսանողները ներկայացնում են քոլեջի մասնագիտությունները: Բացի այդ, ոչ պարբերական սկզբունքով իրականացվում են «Մասնագիտության օր» խորագրով միջոցառումներ, որոնք ներառում են քոլեջի տարածքում կազմակերպված էքսկուրսիաներ:

Դիմորդներին իրազեկելու նպատակով Քոլեջի կայքէջի «Դիմորդ» բաժնում տեղադրված է անհրաժեշտ տեղեկատվություն՝ ընդունելության կարգի, պահանջվող փաստաթղթերի և ուսման վարձաչափերի վերաբերյալ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի դինամիկ աճ է նկատվում հատկապես «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության գծով, որը, ըստ Քոլեջի ներկայացուցիչների, պայմանավորված է մասնագիտության նկատմամբ բարձր պահանջարկով և ոլորտի արդիականությամբ: Վերջին չորս տարիների ընթացքում ուսանողների ընդհանուր թիվը էական փոփոխություն չի կրել: Քոլեջի ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով 2024-2025 ուսումնական տարվա դրությամբ սովորում են 982 ուսանող, որից 980-ը՝ առկա, իսկ 2-ը՝ հեռակա: Հեռակա ուսուցման ձևաչափը Քոլեջի կրթական համակարգում ներդրվել է 2024–2025 ուսումնական տարվանից՝ որպես փորձնական ծրագիր՝ պարզելու, թե որքանով է այս ձևաչափը պահանջված ուսանողների համար:

Վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառներ են հանդիսացել առաջադիմությունը, վճարունակությունը և ինքնակամ հեռացումը: Քոլեջում անվճարունակության պատճառով հեռացումների քանակը նվազեցնելու համար կիրառվում է երկու մեխանիզմ՝ ուսման վարձի զեղչ կարիքավոր ուսանողների համար՝ դիմումի հիման վրա, վճարումների ժամանակացույցի ճկունեցում՝ ուսանողի հետ համաձայնեցված պայմաններով:

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է կուրսղեկների, ներքին որակի ապահովման ենթակառույցի և ՈւԽ-ի միջոցով: Կրթական կարիքների բացահայտումը հիմնականում իրականացվում է կուրսղեկների կողմից, ովքեր յուրաքանչյուր շաբաթ դասացուցակով նախատեսված կուրսղեկի ժամեր են անցկացնում: Բացի այդ, որակի ներքին ապահովման ենթակառույցը իրականացնում է հարցումներ, որոնց միջոցով բացահայտվել են, օրինակ՝ լսարանների կահավորման հետ կապված խնդիրները: Ամբիոնների կողմից մեծամասամբ բացահայտվում են սեմինարների և լրացուցիչ դասընթացների կազմակերպման հետ կապված կարիքները: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ վերհանված կարիքները վերածվում են բարելավման նախատեսված գործողությունների: Առկա է եղել խնդիր, երբ երկու խմբի համար դասաժամ նախատեսված է եղել միևնույն լաբորատորիայում: ՈւԽ-ի միջնորդությամբ հարցը ներկայացվել է համապատասխան ամբիոնի վարիչին, ինչը լուծում է ստացել դասացուցակի փոփոխությամբ:

Քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց։ Քոլեջում դասախոսների կողմից լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը և խորհրդատվության տրամադրումը իրականացվում է ընթացիկ և կիսամյակային կերպով։ Ընթացիկ լրացուցիչ պարապմունքներն ու խորհրդատվություններն իրականացվում է սահմանված ժամանակացույցով և ըստ անհրաժեշտության։ Ընթացիկ խորհրդատվություններն անցկացվում են դասախոսների ազատ ժամերին, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը առկա է հայտարարությունների ցուցատախտակին։ Իսկ կիսամյակային խորհրատվություններն անցկացվում են ըստ հստակ ժամանակացույցի։ Ըստ անհրաժեշտության դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին, պատասխանելու նրանց հարցերին։ Քոլեջում անցկացվում են մաթեմատիկայի պարապմունքներ «Սովորի՛ր, սովորեցրո՛ւ» խորագրով, որոնց ընթացքում իրենց գիտելիքները և փորձը փոխանցում են ինչպես դասախոսները, այնպես էլ ուսանողները։

Բացի այդ, ուսանողներին հնարավորություն է ընձեռվում մասնակցելու վարպետաց դասերին։

Ըստ քոլեջի կողմից իրականացված հարցումների, ուսանողները հիմնականում կարևորում են խորհրդատվական պարապմունքների իրականացումը, և նրանց 53%-ն ընդգրկված է այս պարապմունքներում։ Սակայն հարկ է նշել, որ ուսանողների մասնակցությունը հարցումներին սակավաթիվ է։

Քոլեջում իրականացվում են ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ՝ անգլերեն լեզվի կարողությունների զարգացման ուղղությամբ։ Սակայն, ինչպես պարզ դարձավ փորձագիտական հանդիպումներից, այս պարապմունքները կազմակերպվում են հենց ուսանողների կողմից՝ ոչ հստակ պլանավորմամբ։

Քոլեջում անցկացվում է նաև «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղ, որին ներգրավվածություն ունեն ինչպես ուսանողները, այնպես էլ շրջանավարտները։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով, թեև մեծամասամբ ուսանողները դիմում են կուրսղեկներին։ Առկա չէ վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակցույց։ Քոլեջը էլեկտրոնային հարցումների, անհատական և խմբակային հանդիպումների միջոցով գնահատել է նաև վարչական անձնակազմից ուսանողների բավարավածությունը։

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է կարիերայի ստորաբաժանում։ Կարիերայի ստորաբաժանումը կազմակերպում է ուսանողների հետ անհատական խորհրդատվություններ, հանդիպումներ գործատուների և ոլորտի մասնագետների հետ, ինչպես նաև համագործակցում է ՋՊԳ-ի (Ջրաղվածության պետական գործակալության) տարածքային կենտրոնների հետ։ Բացի այդ, Քոլեջը ուսանողների մասնակցությամբ ներկայանալի է դառնում հանրային կրթական միջոցառումներին և կարիերայի տոնավաճառներին, ինչպիսիք են, օրինակ, Կրթական EXPO-ն և DigiTec Expo-ն։

Քոլեջում առկա է շրջանավարտների տվյալների հենք։ Կարիերայի ստորաբաժանման պատասխանատուն հեռախոսազանգերի միջոցով կապ է պահպանում շրջանավարտների հետ՝ նրանց զբաղվածության վերաբերյալ վիճակագրական տվյալներ հավաքելու նպատակով։ Քոլեջում առկա է նաև շրջանավարտների միություն։ Ստեղծվել է հարթակ, որի միջոցով տեղեկատվություն են տրամադրում շրջանավարտներին՝ թափուր հաստիքների և նախագծերին մասնակցության վերաբերյալ։

Քոլեջը կնքել է շուրջ 5 համաձայնագիր՝ հաստատությունների հետ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով։ Կարիերայի պատասխանատուն պարբերաբար իրազեկում է շրջանավարտներին թափուր աշխատատեղերի վերաբերյալ։ Կարիերայի կենտրոնն ունի ֆեսբուքյան էջ, որի միջոցով ևս ապահովվում է կապը շրջանավարտների հետ։

Կարիերայի պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացվել են վերջին տարիներին ուսանողների զբաղվածության տվյալները, ովքեր աշխատանքի են անցել կարերայի պատասխանատուի օժանդակությամբ: 2023-2024 ուստարվա շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 332 շրջանավարտներից 117-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 97-ը աշխատում են, որից 59-ը իրենց մասնագիտությամբ: Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն ցուցանիշն ունի «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունը:

Քոլեջում գործում է ՈՒԽ, որն ըստ կանոնակարգի ունի ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվելու գործառույթ: Սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսանողների իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրներ դեռևս չեն արձանագրվել, ուստի ՈՒԽ-ն հանդես է գալիս որպես օղակ, որն ըստ անհրաժեշտության աջակցում է նաև ուսումնական կարիքների լուծմանը: ՈՒԽ-ի կառուցվածքում, ըստ տարբեր ոլորտների, գործում են հանձնաժողովներ՝ կրթական, մշակութային, սպորտի և իրավապաշտպան: Մասնավորապես, լրատվության հանձնաժողովը աշխատանքներ է իրականացնում համացանցում և կայքում որոշակի տեղեկատվության պատրաստման և տարածման ուղղությամբ: ՈՒԽ կազմում ուսանողները ներգրավվում են ըստ ցանկության:

Հիմնականում ՈՒԽ-ն կազմակերպում է միջոցառումներ: ՈՒԽ աշխատանքային պլանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ոչ բոլոր միջոցառումներն են կանխավ պլանավորված:

ՈՒԽ-ի հանդիպումների ընթացքում քննարկվում և պլանավորվում են առաջիկա միջոցառումների մանրամասները: Օրինակ՝ փորձագիտական այցին նախորդած ՈՒԽ-ի ժողովի ժամանակ քննարկվել է ՈՒԽ-ի անկյան ստեղծման գաղափարը, որի արդյունքում ձևավորվել է ՈՒԽ-ի անկյունը, որտեղ տեղադրել են նաև բողոքների և առաջարկությունների արկղ: ՈՒԽ նիստերն արձանագրվում են: Հարկ է նշել, որ ՈՒԽ-ն հաշվետվություն չի ներկայացնում: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ՈՒԽ-ի աշխատանքների իրազեկման մասին միջոցառումները սակավ են:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման արդյունքների վերաբերյալ ուսանողները հիմնականում իրազեկ չեն: Չնայած որ ՈԱԿ-ը հարցումների արդյունքները տրամադրում է ստորաբաժանումներին և կուրսղեկներին:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը դեռևս չի գնահատվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը ուսանողների ներգրավման, կրթական կարիքների բացահայտման և աջակցման ծառայությունները կազմակերպում է հստակ և կառուցվածքային մոդելով, որը վկայում է հաստատության շարունակական զարգացման և ուսանողակենտրոն մոտեցման մասին:

Խումբը դրական է գնահատում մասնագիտական կողմնորոշման միջոցառումները, որոնք նպաստում են նոր ուսանողների ներգրավմանը և քոլեջի հանրային ճանաչելիության բարձրացմանը: Քոլեջի պաշտոնական կայքում ամբողջական և մատչելի ընդունելության տեղեկատվության հրապարակումը բարձրացնում է դիմորդների իրազեկվածության մակարդակը, ինչը կարևոր է պահպանել՝ պարբերական թարմացումներով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացվում է համակարգված և բազմակողմանի մեխանիզմներով՝ ներառելով ներքին որակի ապահովման ենթակառույցի, կուրսղեկների ինստիտուտի և ՈՒԽ-ի ակտիվ մասնակցությունը, ինչը նպաստում է ուսանողների կարիքներին ժամանակին արձագանքելուն և կրթական միջավայրի որակի շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը գնահատում է նաև մաթեմատիկայի լրացուցիչ պարապմունքների անցկացումը «Սովորի՛ր, սովորեցրո՛ւ» խորագրով, ինչը նպաստում է ուսանողների և դասախոսների համագործակցության խորացմանը և ուսանողների գիտելիքների զարգացմանը: Ինչպես նաև կարևոր է ինտելեկտուալ մրցակցության միջավայրի առկայությունը, ինչը մոտիվացնում է ուսանողների ընդհանուր զարգացվածությունը:

Դրական է, որ քոլեջում իրականացվում են անգլերենի ոչ ֆորմալ դասընթացներ, որոնք ստեղծում են հավելյալ հնարավորություններ լեզվային կարողությունների զարգացման համար: Փորձագիտական խումբը, սակայն, կարևորում է այս գործընթացի համակարգումը՝ պատասխանատուների հստակ սահմանմամբ և ժամանակացույցի հաստատմամբ, ինչը կարող է նպաստել ուսանողների առավել ակտիվ ներգրավվածությանը միջազգային կրթական ծրագրերում:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ՈւԽ-ի կողմից իրականացվող տարաբնույթ միջոցառումները, որոնք նպաստում են ուսանողական կյանքի ակտիվացմանը և համագործակցության զարգացմանը: Միաժամանակ, հարկ է նշել, որ ՈւԽ-ի տարեկան հաշվետվությունների բացակայությունը կարող է սահմանափակել կառույցի գործունեության թափանցիկությունը և գործընթացների առավել արդյունավետության իրականացումը: Փորձագիտական խումբը, որպես հաշվետվողականության հնարավոր մոդել դիտարկում է ՈւԽ նախագահի, ՈւԽ հանձնաժողովների ղեկավարների հաշվետվողականությունը իրենց ընտրող ուսանողական համայնքի առջև (ժողովրդավարական մոդելով)՝ միաժամանակ ապահովելով հաշվետվությունների հասանելիություն համացանցային հարթակում, ինչն առավել կբարձրացնի գործունեության թափանցիկությունը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև կարիերային նպաստող միջոցառումների անցկացումն ու շրջանավարտների հետագծին հետևելուն միտված ուսումնասիրությունները, որոնք նպաստում են նաև ուսանողների աշխատանքային զբաղվածության բարձրացմանը:

Փորձագիտաական խումբը գտնում է, որ ուսանողների իրազեկվածության բարձրացումը կրթական, խորհրդատվական և օժանդակող ծառայությունների որակի գնահատման արդյունքների մասին, կարող է նպաստել նրանց՝ կրթական միջավայրի բարելավման գործընթացներին մասնակցության բարձրացմանը: Իրազեկման միջոցառումների ակտիվացումը և գնահատման մեխանիզմների համակարգված ներդրումը կբարձրացնեն ուսանողների մասնակցությունը կրթական ծառայությունների որակի մշտական բարելավման գործընթացին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը առկա են ուսանողների հավաքագրման և ընդունելության մեխանիզմեր, առկա են խորհրդատվությունների տրամադրման մեխանիզմներ, կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ, վարչական աշխատակազմը բաց է ուսանողների հարցերի և խնդիրների քննարկման համար, ՈւԽ-ն ակտիվորեն կազմակերպում է արտալսարանային միջոցառումներ, փորձագիտական խումբը գտնում է Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտմասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ ՄՈւՀ-ի 2023-2027 թթ.-ի ՌԾ-ի՝ Քոլեջն իր առջև նպատակադրել է ապահովելու ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է՝ մրցույթի արդյունքներով, իսկ աշխատանքի ընդունումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով: Մրցույթի ընթացքում տեղի է ունենում բանավոր հարցազրույց թեկնածուի հետ, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ հաղթող ճանաչված թեկնածուն համալրում է քոլեջի դասախոսական կազմը: Հարցատոմսերում առկա հարցերը վերաբերում են տվյալ մասնագիտական ոլորտին, չեն ներառում մեթոդական հարցեր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս Քոլեջի ամբիոնների 6 դասախոսներ գործատուներ են, ուսումնասիրություններից պարզ դարձավ նաև, որ Քոլեջը նպատակային կերպով կարևորում է սեփական շրջանավարտների ներգրավումը: Ներկայումս Քոլեջն ունի 2 շրջանավարտ-դասախոս:

Ըստ կրթական ծրագրերի դասախոսնփրին ներկայացվող պահանջները արտահայտված են ՊԿՉ-ներով: Քոլեջում դասավանդում են բարձրագույն կրթություն ունեցող 66 և միջին մասնագիտական կրթությամբ 1 դասախոս, ընդ որում, 14-ը՝ համատեղությամբ: Քոլեջում դասավանդողներից հինգն ունեն գիտական աստիճան, որոնցից երկուսը՝ նաև դոցենտի կոչում: Դասախոսական կազմի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը դասավանդում է նվազագույնը՝ 1 և առավելագույնը՝ 8 առարկա կամ մոդուլ:

Քոլեջում դասախոսական կազմի գնահատումն իրականացվում է երեք բաղադրիչով: Առաջին բաղադրիչը՝ մասնագիտական որակների համապատասխանության վերահսկում և մեթոդական աջակցություն, սահմանվում է ըստ ամբիոնների 2022 թ.-ին հաստատված կանոնակարգի և իրականացվում է հիմնականում դասալսումների միջոցով: Երկրորդ բաղադրիչը՝ դասավանդման որակի համապատասխանության վերահսկողություն, իրականացվում է որակի քաղաքականության շրջանակներում սովորողների կրթական կարիքների վերհանման և բավարարվածության մշտադիտարկումների միջոցով: Երրորդ բաղադրիչի՝ դասախոսի կողմից անցկացրած դասընթացի և կրթական միջավայրի, գնահատումն իրականացվում է ուսանողների կողմից դասախոսի գնահատմամբ և հնարավորություն է տալիս բացահայտելու դասախոսի կրթական գործունեության բարելավմանը խոչընդոտող գործոնները: Վերջիններիս արդյունքներն ամփոփվում են ամբիոններում: Հարցումների արդյունքում բացահայտվել են դասախոսների որակավորումների բարձրացման կարիքներ, իսկ առավելագույն միավորներ հավաքած դասախոսները ներկայացվում են տնօրենին՝ խրախուսման նպատակով: Այս մեխանիզմը գործում է 2024թ.-ից: Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ դասալսումների ձևաթերթերում ներկայացված են առաջարկություններ, սակայն ինչպես դասալսումների, այնպես էլ հարցումների արդյունքները համապարփակ վերլուծության չեն ենթարկվում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվում են փոխադարձ դասալսումներ ներքին լավ փորձը տարածելու, ինչպես նաև սկսնակ դասախոսներին ուղղորդելու նպատակով: Քոլեջը չունի դասալսումների ընթացակարգ, սակայն դասալսումներն իրականացնում է ըստ ժամանակացույցի: Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսների հետ ամբիոններում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում գործատուների կողմից իրականացվում են նաև վարպետաց դասեր:

Քոլեջում առկա չէ սկսնակ դասախոսների մենթորության ընթացակարգ և քաղաքականություն, սակայն ամբիոնի վարիչները հանդես են գալիս որպես մեթորներ՝ ուղղորդելու և ներգրավելու սկսնակ մասնագետներին:

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը 2024 թ.-ի նախահաշվով պլանավորել է աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը վերջին 5 տարիների կտրվածքով ֆինանսական միջոցներ է հատկացրել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար: Վերջին հինգ տարիներին մասնագիտական վերապատրաստումներին մասնակցել են քոլեջի 14 դասախոսներ և անցել են ատեստավորում (ՏՏ և համակարգչային ցանցեր), որի արդյունքում դասախոսների դրույքաչափը դեկտեմբերից բարձրացել է: Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են նաև ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայությանը՝ հարկ է նշել, որ վերջին երկու տարիներին քոլեջը համալրել է դասախոսական կազմը երիտասարդ կադրերով: Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 53 է: Կայունության հիմնական երաշխիքը քոլեջը դիտարկում է հիմնական աշխատողների բարձր տեսակարար կշիռը, ընդ որում, ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ քոլեջն ապահովված է համապատասխան դասախոսական կազմով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցներն իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը փորձում է ապահովել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը: Հարկ է նշել, որ քոլեջում սահմանված է տարբերակված աշխատավարձ՝ պայմանավորված համապատասխան որակավորումներով: Միաժամանակ տարբերակված է մասնագիտական մոդուլների մեկ ժամի արժեքը: ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը մասնակցում է պետական կրթական չափորոշիչների կազմմանը և վերանայմանը: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ուսումնաօժանդակ և վարչական կազմերի ներկայացուցիչների գործառույթները սահմանվում են պայմանագրերով և պաշտոնների նկարագրերով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը դասախոսական համակազմի ընտրությունն իրականացնում է մրցութային կարգով, ինչը ապահովում է թափանցիկ և մրցունակ համալրում: Միաժամանակ խումբը կարևորում է համապատասխան ներքին քաղաքականության և չափորոշիչների մշակման անհրաժեշտությունը, որոնք հնարավորություն կտան մրցույթների ընթացքում առավել համակարգված կերպով գնահատել թեկնածուների մասնագիտական հմտությունները, գործնական փորձը և բազմակողմանի կարողությունները: Սա կարող է նպաստել դասախոսական կազմի որակական մակարդակի շարունակական բարելավմանը:

Խումբը գնահատում է, որ Քոլեջը փորձել է ներգրավել պրակտիկ ոլորտի մասնագետներ՝ գործատուներ դասախոսների կարգավիճակով, ինչպես նաև բարձր է գնահատվում շրջանավարտ դասախոսների ներգրավումը, ինչը նպաստում է պրակտիկ գիտելիքների փոխանցման ամրապնդմանը:

Դասախոսների մասնագիտական որակավորումները համահունչ են դասավանդվող առարկաների պահանջներին, սակայն մի շարք դեպքերում մեկ դասախոսի կողմից մի քանի մոդուլի դասավանդումը կարող է առաջացնել կազմակերպչական ռիսկեր և անհրաժեշտություն՝ արդյունավետ բաշխման ու վերահսկողության համար:

Քոլեջում դասավանդման որակի գնահատումն իրականացվում է օրինաչափ կառուցված մեխանիզմներով՝ ընդգրկելով դասալսումների, ուսանողական հարցումների և կրթական կարիքների մշտադիտարկումների արդյունքների ամփոփում: Սակայն տվյալների համապարփակ վերլուծության բացակայությունը կրճատում է տվյալների նպատակային կիրառման արդյունավետությունը՝ բարելավման պլանավորման և իրականացման համատեքստում:

Փոխադարձ դասալսումների կիրառումը նպաստում է ներքին լավ փորձի տարածմանը և սկսնակ դասախոսների հմուտ կողմնորոշմանը: Այնուամենայնիվ, արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է սահմանել դասալսումների ընթացակարգ՝ կարևորելով համապարփակ վերլուծությունը: Ամբիոնի վարիչների կողմից սկսնակ դասախոսների մենթորությունը կարևոր աջակցության գործիք է, միևնույն ժամանակ մենթորության կարգի ներդրումը կնպաստի սկսնակ դասավանդողների համակարգված աջակցությանը, մասնագիտական զարգացմանն ու կրթական գործընթացում արագ ինտեգրմանը:

Վերջին հինգ տարիների ընթացքում դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների ֆինանսավորումն և դասախոսների մասնակցությունը վերապատրաստումներին ու ատեստավորումների գործընթացին կարևոր ձեռքբերում են, սակայն նշվում է, որ վերապատրաստումները դեռևս ամբողջությամբ չեն արտացոլում դասախոսների իրական կարիքները, ինչը կարող է սահմանափակել նրանց շարունակական մասնագիտական զարգացման հնարավորությունները:

Դասախոսական կազմի համալրումը երիտասարդ կադրերով և շրջանավարտների ներգրավումը որպես կադրային ռեզերվ կարևոր գործոններ են՝ աշխատակազմի երիտասարդացման և կայունության ապահովման առումով: Այս գործընթացները կարևոր են, քանի որ դասախոսական կազմի միջին տարիքը ռիսկեր է ստեղծում սերնդափոխության տեսանկյունից:

Տարբերակված աշխատավարձի համակարգի կիրարկումը՝ հիմնված դասախոսների որակավորմանն ու մոդուլների բարդությանը, խթանում է աշխատակիցների մոտիվացիան և բարձրացնում գործառնական արդյունավետությունը:

Ընդհանուր առմամբ, Քոլեջն ապահովված է համապատասխան որակավորումներով դասախոսական և ուսումնաօժանդակ կազմով, սակայն առկա են շարունակական զարգացման հնարավորություններ՝ կրթական գործունեության և մշտական զարգացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջը կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի դասախոսական կազմի ընտրության քաղաքականություն, ներգրավում է պրակտիկ ոլորտի մասնագետների և շրջանավարտ դասախոսների, իրականացնում է ներքին փոխադարձ դասալսումներ փորձի տարածման և սկսնակների աջակցման նպատակով, ֆինանսական միջոցներ է տրամադրում դասախոսների մասնագիտական վերապատրաստումներին, ձևավորում է կադրային ռեզերվ՝ ներառյալ երիտասարդ մասնագետների ներգրավմամբ, կիրառում է տարբերակված աշխատավարձի համակարգ՝ հիմնված մասնագիտական որակավորման վրա, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը համապատասխանում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Հետազոտական աշխատանքների իրականացումը ըստ 2023-2027 թթ.-ի ՌԾ-ի ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից է դիտարկվում: ՌԾ-ի նպատակ են սահմանել նաև կուրսային և դիպլոմային նախագծերի հիմքում դնել ուսանողների ստեղծագործական և նորարարական միտքը խրախուսող պահանջներ և մեխանիզմներ՝ խթանելով հետազոտական և նորարարական մոտեցումները դասախոսների և ուսանողների շրջանում:

Քոլեջը ստեղծել է համապատասխան փաստաթղթային հենք՝ ուղղված հետազոտական աշխատանքների իրականացման գործընթացների կարգավորմանը: Հետազոտական աշխատանքների կատարման քաղաքականություն և ընթացակարգ փաստաթուղթը կարգավորում է աշխատանքներին ներկայացվող ընդհանուր պահանջները, թեմայի ընտրության, հաստատման ընթացակարգն ու ժամկետները, ինչպես նաև՝ կատարման, ստուգման և պաշտպանության ընթացակարգը: Քոլեջը կարևորում է բոլոր ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում և որպես պարտադիր բաղադրիչ է սահմանել կուրսային աշխատանքները: Կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման գործընթացները ևս կարգավորվում են ըստ համապատասխան կարգի: Քոլեջը կարևորում է հետազոտական աշխատանքների շարունակականությունը և կուրսային աշխատանքները զարգացնելով կարող են վերածվել դիպլոմային աշխատանքների, որոնց հետ կապված գործընթացները ևս կարգավորվում են ինստիտուցիոնալ մակարդակում: Քոլեջը, նկատի ունենալով կրթական ծրագրերի առանձնահատկությունները, մշակել և ներդրել է կուրսային և դիպլոմային աշխատանքների մեթոդական ուղեցույցներ, կատարման ձևաչափեր, գնահատման չափանիշներ և ձևաթղթեր, ղեկավարի և գրախոսի կարծիքների ձևաթղթեր՝ ըստ կրթական ծրագրերի: Հարկ է նշել, որ դիպլոմային աշխատանքների կատարումը թույլատրվում է այն ուսանողներին, ովքեր հաղթահարում են սահմանված միավորային շեմը, առանձին դեպքերում՝ հատուկ թույլտվությամբ՝ այն ուսանողներին, ովքեր կկարողանան ներկայացնել անհրաժեշտ հիմնավորումներ: Սահմանված միավորային շեմը տարբեր կրթական ծրագրերի և տարբեր տարիների համար փոփոխական է:

Քոլեջում հետազոտական աշխատանքներ իրականացվում են ըստ բոլոր կրթական ծրագրերի ուղղությունների և առկա են հետազոտական աշխատանքների հաստատված ցանկեր: Անդրադառնալով հետազոտական աշխատանքների թեմաներին՝ հարկ է նշել, որ քոլեջում կարևորվում է երեք մոտեցում՝ աշխատաշուկայում գործատուի համար անհրաժեշտ կիրառելի արդյունք, քոլեջում (այդ թվում՝ կրթական գործընթացում) կիրառելի արդյունք և ուսանողի նախասիրություն: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջում կիրառելի արդյունքը ապահովող հետազոտական աշխատանքների թեմաների ձևավորման համար կարիքների գնահատում չի իրականացվում:

Հարկ է նշել նաև, որ ուսանողների հետազոտական աշխատանքների արդիականությունն ապահովելու նպատակով մասնագիտական ամբիոններն ամեն տարի վերանայում են դիպլոմային աշխատանքների թեմաները: Դիպլոմային աշխատանքների թեմաները ձևավորվում են հետազոտական նախագծի ղեկավարի և ուսանողների համատեղ քննարկման արդյունքում՝ ամբիոնի կողմից ներկայացվում է թեմաների ցանկ, ինչպես նաև ուսանողը ինքը կարող է առաջարկել իր նախընտրած թեման: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դիպլոմային աշխատանքների թեմաները քննարկվում են նաև գործատուների հետ՝ համապատասխանեցնելով գործատու-կազմակերպությունների առանձնահատկություններին:

Մասնավորապես կուրսային աշխատանքներ են իրականացվել հետևյալ թեմաներով. «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր» կրթական ծրագրի շրջանակում՝ Ավիացիոն ծառայությունների լոկալ հաշվողական ցանցի կազմակերպում, Սպասարկման կենտրոնի լոկալ հաշվողական ցանցի կազմակերպում, Համալսարանի լոկալ հաշվողական ցանցի կազմակերպում, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրի շրջանակում՝ Restaurant Booking կայք, Խաղ՝ ping pong, MicroCenter վիդեոկարտաների վերանորոգմանն վաճառքի հարթակ, Տեքստը գաղտնագրող հավելված, «Մեխատրոնիկա» կրթական ծրագրի շրջանակում՝ Տարաների շշալցման ավտոմատացված համակարգի նախագծում, «Ռոբոտի և ռոբոտոտեխնիկական համակարգերի նախագծում» կրթական ծրագրի շրջանակում՝ Անօդաչու-տանկ համակցված համակարգի մշակում, Ընդունիչ հաղորդիչ անօդաչու թռչող սարքի մշակում:

Դիպլոմային աշխատանքներ են իրականացվել հետևյալ թեմաներով. «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր» ծրագրի շրջանակում ուսումնասիրվել են, մասնավորապես, «Վիրտուալ համակարգերի միջավայրում ցանցի կառավարում դոմենային ծառայությունների կիրառմամբ» և այլ առնչվող թեմաներ։ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ծրագրի շրջանակում կատարվել են աշխատանքներ «Ամպային տեխնոլոգիաների և API Gateway-ի մշակման» թեմայով։ «Մեխատրոնիկա» ծրագրի շրջանակում իրականացվել են դիպլոմային աշխատանքներ՝ «Հեռակառավարվող լազերային հաստոցի», «Բազմաֆունկցիոնալ ռոբոտ-մանիպուլյատորի մշակման» ուղղությամբ և այլն։

Անդրադառնալով կուրսային և դիպլոմային աշխատանքների բովանդակային կողմին, պետք է նշել, որ փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պահպանված են սահմանված պահանջները, ինչպես նաև կարևորվում են ուսանողների տեսական ուսումնասիրությունները, ինքնուրույն հետազոտական-վերլուծական մասը, կիրառական արդյունքի ապահովումը և ինքնուրույն եզրակացությունն ու աղբյուրների հղումները։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դիպլոմային աշխատանքներում առկա է հետազոտական-վերլուծական բաղադրիչը, հստակեցված է աշխատանքի նպատակը, բովանդակությունը, համապատասխան սխեմաները, աշխատանքի վերլուծությունը, եզրակացություն։ Ուսումնասիրությունների արդյունքում հարկ է նշել նաև այն, որ դիպլոմային նախագծերը գրախոսվում են գործատուի կողմից՝ ներկայացնելով երաշխավորություն համապատասխան որակավորմանը, իսկ դիպլոմային նախագծերի ղեկավարի կողմից տրվում է եզրակացություն դիպլոմային նախագծի որակի և դիպլոմանտին մասնագիտական որակավորում շնորհելու վերաբերյալ։

2023-2024 ուսումնական տարում որոշ մասնագիտությունների շրջանակներում ներդրվել է «Նախագծային քննություն» փորձնական գաղափարը, որն իրականացվում է 3-րդ կուրսում: Առանձին դեպքերում հետազոտական աշխատանքների շարունակականության առաջին փուլը ձևավորվում է այս աշխատանքների շրջանակներում: Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, Համակարգչային գրաֆիկա մասնագիտությունների ուսանողների կողմից ստեղծվել է քոլեջի կայքէջը և լոգոն: «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր» կրթական ծրագրի շրջանակում ստեղծել են կայք նախագծային աշխատանքների իրականացման համար և հասանելիություն տվել ուսանողներին։

Ուսումնասիրություններից և այցից պարզ դարձավ, որ առկա են անհատական գործնական աշխատանքներ, առաջադրանքներ և ռեֆերատներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում: Մասնավորապես՝ Մեխատրոնիկա կրթական ծրագրի շրջանաակներում դիտարկում են մոդելավորման տարբեր խնդիրներ, կիրառելով նաև SS արդի միջոցներ։ Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները ստանում են անհատական հանձնարարություններ տարբեր լոգոների և բուկլետների պատրաստման, որևէ ծրագրավորման լեզվով փոքրիկ նախագծեր կազմելու։ Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր մասնագիտության շրջանակում իրականացնում են ռեֆերատներ, օրինակ՝ Տպիչների տիպերի օգտագործումը ըստ անհրաժեշտության և համեմատական վերլուծությունը և այլն։ Վերլուծական կարողության զարգացումը կարևորվում է նաև գնահատման ժամանակ, այդ թվում՝ ամփոփիչ ատեստավորման; Միաժամանակ, բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում Ձեռներեցություն մոդուլի շրջանակում ուսանողական խմբերը կազմում են փոքրիկ բիզնես պլան՝ հիմնված նաև շուկայի ուսումնասիրության վրա, այնուհետև արդյունքները ներկայացվում են մրցույթում, իսկ լավագույնները՝ խրախուսվում:

Նշենք, որ ուսանողների կողմից իրականացված հետազոտական մի շարք աշխատանքներ գործածվում են կրթական գործընթացում, իսկ որոշ արդյունքներ նպաստել են քոլեջի զարգացմանը (կայքի, լոգոյի ստեղծում):

Հարկ է նշել, որ որոշ կրթական ծրագրերով դիպլոմային աշխատանքների իրականացումը պահանջում է որոշակի ֆինանսական ծախս՝ պայմանավորված նյութերի ձեռքբերմամբ (մասնավորաբար՝ Մեխատրոնիկա մասնագիտության դեպքում): Փորձագիտական այցից պարզվեց, որ կիրառելի է եղել 3 մոտեցում՝ գործատուի ֆինանսավորում, ուսանողի ինքնուրույն ֆինանսավորում և ամբիոնի վարիչի կողմից ֆինանսավորում, աջակցություն: Յուրաքանչյուր պարագայում արդյունքը պատկանել է ֆինանսավորողին, սակայն մի շարք դեպքերում ուսանողները պատրաստակամորեն թողել են արդյունքը քոլեջում: Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջի կողմից ֆինանսավորման որոշակի ձևավորված քաղաքականություն դեռևս առկա չէ: Միաժամանակ պարզվեց, որ առանձին դեպքերում, պայմանավորված սեփականության իրավունքով, հետազոտական աշխատանքի արդյունքը լիարժեք դիտարկելու հնարավորություն քոլեջը չի ունենում:

Քոլեջը կարևորել է ակադեմիական ազնվությանն առնչվող խնդիրները և հատուկ ուշադրություն է դարձնում՝ բացառելու գրագողության դեպքերը:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենց մասնագիտական գործունեության արդյունքում մշակել և տպագրել են ավելի քան 60 մեթոդական ձեռնարկ, 7 գիրք, որոնք կիրառվում են ոչ միայն քոլեջի ուսումնական գործընթացում, այլև՝ ՀՀ տարբեր ուսումնական հաստատություններում: Ընդ որում, այդպիսի աշխատանքներ առկա են բոլոր կրթական ծրագրերի ուղղություններով, դրանք որպես աղբյուրներ նշված են կրթական ծրագրերի պլաններում և կիրառվում են ուսումնական գործընթացում: Դասախոսներն առանձին դեպքերում սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրում են միջազգային փորձը: Սակայն հարկ է նշել, որ քոլեջում առկա չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության, միջազգային փորձի ուսումնասիրման խթանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Նշենք, որ քոլեջի բյուջեով հետազոտության ուղղությամբ առանձին ֆինասական հատկացումներ չի իրականացվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում հետազոտական գործունեությունը ընդգրկված է ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների մեջ և ամրագրված է համապատասխան փաստաթղթային հիմքով՝ ներառյալ հետազոտական աշխատանքների իրականացման, գնահատման և պաշտպանության ընթացակարգերը:

Խումբը նշում է, որ ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում պարտադիր է, կազմակերպված են կուրսային և դիպլոմային նախագծերի արդյունավետ մեխանիզմներ, որոնք խթանում են ստեղծագործական և նորարարական մոտեցումները:

Ներկայացվում է հետազոտական աշխատանքների թեմաների ձևավորման բազմաբնույթ մոտեցում՝ աշխատաշուկայի պահանջներից մինչև ուսանողների նախասիրությունները, սակայն բացակայում է այդ թեմաների համակարգված կարիքների գնահատման մեխանիզմը, ինչը կարող է սահմանափակել հետազոտական արդյունքների կիրառելիությամբ քոլեջի զարգացման հնարավորությունները:

Փորձագիտական ուսումնասիրությունները փաստում են, որ ուսանողների հետազոտական աշխատանքների բովանդակությունը համապատասխանում է կրթական չափանիշներին՝ ընդգրկելով տեսական, վերլուծական և կիրառական բաղադրիչներ, իսկ դիպլոմային նախագծերը ստանում են ինչպես գործատուների, այնպես էլ գիտահետազոտական ղեկավարների գնահատականներ:

Դրական է, որ դիպլոմային աշխատանքների ֆինանսավորման տարբեր մոդելներ են կիրառվել, սա հանգեցրել է ինչպես կրթական գործընթացում, այնպես էլ աշխատաշուկայում

կիրառվող արդյունքների ստացման: Սակայն ծախսատար աշխատանքների պարագայում փորձագիտական խումբը կարևորում է համապատասխան ինստիտուցիոնալ մոտեցումների ներդրումը, որի շրջանակներում կարող են սահմանվել տարբեր մոդելներ՝ քոլեջի համաֆինանսավորում, արտաքին գործընկերների ներգրավում, մրցույթային հատկացումներ կամ սոցիալական կարիքների հիման վրա ֆինանսական աջակցության տրամադրում: Այսպիսով ինստիտուցիոնալ կերպով կնվազեցվեն ուսանողների անհավասար հնարավորությունների հավանական դրսևորումները՝ պայմանավորված ֆինանսական սահմանափակումներով:

Միաժամանակ, սեփականության իրավունքի հարցերը կարող են խոչընդոտել հետազոտական արդյունքների լիարժեք օգտագործումը քոլեջի կողմից: Քոլեջը կարող է դիտարկել ուսանողների և քոլեջի միջև համաձայնագրեր կնքելու հնարավորությունը, հատկապես եթե ֆինանսավորումն իրականացվում է քոլեջի կամ երրորդ կողմի կողմից, ինչը կկարգավորի քոլեջի կողմից արդյունքները պահպանելու և կիրառելու իրավունքները:

Խումբը բարձր է գնահատում նորարարական մոտեցումները՝ օրինակ, նախագծային քննությունների և թվային հարթակների ներդրումը, որոնք խթանում են հետազոտական գործունեության շարունակականությունը և կրթական գործընթացի արդիականացումը:

Ակադեմիական ազնվության ապահովման ուղղությամբ իրականացվում են համակարգված քայլեր՝ գրագողության դեմ պայքարում, իսկ դասախոսների կողմից մշակված մեթոդական ձեռնարկներն ու գրքերը լայնորեն կիրառվում են ոչ միայն քոլեջում, այլ նաև ՀՀ այլ կրթօջախներում: Վերջինս նպաստում է հետազոտական հենքով արդիականացնելու դասավանդման բովանդակությունը:

Փորձագիտական խումբը ընդգծում է հետազոտական և միջազգային փորձի ուսումնասիրման խթանման քաղաքականության ու ընթացակարգերի անհրաժեշտությունը՝ հետազոտական գործընթացների առավել արդյունավետ և նպատակային կազմակերպման, ինչպես նաև դասավանդողների՝ այդ գործընթացներում առավել լայն ներգրավման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի հիմնարար փաստաթղթերում հետազոտության իրականացումը դիտարկվում է առաջնահերթություն, ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում պարտադիր բնույթ է կրում, ապահովվում է ակադեմիական ազնվության վերահսկողությունը, դասախոսների կողմից մշակվում և կիրառվում են ուսումնական նյութեր, հետազոտական աշխատանքներ իրականացվում են ըստ բոլոր կրթական ծրագրերի ուղղությունների, ուշադրություն է դարձվում հետազոտական աշխատանքների արդյունքների կիրառելիությանը, նախորդ հավատարմագրումից հետո որդեգրել է հետազոտական աշխատանքների կատարման քաղաքականություն, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի 2023-2027 թթ.-ի ՌԾ-ում որպես հիմնական նպատակ է սահմանվել՝ արդյունավետ կրթական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և ռեսուրսների մշտադիտարկում և բարելավում:

Քոլեջն ունի երկու մասնաշենք 5305,5 մ² ընդհանուր մակերեսով, որից 3386,9 մ² զբաղեցնում է առաջին մասնաշենքը, իսկ 1918,4 մ²՝ երկրորդ մասնաշենքը: Մեկ ուսանողին բաժին ընկնող լսարանային մակերեսը կազմում է շուրջ 1.5 մ²: Քոլեջն ունի 34 լսարան տեսական և գործնական պարապմունքների համար՝ նախատեսված 20-25 ուսանողի համար, 14 համակարգչային լսարան, սխեմատեխնիկայի և միկրոպրոցեսորային տեխնիկայի (2 հատ), մեխատրոնիկայի, ռոբոտոտեխնիկայի, էլեկտրատեխնիկայի և չափման սարքերի, մոնտաժային և քիմիայի լաբորատորիաներ, զինվորական պատրաստվածության, ինժեներական գրաֆիկայի և դիպլոմային նախագծման կաբինետներ, մեխանիկական արհեստանոց: Հարկ է նշել, որ լաբորատորիաների գույքի վերահսկման և տեխնիկական սպասարկման աշխատանքներով զբաղվում են համապատասխան լաբորանտները:

Յուրաքանչյուր համակարգչային լսարանում առկա է 14-16 համակարգիչ, որոնք մշտապես ենթարկվում են տեխնիկական վերազինման և ծրագրային համալրման: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջում աշխատակիցների կողմից օգտագործվող համակարգիչների թիվը 17-ն է, իսկ ուսանողների կողմից օգտագործվող համակարգիչների թիվը 210:

Քոլեջի գրադարանն ունի շուրջ 4819 միավոր գրականություն, որից 904-ը մասնագիտական, 1802-ը հանրակրթական: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունից 3855-ը հայերեն է, իսկ 963-ը՝ օտար լեզվով: Գրադարանի որոշ գրքեր՝ հիմնականում մասնագիտական, թվայնացվել և տեղադրվել են քոլեջի կայքէջում: Վերջին երեք տարիների ընթացքում գրադարանի հին և կիրառություն չունեցող գրականությունը նվիրաբերել են այլ հաստատությունների կամ հանձնել վերամշակման: Նույն ժամանակահատվածում նաև մասնագիտական գրականության շուրջ 40%-ը թարմացվել է:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագիտական և նախաավարտական պրակտիկաների իրականացման համար քոլեջն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների (մասնավորապես՝ ԿՏԱԿ, Պիկսարտ Ակադեմիա, Հայփոստ ՓԲԸ, «Գլոբալ ԱյԹԻԱ» ՍՊԸ, «ԷՍ-ԷՍ Կոմպ» և այլն) ռեսուրսները:

Քոլեջն ունի 13 պրոյեկտոր, որոնցից 6-ը շարժական են, առկա է նաև 4 հեռուստացույց-պրոյեկտոր: 2020 թ.-ին Microsoft ինովացիոն կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում տեխնիկապես վերազինվել է 2 համակարգչային լսարան: Վերջին երեք տարիների ընթացքում քոլեջը ձեռք է բերել նաև սարքավորումներ լաբորատորիաների համար՝ վոլտմետր, ինդուկտիվությունը չափելու սարքավորումներ, գեներատորներ: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն իրականացրել է նաև լսարանային ֆոնդի վերանորոգումներ, որոշ բարելավումներ: 2022 թ.-ին իրականացվել է գրադարանի և ընթերցասրահի հիմնանորոգում, գրադարան-ընթերցասրահում առկա է համակարգիչներ և պրոյեկտոր: Վերանորոգվել են նաև սանհանգույցները, բարելավվել է ջեռուցման համակարգը, տեղադրվել է հակահրդեհային համակարգ, վերանորոգվել և վերազինվել են համակարգչային լաբորատորիաները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ռեսուրսները հասանելի են կրթական գործընթացների կազմակերպման համար:

Քոլեջի 2023-2027 թթ.-ի ՌԾ-ն չունի ռազմավարական ուղղություններով ֆինանսական պլանավորում: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը նախորդ հավատարմագրումից հետո քայլեր չի ձեռնարկել ֆինանսական հոսքերի բազմազանեցման համար: Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2024թ.-ի կտրվածքով ընդհանուր ծախսերի 85%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին: Ըստ 2024թ.-ի ֆինանսական հաշվետվության՝ ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատակիցների աշխատավարձերը (շուրջ 85%), կրթաթոշակներ (շուրջ 5%), ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսեր (շուրջ 7 %) և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր քոլեջում առկա չեն: Ըստ 2024թ.-ի ֆինանսական հաշվետվության քոլեջի բյուջեի եկամուտների շուրջ 63%-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, շուրջ 37%-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը: Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջը ներկայումս չի իրականացնում կարճաժամկետ դասընթացներ կրթական ծրագրերի ուղղություններին համապատասխան:

Քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել և հստակ չէ, թե ուսանողների ո՞ր քանակն է ապահովում ինքնաճախսածածկում: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը վերջին տարիներին իրականացրել է ուսման վարձի փոփոխություն:

Անդրադառնալով փաստաթղթաշրջանառությանը փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է Mulberry համակարգով: Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև քոլեջի համապատասխան տարածքում հայտարարություններ փակցնելու միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսների մի մասն ուսանողների հետ աշխատում են նաև Classroom հարթակի միջոցով: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ:

Քոլեջում առկա է հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ: Քոլեջն ունի պահակակետ, մասնաշենքերի մուտքերն և միջանցքները տեսահսկվում են 19 տեսանկարահանվող սարքավորումների միջոցով: Բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ, որոնք թարմացվել են 2025 թ.-ին: Առկա են պայմաններ ուսանողների և աշխատակիցների արտակարգ իրավիճակներում արագ և անվնաս տարհանելու համար: Միաժամանակ կարևորվում և հատուկ ուշադրություն է հատկացվում լաբորատորիաներում աշխատանքների անվտանգ կազմակերպմանը: Քոլեջն ունի բուժկետ, ուսանողներն ու դասախոսները ընդհանուր առմամբ գոհ են բուժկետի ծառայություններից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանող: Բացակայում են թեքահարթակները: Որպես ապաստարան հատկացված տարածքի մի մասը վերանորգվել և օգտագործվում է որպես լսարաններ, իսկ մյուս մասը ծառայում է որպես պահեստ:

Վերջին երեք տարիներին քոլեջն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, որոնց արդյունքներով ուսանողների՝ ռեսուրսներից բավարարվածության միջին ցուցանիշը կազմում է շուրջ 40-45%, իսկ դասախոսներինը՝ 50-55%: Սակայն հարկ է նշել, որ հարցումներին շահակիցների մասնակցության ցուցանիշները ցածր է:

Շահակիցների հետ հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ նրանք կարևորում են նաև ճաշարանի անհրաժեշտությունը, սակայն քոլեջում դեռևս ճաշարան առկա չէ: Հարցումների ժամանակ նշված խնդիրը վեր հանվել և քննարկվել է համապատասխան օղակների հետ: Մասնավորաբար, հարցումների արդյունքում բացահայտված խնդիրների արդյունքում ամբիոններին տրամադրվել են տպիչներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն առաջնահերթություն է տալիս արդյունավետ կրթական միջավայրի ստեղծմանը՝ հետամուտ լինելով անհրաժեշտ ենթակառուցվածքների և ռեսուրսների մշտադիտարկմանը և բարելավմանը: Քոլեջը ապահովում է բավարար տարածք, անհրաժեշտ քանակի լսարաններ և լաբորատորիաներ, որոնք հնարավորություն են տալիս կազմակերպել և իրականացնել կրթական գործընթացը արդյունավետորեն: Համակարգչային լաբորատորիաների, սխեմատեխնիկայի և միկրոպրոցեսորային տեխնիկայի, մեխատրոնիկայի, ռոբոտոտեխնիկայի, էլեկտրատեխնիկայի և չափման սարքերի լաբորատորիաների առկայությունը նպաստում է կրթական ծրագրերի վերջնարդյունքների իրացմանը, և կարևոր է այդ լաբորատորիաների բազայի պարբերական

արդիականացումը ժամանակակից պահանջներին համապատասխան: Դրական է նաև, որ քոլեջը կարողանում է արդյունավետորեն կիրառել գործընկերների ռեսուրսները կրթական կարիքների նպատակով:

Դրական է գնահատվում նաև վերջին երեք տարիների ընթացքում գրադարանի հիմնանորոգումը, լաբորատոր տեխնիկայի և լսարանային ֆոնդի վերազինումը: Գրադարանի թվայնացման և գրքերի պարբերական թարմացման գործընթացները հնարավորություն են ստեղծում էապես բարձրացնելու կրթական ծառայությունների որակը և համապատասխանելու ժամանակակից կրթական պահանջներին:

Ֆինանսական հոսքերի կառավարման համատեքստում կարևոր է ֆինանսական պլանավորման իրականացումը՝ հիմնված գործող ռազմավարական ծրագրի նպատակների վրա, ինչպես նաև կրթական ծրագրերի ինքնաձախսածածկման վերլուծությունների կատարումը, նոր, արդի պահանջներին համահունչ կարճաժամկետ ծրագրերի ներդրումը և դրամաշնորհային ծրագրերում ակտիվ մասնակցությունը, որոնք կնպաստեն ֆինանսական հոսքերի բազմաղբյուր, ճկուն և կայուն զարգացման ապահովմանը:

Փաստաթղթաշրջանառության ոլորտում կարևոր է միասնական էլեկտրոնային համակարգի ներդրումը, որը կբարելավի կառավարման արդյունավետությունը և տվյալների անվտանգ պահպանումը:

Առողջապահական և անվտանգության պահպանման ծառայությունների կայուն գործունեությունը խթանում է անվտանգ կրթական միջավայրի ապահովումը, իսկ լաբորատորիաներում անվտանգության կանոնների պահպանման կարևորումը նպաստում է ուսանողների և աշխատակիցների անվտանգությանը:

Միաժամանակ, կարևոր կլինի բարելավել հարցումների մեթոդաբանությունը և ընդլայնել շահակիցների ներգրավվածությունը հարցումների ընթացքում, ինչը հնարավորություն կընձեռի ավելի ճկուն արձագանքել շահակիցների կարիքներին և մասնագիտական պահանջների փոփոխություններին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի ուսումնական միջավայրը նպաստում է կրթական ծրագրերի իրականացմանը, կատարվել է լաբորատոր բազայի վերազինում, վերանորոգման աշխատանքներ, թարմացվել է մասնագիտական գրականությունը, առկա է ապահով և անվտանգ միջավայր կրթական գործընթացն իրականացնելու համար, ներդրվել են ռեսուրսներից բավարարվածության գնահատման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵԻՊՔ-ի համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Քոլեջում գործում է հաշվետվողականության ներքնից վերև համակարգ: Քոլեջի ստորաբաժանումները տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունը քոլեջի կազմակերպական կառուցվածքով նախատեսված իրենց ղեկավարին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում 2022թ.-ից ներդրվել է հաշվետվությունների ներկայացման միասնական ձևաչափ, և ստորաբաժանումների հաշվետվությունները հիմնականում կազմված են ըստ այդ

ձևաչափի: Հաշվետվություններում ներկայացվում են կատարված աշխատանքներն՝ ըստ ՌԾ-ի նպատակների ու խնդիրների, նաև՝ պլանավորմամբ նախատեսված արդյունքները, ինչպես նաև որոշ դեպքերում՝ համեմատական վերլուծություն և առաջարկություններ: Բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունները պարունակում է վերլուծական բաղադրիչ, օրինակ՝ ուսումնական մասը վերլուծել է ըստ վերջին երեք տարիների ուսանողների քանակական և որակական առաջադիմությունը, բացակայությունների շարժը, պրակտիկայի վարիչի, ամբիոնների վարիչների հաշվետվություններում համեմատական վերլուծություն է կատարվել նախորդ տարիներին արձանագրված խնդիրների ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ հավաքական տեղեկատվության և արդյունքների վերլուծության հիման վրա յուրաքանչյուր տարի տնօրենի կողմից կազմվում և կառավարման խորհրդին է ներկայացվում հաշվետվություն՝ տարեկան գործունեության և ռազմավարական ծրագրի կատարողականի վերաբերյալ, որը քոլեջի գործունեության մասին հիմնական հաշվետու փաստաթուղթն է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տնօրենի տարեկան հաշվետվությունը քննարկվում է Քոլեջի կառավարման խորհրդում և ներկայացվում՝ Լիազոր մարմին:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տնօրենի հաշվետվություններն ունեն որոշ վերլուծական հիմք: Տնօրենի հաշվետվությունը ներկայացված է ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշների, որտեղ ըստ չափանիշի նշված է նպատակը և նպատակի իրագործման խնդիրները, իրականացված քայլերը և կատարողականի վերջնարդյունքները:

Քոլեջը ունի տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող հարթակ՝ պաշտոնական կայքէջ, որտեղ տեղեկատվությունը միայն հայերեն է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի նոր կայքէջը գործարկվել է 2023 թ.-ին, քանի որ նախորդ էջը ունեցել է տեխնիկական խնդիր և դադարել է գործել: Կայքէջում առկա է տեղեկատվություն քոլեջին վերաբերվող կարգերի, մասնագիտությունների, ընդունելության մասին, առկա է նաև թվայնացված գրադարան:

Քոլեջը հիմնականում ապահովում է գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ նաև օգտագործելով Ֆեյսբուք սոցիալական ցանցը, առկա է թարմացվող տեղեկատվություն հանդիպումների, միջոցառումների մասին, ինչպես նաև համագործակցությունների, գրքի տոնի, տարբեր մրցույթների վերաբերյալ տեղեկատվություն: Քոլեջի ֆեյսբուքյան էջն ունի 8500-ից ավել հետևորդ:

Հասարակության հետ հետադարձ կապի հաստատման միջոցների ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ: 2021 թ.-ին մշակվել և ներդրվել է «Հասարակության հետ հետադարձ կապի քաղաքականություն և ընթացակարգ» հիմնարար փաստաթուղթը, որի հիմնական նպատակն է ապահովել ու զարգացնել կայուն կապ հասարակության հետ: Հասարակության հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմներ են քոլեջում կազմակերպվող միջոցառումները, բաց դռների օրերը, քոլեջի կողմից կազմակերպվող այցերը հանրակրթական դպրոցներ և այլն:

Հասարակության հետ հետադարձ կապ հաստատելու և հաշվետվողականություն ապահովող միջոցներ են ֆեյսբուքյան էջը և կայքէջը, որոնց միջոցով լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները: Կայքէջում առկա են 2022-2023 ուստարվա հարցումների արդյունքների հրապարակումներ, տնօրենի՝ 2023-2024 ուսումնական տարվա հաշվետվությունը, քոլեջի ինքնավերլուծությունը, նորմատիվ իրավական ակտեր, կարգեր և ընթացակարգեր, սակայն քոլեջի ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության և կառավարման մարմինների որոշումների հրապարակում չի իրականացվում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի

ֆեյսբուքյան էջի հաղորդագրության հարթակներով հիմնականում դիմում են ընդունելության հետ կապված հարցերով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի կողմից կազմակերպվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ: Մասնավորապես՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության նախաձեռնությամբ քոլեջում աշխատանքներ են իրականացվելու՝ պաշտպանական ոլորտի նոր տեխնոլագիաների մշակման գործում քոլեջի ուսանողների ներգրավվածությունն ապահովելու ուղղությամբ: «Գլոբալ Այ Թի» ՍՊԸ-ի հետ համագործակցության շրջանակներում քոլեջում կազմակերպվում են դասընթացներ զորակոչային տարիքի ուսանողների ՊՆ համապատասխան ստորաբաժանումներում ծառայության անցնելու համար: Քոլեջն իրականացրել է կարճաժամկետ վերապատրաստման ծրագրեր՝ Համակարգչային գործավարություն, Համակարգչային դիզայն, Տվյալների հենքերի կառավարում, Ցանցերի կառավարում, Համակարգիչների և ցանցերի սպասարկում և վերանորոգում, Կիբեռանվտանգություն ուղղություններով: Սակայն վերջին 2 տարիների ընթացքում մասնակիցների քանակը նվազել է, և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս տարի քոլեջում կարճաժամկետ դասընթացներ այլևս չեն իրականացվել: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջի, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի» և «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ընկերության միջև ստորագրվել է եռակողմ հուշագիր, որի նպատակն է քոլեջի հիմքի վրա ստեղծել Տեխնոլոգիաների առցանց ակադեմիա, որտեղ կներդրվի համապատասխան ծրագիր՝ կիբերանվտանգության ուղղությամբ: Սակայն այս ուղղությամբ դեռևս հստակ աշխատանքներ չեն ձեռնարկվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում ներդրվել է հաշվետվությունների միասնական ձևաչափ, գործում է հստակ կառուցվածքային հաշվետվողականության համակարգ՝ ներքնից վերև շղթայական կապով: Կան հաշվետվություններ տնօրենի և բոլոր ստորաբաժանումների կողմից, որոնք նպաստում են կառավարման գործընթացների թափանցիկությանը և վերահսկելիությանը: Լիազոր մարմնին ներկայացվող հաշվետվությունների միջոցով ապահովվում է նաև հաշվետվողականությունը պետության առջև: Այս մոտեցումը նպաստում է կառավարման արդյունավետությանը, հստակեցնում պատասխանատվության շրջանակները և ապահովում իրականացվող գործունեության մշտադիտարկումը: Հաշվետվություններում ներառված վերլուծական բաղադրիչը նպաստել է կառավարման գործընթացների բարելավմանը:

Քոլեջն ունի տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող հարթակ՝ պաշտոնական կայքէջ, սակայն կայքէջն ունի բարելավման հնարավորություններ: Տեղեկատվությունը հասանելի է միայն հայերեն լեզվով, ինչը կարող է սահմանափակել միջազգային տեսանելիությունը: Կայքէջում ներկայացված փաստաթղթերի մասշտաբը և քոլեջում տեղի ունեցող իրադարձությունների լուսաբանումը պարբերական չեն, ինչը սահմանափակում է արտաքին շահակիցների լիարժեք իրազեկումը: Տեղեկատվության այդ ոլորտում կատարելագործումը կնպաստի քոլեջի գործունեության թափանցիկության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ հասարակության հետ կապը իրականացվում է նաև ֆեյսբուքյան էջի միջոցով՝ թարմացվող տեղեկատվությամբ:

Հասարակության հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմների առկայությունը կարևորում է կրթական ծառայությունների հանրայնացման գործընթացը: Գոյություն ունեցող տվյալների որոշակի հրապարակումը հնարավորություն է տալիս գնահատել այդ գործիքների արդյունավետությունը և զարգացնել հետադարձ կապի մեխանիզմները՝ ընդլայնելով արտաքին շահակիցների հետ համագործակցության շրջանակները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանը միտված միջոցառումների կազմակերպումը: Միաժամանակ գտնում է, որ դասախոսական կազմի և ուսանողների ներուժի շնորհիվ հնարավոր է ընդլայնել նման

միջոցառումների շրջանակը, ինչը կնպաստի քոլեջի մասին իրազեկվածության բարձրացմանը և լրացուցիչ ֆինանսական հոսքերի ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում է հաշվետվողականության համակարգ, որը ապահովում է հաշվետվողականությունը հասարակության և պետության առջև, ունի տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունը երաշխավորող հարթակ, առկա են հասարակության հետ կայուն հետադարձ կապի մեխանիզմներ և իրականացվում են հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման միջոցառումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵԻՊՔ-ի համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջը 2023-2027 թթ.-ի ՌԾ-ում Արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ որպես նպատակ առանձնացրել է՝ Արտաքին կապերի համակողմանի զարգացմանը, փորձի փոխանակմանը և քոլեջի միջազգայանացմանը նպաստող գործունեության ապահովում: Նպատակին հասնելու համար դիտարկվել են հետևյալ խնդիրները. գնահատել և բարելավել արտաքին կապերի հաստատումը խրախուսող ընթացակարգերը, նպաստել տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ արդյունավետ համագործակցությունների ձևավորմանը, ապահովել ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տեղական մակարդակով արտաքին փոխգործակցության զարգացման ուղղությամբ քայլեր իրականացվում են տնօրենի, Պրակտիկայի բաժնի, ամբիոնների ու Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից: Մասնավորապես, փորձագիտական այցից պարզվեց, որ պրակտիկայի բաժնի կողմից վարվող քաղաքականության արդյունքում նոր համագործակցություններ են հաստատվել փոքր կազմակերպությունների հետ և պրակտիկաների կազմակերպման առավել լայն հնարավորություններ են ստեղծվել, սակայն այդպիսի համագործակցությունները միշտ չէ, որ պայմանագրային հենքով են:

Հաստատությունը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է շուրջ 95 տեղական գործընկերների հետ, սակայն ոչ բոլոր համագործակցություններն են պայմանագրային հենքով: Փորձագիտական այցից պարզվեց, որ համագործակցություններ ՄՈՒՀ-ն ունի գործատու գործընկերներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցության շրջանակներում հաստատությունը կազմակերպում է պրակտիկաներ: ՄՈւՀ-ի ամենախոշոր գործատու-գործընկերներից են ԿՏԱԿ, Պիկսարտ Ակադեմիա, Ամերիաբանկ, Հայփոստ ՓԲԸ, ՀՀ Կադաստրի Կոմիտե և այլն:

Փորձագիտական այցից և ուսումնասիրություններից պարզվեց, որ քոլեջը չունի համագործակցություններ տարածաշրջանային քոլեջների հետ, և այս ուղղությամբ դեռևս քայլեր չեն ձեռնարկվել:

Քոլեջը համագործակցում է որոշ համալսարանների և ինստիտուտների հետ պրակտիկաների կամ համատեղ միջոցառումների կազմակերպման նպատակով (մասնավորաբար՝ Երևանի ֆիզիկայի ինստիտուտ, Եվրասիա միջազգային համալսարան, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան և այլն):

Միջազգայնացման ուղղությամբ աշխատանքներ ՄՈՒՀ-ում իրականացնում է տնօրենը, իսկ վերջին ուսումնական տարում ներդրվել է նաև միջազգային կապերի զարգացման պատասխանատուի առանձին հաստիք, որի գործառույթները սահմանված են դեռևս 2021 թ.-ին հաստատված պաշտոնի անձնագրով և վերաբերում են օտարերկրյա գործընկերների հետ համագործակցություններին ու միջազգային գործընթացներին: Փորձագիտական այցից պարզվեց, որ միջազգային կապերի զարգացման պատասխանատուն սկսում է քայլեր ձեռնարկել օտարերկրյա գործընկերներ որոնելու ուղղությամբ:

2021 թ. մշակվել և ներդրվել է «Միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման քաղաքականություն»-ը, որում ամրագրված են արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտում Քոլեջի հավակնությունները, նպատակները և ակնկալիքները, ինչպես նաև՝ գործողություններն ու միջոցները: Որպես ակնկալիքներ քոլեջն առանձնացրել է. կրթական ծառայությունների որակի շարունակական բարելավում, արդի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ կադրերի պատրաստում, համագործակցության շրջանակների ընդլայնում, միջազգային և տեղական տարբեր ծրագրերին մասնակցությամբ ֆինանսական հոսքերի ներգրավում:

Հաստատությունը համագործակցության պայմանագրեր և հուշագրեր ունի շուրջ 6 օտարերկրյա կազմակերպությունների հետ: ՄՈՒՀ-ը որոշակի փորձառություն ունի նաև միջազգային համագործակցության գործընթացում, մասնավորաբար գերմանական «Festo» ընկերության հետ համագործակցության և Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի կողմից նախաձեռնված կրթական և մշակութային ծրագրերին մասնակցության արդյունքում ներդրվել և 2011 թ.-ից իրականացվում է «Մեխատրոնիկա» մասնագիտությունը: ՄՈՒՀ-ը ակտիվ քայլեր չի ձեռնարկում «Էրազմուս +» ծրագրերին մասնակցելու ուղղությամբ: Չնայած քոլեջը կարևորում է այս ուղղությամբ աշխատանքների ձեռնարկումը, սակայն դեռևս հստակ պլանավորումներ առկա չեն այս ուղղությամբ:

2008 թ.-ից Քոլեջը համագործակցում է գերմանական «InWent» (այժմ՝ GIZ) կազմակերպության հետ էլեկտրոնային ուսուցման ուղղությամբ, որի շրջանակում իրականացվել է էլեկտրոնային ուսուցման դասընթաց:

Microsoft Innovation Center-ի կողմից Եվրոպական միության ֆինանսավորմամբ քոլեջում 2020 թ.-ին հիմնվել է երկու ինովացիոն լաբորատորիա:

2024 թ.-ին Քոլեջը համագործակցության պայմանագիր է կնքել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) երկու ուսումնական հաստատությունների հետ: Սակայն դեռևս այս ուղղությամբ ձեռնակված քայլեր առկա չեն, իսկ համագործակցության ակնկալիքները ճշգրտման փուլում են:

Քոլեջը փորձառություն ունի դուալ կաճաժամկետ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ այս գործընթացներն այժմ չեն իրականացվում, քանի որ շահակիցների մասնակցությունը խիստ նվազել է: Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջը դեռևս չի ուսումնասիրել այս հանգամանքի պատճառները:

Քոլեջը համագործակցության պայմանագրեր ունի նաև Ռուսաստանի 2 քոլեջների հետ: Ընդ որում, փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ ԵԻՊՔ-ն կարևորում է Դոնի Ռոստովի կապի և ինֆորմատիկայի քոլեջի հետ համագործակցությունը՝ պարբերաբար կազմակերպվող «SS և կրթություն» միջազգային գիտաժողովներին մասնակցելու տեսանկյունից: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ այս համագործակցությունը շարունակական արդյունքներ և ակտիվ փոխգործակցություն չի ապահովում:

Քոլեջի ուսանողները հաջողություններ են ունեցել տարբեր տարիների տեղական և միջազգային օլիմպիադաներին և մրցումներին մասնակցելով, ուսանողական թիմերը ակտիվություն են ցուցաբերել՝ ցուցահանդեսներին մասնակցելով (մասնավորաբար՝ «IT-Planeta» միջազգային օլիմպիադա, «ԴիջիԹեք էքսպո» ամենամյա տեխնոլոգիական ցուցահանդես, «WorldSkills International» 43-րդ միջազգային մրցույթ և այլն):

Հարկ է նշել, որ քոլեջում դեռևս բացակայում են աշխատակիցների և ուսանողների շարժունության ծրագրեր:

Իսկ ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների տիրապետմանը, ապա ըստ ինքնավերլուծության տվյալների՝ դասավանդողների, վարչական աշխատակիցների և ուսանողների գերակշիռ մասը տիրապետում են օտար լեզուների (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն), սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ տվյալները ձևավորվել են շահակիցների շրջանում հարցումների արդյունքում և դրանք հստակ չեն արտահայտում, թե ինչպիսին է օտար լեզվի իմացության մակարդակը: Անհրաժեշտ է փաստել, որ ՄՈՒՀ-ը դեռևս քայլեր չի ձեռնարկում դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Միաժամանակ, քոլեջը դեռևս չի հստակեցրել այս ուղղությամբ անհրաժեշտությունները, իսկ շահակիցները տեսնում են կարիք օտար լեզվի զարգացման ուղղությամբ:

Հարկ է նշել, որ քոլեջի պաշտոնական կայքէջում բացակայում են օտարալեզու նյութերը:

Փորձագիտական այցից պարզվեց, որ տարբեր դասավանդողներ նախաձեռնողականություն են ցուցաբերում օտարալեզու գրականություն ուսումնասիրելու և դրա հիմքով կրթական բովանդակության բարելավման ուղղությամբ: Սակայն քոլեջում դեռևս ներդրված չեն նման նախաձեռնությունները խրախուսող մեխանիզմներ:

Դատողություններ: Քոլեջը սահմանել է Արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ իր հիմնական նպատակները, սա վկայում է նպատակադրված և համակարգված մոտեցման մասին:

Արտաքին կապերի զարգացման գործընթացում ներգրավված են ոչ միայն վարչական ղեկավարությունը, այլև մասնագիտական ստորաբաժանումները, ինչը նպաստել է փոխգործակցության արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես տեսանելի է զգալի առաջընթաց՝ տեղական կազմակերպությունների հետ համագործակցության ոլորտում, ինչը վկայում է փոխգործակցության լայն ցանցի ձևավորման մասին:

Պրակտիկայի բաժնի կողմից վարվող քաղաքականությունը նպաստել է նոր համագործակցությունների հաստատմանը՝ հատկապես փոքր կազմակերպությունների հետ, ինչը ավելացնում է ուսանողների պրակտիկայի հնարավորությունները և միաժամանակ ամրապնդում գործատու-կրթական հաստատություն կապը: Միաժամանակ, քոլեջի գործընկերների թվում ոլորտային նշանակություն ունեցող խոշոր կազմակերպությունների առկայությունը բարձրացնում է կրթական ծրագրերի կիրառական կողմը և ուսանողների պատրաստվածության մրցունակությունը:

Թեև Քոլեջը իրականացնում է բազմապիսի համագործակցություններ, սակայն դրանք հաճախ չեն ձևակերպվում պայմանագրային հիմքով: Սա ստեղծում է սահմանափակումներ՝ կապված իրավական փոխհարաբերությունների անորոշության, կազմակերպչական հստակության պակասի և երկարաժամկետ համագործակցության կայունության ապահովման հետ:

Քոլեջը չունի համագործակցություն տարածաշրջանային քոլեջների հետ և այս ուղղությամբ դեռևս քայլեր չեն ձեռնարկվել, ինչը բաց է թողնում հնարավորությունները տարածաշրջանային մակարդակում փորձի փոխանակման և համատեղ նախագծերի իրականացման համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների պարբերաբար հաջողությունները միջազգային հարթակներում և տեղական տեխնոլոգիական միջոցառումներում նպաստում են քոլեջի միջազգային ճանաչելիությանը և ուսանողների փորձառության ընդլայնմանը:

Փորձագիտական խումբը նշում է, որ, չնայած 2021 թ.-ից համապատասխան քաղաքականության առկայությանը, 2023–2027 թթ.-ի ՌԾ գործողությունները լիարժեք չեն ապահովում դրանում ամրագրված ակնկալիքների իրականացումը: Սա վկայում է այս ուղղությամբ ռազմավարական պլանավորման և իրականացման միջև անջրպետի մասին:

Փորձագիտական խումբը գտնում է, որ միջազգային կապերի պատասխանատուի պաշտոնի ներդրումը ենթադրում է կազմակերպչական պատրաստակամություն և ինտեգրում միջազգայնացման համակարգային կառավարման մոդելի:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև քոլեջի՝ միջազգային որոշ գործընկերների հետ համագործակցությունները և որոշ նախաձեռնություններն այս ուղղությամբ: Նաև դրական է, որ քոլեջում համագործակցությունների դրական փորձ է եղել թե՛ կրթական ծրագիր ներդնելու, թե՛ կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու ուղղություններով: Այս ամենը հիմք է ենթադրելու քոլեջի առկա կարողությունների մասին և միջազգայնացման ուղղությամբ հնարավորություններն ընդլայնելու վերաբերյալ:

Քոլեջը դեռևս լիարժեք ակտիվություն չի ցուցաբերում «Erasmus+» կամ այլ շարժունության ծրագրերի ներգրավման հարցում: Աշխատակազմի և ուսանողների շարժունության բացակայությունը զգալիորեն սահմանափակում է միջազգայնացման իրական արդյունավետությունը, միջազգային փորձի ուսումնասիրման, միջազգային հարթակում վարկանիշի բարձրացման, ինչպես նաև ֆինանսական մուտքերի բազմազանեցման հնարավորությունները:

Չնայած Չինաստանի հետ ստորագրված համագործակցային փաստաթղթերին, գործնական գործունեություն կամ արդյունքներ դեռևս չկան և սպասումները գլխավորապես պայմանավորեցվում են մյուս կողմի ակնկալիքներով: Սա խոսում է այդ կապերի ոչ բավարար արդյունավետության և քոլեջի դեռևս պասիվ դիրքորոշման մասին:

Քոլեջը նախկինում ունեցել է դուալ կրթական ծրագրերի իրականացման որոշակի փորձառություն, սակայն ներկայումս այդ ծրագրերն այլևս չեն իրականացվում: Դրանց ընդհատման պատճառների ուսումնասիրված չլինելը խոչընդոտում է թե՛ այդ փորձառության արժևորմանը, թե՛ ծրագրերի հնարավոր վերագործարկմանն ու շարունակական զարգացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ ոլորտում մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգայնորեն ճանաչված լավագույն փորձը, ինչպես նաև ձևավորել համապատասխան գործընկերային կապեր՝ հատկապես տարածաշրջանային մակարդակում: Հատկապես կարևորվում է գործատու հաստատությունների հետ ամուր և արդյունավետ համագործակցությունների հաստատումը՝ դուալ կրթության համակարգի կայուն ներդրման և կայացման նպատակով: Սա կարևոր հնարավորություն է ֆինանսական մուտքերի բազմազանեցման, հեղինակության բարձրացման և մարդկային ռեսուրսների զարգացման տեսանկյունից, միաժամանակ քոլեջի՝ ըստ ռազմավարական ծրագրի հասարակական պատասխանատվության ուղղությամբ սահմանված նպատակը պայմանավորեցվում է այս գործընթացով:

Օտար լեզվի իմացության վերաբերյալ տվյալները սուբյեկտիվ հիմք ունեն, այս հանգամանքը կարող է հանգեցնել ոչ ճիշտ պատկերի, և ոչիրական կարիքների գնահատման, ինչը խանգարում է հստակ և հիմնավորված ծրագրերի մշակմանը: Քոլեջը դեռևս չունի հստակեցված ծրագիր՝ դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի գիտելիքների զարգացման ուղղությամբ, սա սահմանափակումներ է առաջացնում միջազգայնացման գործընթացներում նրանց լիարժեք մասնակցությանը:

Քոլեջի կայքում օտարալեզու տեղեկատվության բացակայությունը սահմանափակում է օտարերկրյա շահակիցների մուտքը հաստատության մասին տեղեկատվությանը և նվազեցնում է հաստատության միջազգային տեսանելիությունը:

Չնայած առկա են անհատական նախաձեռնություններ՝ օտարալեզու բովանդակություն ուսումնասիրելու ուղղությամբ, սակայն դրանց խրախուսման համար քոլեջում չկա մեխանիզմ, ինչը կարող է հանգեցնել այդպիսի նախաձեռնությունների անկայունության: Մինչդեռ համապատասխան մեխանիզմների ներդրումը կնպաստի այդպիսի նախաձեռնությունների կայունությանն ու նոր նախաձեռնությունների ձևավորմանը: Փորձագիտական խումբը կարևորում

է արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ ռազմավարական նպատակներից և քաղաքականությունից բխող խրախուսման մեխանիզմների ներդրումը, ինչը երաշխիքներ կստեղծի այս ուղղությամբ ռազմավարական նպատակների արդյունավետ հասանելիության համար:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի զարգացման հեռանկարները արտաքին կապերի և միջազգայնացման նպատակային խորացման համատեքստում: Համապատասխան արտաքին վեկտորի ձևավորումը և դրա շուրջ համակարգված զարգացումների իրականացումը կարող են դառնալ քոլեջի առաջընթացի առանցքային գործոններից մեկը: Մասնավորապես՝ այս ուղղությամբ ակտիվ քաղաքականությունը կարող է ապահովել ֆինանսական մուտքերի նոր և բազմազան աղբյուրների ներգրավում, կրթական ծրագրերի համապատասխանեցում միջազգային չափանիշներին, ուսանողության և աշխատակազմի շարժունության հնարավորությունների ընդլայնում, դասախոսական և վարչական կազմի մասնագիտական կարողությունների զարգացում, ինչպես նաև հետազոտական գործունեության ավելի մրցունակ և ներկայացուցչական ներկայացում միջազգային հարթակներում: Բացի այդ, արտաքին կապերի ամրապնդումը կարող է խթանել ռեսուրսների համալրումը նոր աղբյուրներից և նպաստել կարճաժամկետ, կիրառական ուղղվածությամբ ծրագրերի իրականացմանը: Այս համատեքստում, արտաքին կապերի և միջազգայնացման հետևողական զարգացումը դիտվում է ոչ միայն որպես առանձին ռազմավարական ուղղություն, այլ որպես ամբողջ հաստատության թռիչքային առաջընթացի հնարավոր հիմք:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ՌԾ-ում ամրագրված նպատակներն ու իրական գործողություններն այս ուղղությամբ հաճախ չեն համընկնում, քոլեջը դեռևս ակտիվորեն ներգրավված չէ միջազգային շարժունության ծրագրերում և հստակ քայլեր չի ձեռնարկել, տարածաշրջանային և միջազգային համագործակցությունները դեռևս ցածր ինտենսիվությամբ են, ընդհատվել են դուալ կրթության ծրագրերի շարունակականությունը, բացակայում են օտար լեզվի իմացության վերաբերյալ հստակ ծրագրերը, ինչպես նաև օտարալեզու տեղեկատվության ոչ բավարար մատչելիությունը սահմանափակում է քոլեջի ճանաչելիությունը, գործընկերային ներուժը և մրցունակությունը կրթության գլոբալ համակարգում, արտաքին կապերի և միջազգայնացման հետևողական զարգացումը դեռևս չի դիտարկվել ռազմավարական մյուս ուղղությունների զարգացման հնարավոր հիմք, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը չի համապատասխանում չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2017 թ.-ից: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ 2017 թ.-ից Քոլեջը համալրվել է որակի պատասխանատուի մեկ հաստիքով: 2020 թ.-ին ձևավորվել է ՈԿՀ-ն: ՈԿՀ կազմում ընդգրկված են դասախոսներ, ուսումնական գծով փոխտնօրեն, ուսումնական մասի վարիչ, ամբիոնի վարիչ, կարիերայի պատասխանատու, գործատու-դասախոս, գործատու,

լաբորանտ, հաշվետար, ուսումնական մասի գործավար, տնօրենի օգնական, քոլեջի իրավախորհրդատու և 7 ուսանող՝ տարբեր կուրսերից (ընդհանուր 26 անդամ)։ Ոչ հիմնական կազմը յուրաքանչյուր տարի փոփոխվում է (գործատու, դասախոս, ուսանող)։

ՈԿՀ-ն իր գործառույթներն իրականացնում է ՈԿՀ կանոնակարգի (2021թ.) և «ՈԿՀ աշխատանքների կազմակերպման ընթացակարգ»-ի (2021թ.) դրույթներով։ 2021թ. Քոլեջի ՈԿՀ-ի կողմից մշակվել է Որակի ներքին ապահովման ձեռնարկը, որտեղ ներկայացված են որակի տերմինաբանությունը, որակի հասկացությունները և այլն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Որակի ապահովման ձեռնարկով սահմանված նպատակները ընթացիկ իրականացման փուլում են՝ մասնավորապես ՊԻԳԲ շրջափուլի ներդրումը, կրթության որակի բարձրացումը և այլն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով ՈԿՀ-ն մշակել է փաստաթղթային բազա։ Մասնավորաբար ՈԿՀ-ն մշակել և ներդրել է ՌԾ մշտադիտարկման ձևաթուղթ, ստորաբաժանումների հաշվետվությունների նոր ձևաչափ, մի շարք կանոնակարգային փաստաթղթեր։ Որոշակի վերլուծում են հարցումների արդյունքները։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի Որակի ապահովման կենտրոնի կողմից 2018թ.-ին մշակվել է «Որակի քաղաքականություն», որը սահմանում է որակի ապահովման խնդիրները, հիմնական ոլորտները, որակի կառավարման համակարգը, կրթության որակի բնագավառում Քոլեջի նպատակը։

Որակի ապահովման համակարգի նպատակներից է բոլոր գործընթացներում պլանավորման, իրականացման, մշտադիտարկման, վերլուծության և որակի գնահատման մեխանիզմի կիրառումը, սակայն ուսումնասիրությունների արդյունքում, պարզ դարձավ, որ մեխանիզմի լիարժեք կիրառումը դեռևս արտահայտված չէ բոլոր գործընթացներում։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում առկա է ձևավորված գիտակցություն, որ Որակի ապահովման ուղղությամբ անձնակազմի յուրաքանչյուր ներկայացուցիչ ունի իր կարևոր դերը։

Որակի ապահովման կենտրոնի տարեկան պլանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈԱ աշխատանքներն ընդգրկում են Քոլեջի գործունեության բոլոր հիմնական ուղղությունները և կազմված են ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշների առանձնացված նպատակների և խնդիրների։ Ընդ որում ներկայացված խնդիրները փոխկապակցված են նաև ինստիտուցիոնալ հավատարմագրման նախորդ գործընթացի արդյունքում փորձագիտական խմբի կողմից վեր հանված խնդիրների և խորհրդատվությունների հետ։ Նշված են նաև գործընթացներ, որոնք բխում են ՌԾ-ից և Բարելավման պլանից, որոնց պարագայում կոնկրետ պլանավորում առկա չէ։

Նախատեսված գործողությունների համար առկա են իրականացման գործիքակազմ, ռեսուրսներ և պատասխանատվությունների բաշխում ըստ ստորաբաժանումների, նշված են նաև արդյունքներ, որոնք, սակայն, չափելի չեն։ Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ վերջին երեք տարիների աշխատանքային պլանների հիմքում դրված է քոլեջի 2023-2027թթ.-ի ՌԾ-ն, «Որակի քաղաքականության» հիմնական դրույթները, ՈԱ պատասխանատուի նախորդ ուսումնական տարվա հաշվետվությունը, որակի ապահովման պատասխանատուի պաշտոնի անձնագրում ամրագրված գործառույթների շրջանակը, իսկ վերջին ուսումնական տարվա պարագայում անդրադարձ է կատարված նաև ինստիտուցիոնալ կարողությունների ընթացիկ ինքնավերլուծության ժամանակ վեր հանված խնդիրներին։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ ինքնավերլուծության դիտարկումների հիման վրա կազմված բարելավման պլանով նախատեսված գործողությունների ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել, մասնավորապես՝ փաստաթղթային որոշակի հենք մշակելու և ներդնելու ուղղությամբ, աշխատանքային պլանների և հաշվետվությունների ձևաչափի մշակման ուղղությամբ, ՊԻԳԲ շրջափուլի ներդրման ուղղությամբ։

Որակի պատասխանատուի և ՈԿՀ քննարկումների համար նախատեսված է առանձին աշխատասենյակ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի որակի պատասխանատուի կողմից իրականացվում են հարցումներ քոլեջի շահակիցների շրջանում՝ վերհանելու ուսանողների, դասախոսների, շրջանավարտների, գործատուների կարիքները: Հարցումների անցկացման կազմակերպման գործընթացը կանոնակարգվում է «Հարցումների կազմակերպման ընթացակարգ»-ով: Հարցաշարերի ոսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում ներառված մի շարք հարցեր բավական ընդհանրական են:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ իրականացվել է դասախոսների կողմից ՌԾ նպատակների կատարման ընթացիկ գնահատում հարցման միջոցով: Ըստ այդ հարցման անդրադարձ է կատարվում մասնավորապես՝ որքանով է քոլեջն ապահովում իր առաքելությանը և ՀՀ կրթության ՈԱԾ-ին համահունչ կրթական քաղաքականություն և գործունեություն, որքանով է քոլեջն ապահովում արդյունավետ կառավարման համակարգ և վարչական կառույցներ որոնց գործառնումը միտված է քոլեջի առաքելության և նպատակների իրականացմանը և այլն:

Իրականացվել են ուսանողների բավարարվածությունը քոլեջի ռեսուրսներից, ստորաբաժանումներից և մատուցվող ծառայություններից, բավարարվածությունը ԵԻՊՔ կայքէջից, ուսանողների բավարարվածությունը Ուխ-ից հարցումներ: Ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացվել է հետադարձ կապի մեխանիզմների գնահատման հարցում, իրականացվել է ԵԻՊՔ դասախոսական կազմի և ուսանողների բավարարվածությունը գնահատման բազմագործոն համակարգից հարցում, դասախոսների շրջանում իրականացվել է քոլեջի ռեսուրսներից բավարարվածության հարցում, կատարվել է դասախոսական կազմի կարիքի գնահատում, դասախոսական կազմի, գործատուների և ուսանողների շրջանում անցկացվել է հարցախույզ հարցաթերթիկի միջոցով: Ինչպես նաև 2023-2024թթ. կատարվել է ուսանողների կարիքների վերհանման արդյունավետության քանակական և որակական վերլուծություն, որտեղ անդրադարձ է կատարվել՝ մասնավորապես դասավանդման որակի հետ կապված խնդիրների վերհանմանը, խորհրդատվական հանդիպումների կազմակերպման հաճախությունից և արդյունավետությունից բավարարվածությանը, քոլեջի կողմից ուսանողների հետազոտական գործընթացներում մասնակցություն ապահովող քայլերից բավարարվածությանը և այլն:

Քոլեջում իրականացվում են դասախոսների կարիքների գնահատման հարցում, քոլեջի դասախոսական կազմի և ուսանողների բավարարվածությունը քոլեջի գնահատման բազմագործոն համակարգից, դասախոսների բավարարվածությունը քոլեջի ռեսուրսներից, դասախոսների կարիքների գնահատում, ուսանողների կարիքների վերհանման արդյունավետության քանակական և որակական վերլուծություն-հարցում, ուսանողների ամփոփ հարցախույզ, ուսանողների բավարարվածությունը ՈւԽ-ից, հետադարձ կապի մեխանիզմների գնահատման հարցումներ:

Այնուամենայնիվ, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բավականին սակավաթիվ է շահակիցների մասնակցությունը հարցումներին: Հարկ է նշել, որ որոշ հարցումներ իրականացվել են մեկ անգամ, մասնավորաբար՝ ուսանողների բավարարվածությունը ՈւԽ-ից, շրջանավարտների շրջանում անցկացված հարցումները և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցաթերթիկների մշակման համապատասխան մեթոդաբանություն և մեխանիզմներ չեն գործածվում: Հարցումների արդյունքում նաև բացահայտվել է դասախոսի հետ կապված խնդիր, որը քննարկվել է ՈԿՀ-ում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրականացված հարցումները որոշակի խնդիրներ են բացահայտել, մասնավորապես ուսանողների կարիքների բացահայտման ուղղությամբ: Ինչպես նաև, հարցումների արդյունքների հիման վրա ամբիոնները համալրվել են տպիչ սարքերով: Կրթական գործընթացի բարեփոխման հետ կապված ազդեցություն հարցումները

դեռևս չեն ունեցել: Փորձագիտական այցի ուսումնասիրություններից կարելի է նշել, որ հարցումների արդյունքները քննարկվում են ստորաբաժանումներում և քոլեջի ղեկավար կազմի հետ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կիրառվող հարցաթերթերը դեռևս չեն վերանայվել և չի գնահատվել դրանց արդյունավետությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջի կողմից ուսանողների և գործատուների շրջանում կազմակերպվում են ֆոկուս-խմբային հանդիպումներ կարիերայի կենտրոնի և որակի պատասխանատուի կողմից: Սակայն հարկ է նշել, որ ֆոկուս խմբային հարցման որևէ մեխանիզմ դեռևս մշակված չէ, այն իրականացվում է քննարկումների տեսքով, միաժամանակ քննարկումները չեն արձանագրվում, և արդյունքները չեն վերլուծվում:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Որակի ներքին ապահովման համակարգի գործընթացները գտնվում են շարունակական բարելավման փուլում: Հարկ է նշել, որ որակի ներքին ապահովման համակարգի համեմատական վերլուծություն չի իրականացվել (այդ թվում՝ որակի ապահովման համակարգի ներդրման փուլում), և միաժամանակ դեռևս համակարգի արդյունավետության գնահատման գործընթաց առկա չէ:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ արտաքին գնահատման համար քոլեջը համակարգված կերպով կարողացել է տրամադրել բավականին հիմքեր, այնուամենայնիվ մի շարք տվյալների սակավություն է նկատվել և ոչ բավարար վերլուծական արդյունքներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ՈԿՀ-ի կողմից կազմակերպվել և համակարգվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը: Կազմված ինքնանվերլուծությունը, այսուհանդերձ, որոշակի տարածվել է շահակիցների շրջանակում, ինչպես նաև այն տեղադրվել է քոլեջի կայքէջում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուների և ներքին շահակիցների կարիքները որոշակի արտացոլված են ինքնավերլուծությունում, ինչպես նաև երևում է նրանց մասնակցությունը ԻՎ աշխատանքներում:

Հարցումների արդյունքները քննարկվում են ՈԿՀ-ում, տրամադրվում են ստորաբաժանումներին և ղեկավար կազմին, որոշ արդյունքներ նաև տեղադրված են կայքէջում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գնահատում է, որ Քոլեջում ձևավորվել և ներդրվել է փաստաթղթային հենք, որը նպաստել է որակի ներքին ապահովման համակարգի համակարգված և արդյունավետ գործարկմանը: Որակի կառավարման հանձնաժողովի (ՈԿՀ) ստեղծումը ապահովել է շահակիցների մասնակցությունը և նպաստել է որակի ներքին ապահովման գործընթացների համակարգված իրականացմանը, գործընթացների մշտադիտարկմանը և համապատասխան մեխանիզմների ու ընթացակարգերի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև՝ կառավարման ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրմանը:

Որակի ներքին ապահովման ձեռնարկի առկայությունը վկայում է որակի մշակույթի ձևավորման և հաշվետվողականության զարգացման ուղղությամբ կատարված նախաձեռնությունների մասին, որոնք համապատասխան են հաստատության կառուցվածքային համակարգին:

Հաշվի առնելով ՊԻԳԲ շրջափուլի ներդրումը՝ նշվում է, որ դրա կիրառումը դեռևս պահանջում է զարգացում՝ ապահովելու համար գործընթացների ամբողջական և համապարփակ մշտադիտարկում, որը կնպաստի առանցքային խնդիրների ավելի խորը վերհանմանը և բարելավման ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Ուշադրություն է հրավիրվում, որ հարցումների կազմակերպման գործընթացը կարևոր դեր է խաղում շահակիցների կարծիքների հավաքագրման համար, սակայն հետագայում շահակիցների ներգրավվածության ընդլայնումը և հետազոտությունների իրականացման ու

հարցաթերթերի ձևավորման մեթոդաբանության կատարելագործումը կնպաստեն տվյալների առավել օբյեկտիվ և հստակ վերլուծությանը: Մասնավորապես, փորձագիտական խումբը նկատում է, որ դասախոսների շրջանում իրականացվող հարցումների վրա հիմնված ՌԾ գնահատման մեխանիզմը բավարար արդյունավետություն և հիմնավորվածություն չի կարող ապահովել համապատասխան և ամբողջական գնահատականների ձևավորման համար:

Ֆոկուս-խմբային հանդիպումների կազմակերպման գործում կարևորվում է հստակ քաղաքականության և ընթացակարգերի մշակումը, ինչը հնարավորություն կստեղծի արդյունավետ և համակարգված քննարկումների իրականացման համար՝ նպաստելով խնդիրների բացահայտման և լուծման գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Որակի ապահովման համակարգը շարունակական բարելավման փուլում է, և հետագա քայլերն արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրմամբ կնպաստեն դրա համապարփակ զարգացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը հատուկ ուշադրություն պետք է հատկացնի տվյալահենք և համակողմանի ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացմանը, ինչը կնպաստի հետազոտահենք կառավարման գործընթացների շարունակական զարգացմանը:

Նշվում է նաև, որ շահակիցների լայն ընդգրկումը և Քոլեջի գործունեության վերաբերյալ տեղեկատվության առավել ակտիվ տարածումը կբարձրացնեն ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը և կընդլայնեն հետագա բարեփոխումների հաջող իրականացման հնարավորությունները:

Փորձագիտական խումբը գնահատում է Քոլեջի կողմից արտաքին գնահատման գործընթացի կարևորումը, համակարգված կազմակերպումը և ինստիտուցիոնալ ինքնավերլուծության հրապարակումը, ինչը խթանում է թափանցիկությունը, սակայն միաժամանակ տեսնում է զարգացման լայն հնարավորություններ՝ տեղեկատվության, հարցումների վերլուծությունների առավել արդյունավետ տարածման և շահակիցների ներգրավվածության ընդլայնման ուղղությամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրման փուլից հետո Քոլեջում նկատելի բարեփոխումներ են կատարվել որակի ապահովման համակարգում, ստեղծվել է ՈԿՀ, որը նպաստել է ինստիտուցիոնալ կառավարման համակարգի զարգացմանը, ձևավորվել է գործընթացների համակարգող փաստաթղթային հենք, ներդրվել է ՊԻԳԲ շրջափուլը, ինչպես նաև որակի ապահովման մշակույթը շարունակում է զարգանալ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Չի բավարարում**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**



_____

Փորձագիտական խմբի ղեկավար

Արմենուհի Սարգսյան
Հուլիսի 11, 2025թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Արմենուհի Սարգսյան** - 2006 թ.-ին ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2011 թ.-ին շնորհվել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007-2011 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի «Մաթ. անալիզ և դիֆ. հավասարումներ» ամբիոնի դասախոս, 2011-2014 թթ.՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2014-2017 թթ.՝ «Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ, 2017 թ.-ից առ այսօր՝ «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ» ամբիոնի դոցենտ: 2012-2016 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի Հեռբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ: 2017-2018 թթ.-ին եղել է ՇՊՀ-ի Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, իսկ 2018-2023 թթ.-ին՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն: Մի շարք գիտական նախագծերում հանդիսացել և հանդիսանում է ավագ գիտական աշխատող, առաջատար գիտական աշխատող կամ գիտական նախագծի ղեկավար: 2017 և 2019 թթ.-ին դասախոսությամբ հանդես է եկել Անգլիայի Քիլի համալսարանում, Erasmus+ շարժունության ծրագրի շրջանակներում: 2018-2023 թթ.-ին ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր հանդեսի խմբագրական խորհրդի նախագահի տեղակալն է, մինչ այդ (հիմնման պահից) հանդիսացել է պատասխանատու քարտուղարը: 2019 թ.-ից ներգրավված է ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներում որպես փորձագետ: Ներգրավված է եղել 14 բարձրագույն և միջին մասնագիտական հաստատությունների գործընթացներում, ընդ որում դրանցից 11-ում՝ որպես փորձագիտական խմբի ղեկավար: 2023 թ.-ից ներգրավված է Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում իրականացվող գիտական նախագծում, որը նախ ֆինանսավորվում էր FAST հիմնադրամի կողմից, իսկ աժմ՝ ՀՀ Գիտության կոմիտեի կողմից: 2024 թ.-ից ներգրավված է Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում իրականացվող Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական երկակի նշանակություն ունեցող ծրագրում: Հանդիսանում է Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր 2025» մրցույթի նախագծի ղեկավար, ՇՊՀ-ի առաջատար գիտաշխատող, դոցենտ: Ունի 57 գիտական հրատարակումներ:
2. **Արաքս Աղաջանյան**՝ Ավարտել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանը՝ «Ֆիզիկա» մասնագիտությամբ: 2012-2022 թթ.-ին աշխատել է Ստեփանավանի Հովհ. Թումանյանի անվան ավագ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցչուհի: 2020 թ.-ից առ այսօր աշխատում է Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջում՝ որպես ֆիզիկայի դասախոս, իսկ 2022 թ.-ից՝ որպես կրթության որակի պատասխանատու: 2024 թ.-ին զբաղեցրել է Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջի տնօրենի լիազորությունների ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնը: Մասնակցել է մի շարք մասնագիտական վերապատրաստումների և սեմինարների, այդ թվում՝ 2015 թ.-ին «Ներառական կրթության ներդրումը հանրակրթական հաստատություններում» թեմայով վերապատրաստում, 2017 թ.-ին ՀՀ-ում իրականացված «Հայաստանի խորհրդանիշները» խորագրով սեմինար, 2020 թ.-ին՝ «ԱՅԲ» կրթական համալիրում՝ որպես ֆիզիկայի լաբորանտ, ինչպես նաև 2020-2025 թթ.-ին ստացել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր:

3. **Գայանե Համբարձումյան**՝ 2010 թ.-ին ավարտել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը՝ «Մաթեմատիկա» մասնագիտության բակալավրի

աստիճանը: 2012 թ.-ին ավարտել է նույն համալսարանի «Մաթեմատիկա» մասնագիտության մագիստրոսի աստիճանը: 2010 թ.-ից մինչ օրս աշխատում է Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվամ պետական քոլեջում: 2014-2026թթ. աշխատել է Աղավնատան Ղուկաս Աբգարյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես համակարգչային օպերատոր: 2014-2023թթ. Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջում եղել է «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ամբիոնի վարիչ: 2023 թ.-ից մինչ օրս՝ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ:

4. **Մարիա Կիրակոսյան**՝ 2023 թ.-ից սովորում է Հայաստանի Եվրոպական համալսարանի Տեղեկատվական տեխնոլոգիաների ֆակուլտետում: Սովորական ուսումնառության ընթացքում ակտիվորեն մասնակցել է մի շարք մասնագիտական դասընթացների՝ 2023 թ. դեկտեմբերից մինչև 2024 թ. մարտ՝ «Գրաֆիկ դիզայնի հիմունքներ» (Artline Design Studio), «Առցանց շուկաների մենեջմենթ և վաճառք» (UltraWork), ինչպես նաև 2024 թ. նոյեմբերին՝ «Միջազգային ծրագրերի մենեջմենթ, միջմշակութային և միջազգային հաղորդակցություն» (KU Leuven, EUA, ERASMUS+) թեմայով դասընթաց: 2023-2024 ուստարվա ընթացքում մասնակցել է նաև EIIL, EUA-ի կողմից իրականացված մասնագիտական անգլերենի դասընթացներին՝ ուղղված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N.	16.04.2025 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում փոխտնօրենների հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:30	12:10	40 րոպե
4.	Հանդիպում շրջանավարտների (10-12 ներկայացուցիչ) հետ	12:20	13:10	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	14:30	15:20	50 րոպե
7.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	15:30	16:10	40 րոպե
8.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	16:20	17:00	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:10	18:30	80 րոպե

N.	17.04.2025 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնի վարիչների հետ			09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ			10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ			11:30	12:20	50 րոպե
4.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»,« Մեխատրոնիկա», «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և համակարգչային ցանցեր» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ			12:30	13:20	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:30	14:30	60 րոպե
6.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրերի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Մեխատրոնիկա» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և համակարգչային ցանցեր» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	14:40	15:30	50 րոպե

7.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրերի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Մեխատրոնիկա» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և համակարգչային ցանցեր» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	15:40	16:30	50 րոպե
8.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոն, Պրակտիկայի վարիչ, Ուս.մաս, Գրադարանավար, Հաշվապահ, Կադրերի բաժնի վարիչ, Արխիվավար, Լաբորանտների) ղեկավարների հետ			16:40	17:50	70 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			18:00	18:30	30 րոպե

N.	18.04.2025թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Ներքին որակի ապահովման բաժնի պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Բաց հանդիպում	10:40	11:20	40 րոպե
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:30	12:10	40 րոպե
4.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	12:20	13:10	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:30	16:30	120 ոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	16:30	17:00	30 ոպե


ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՌԾ պլան-ժամանակացույց	1
2.	ՌԾ մշտադիտարկման ձևաթղթի լրացված օրինակը	1
3.	Պաշտոնների անձնագրերը	2
4.	ՌԾ-ին կից SWOT վերլուծությունը	2
5.	«Մասնագիտության կրթական ծրագրերի մշակում, հաստատում, պարբերաբար վերանայում» փաստաթուղթը	2
6.	Տրամադրել պրակտիկայի լրացված օրագրեր	3
7.	Կուրսային աշխատանքների օրինակներ	3
8.	3 ՄԿԾ-ների համար տրամադրել Նախագծային աշխատանքների օրինակները /միջին, ցածր, բարձր գնահատականների արժանացած/ և գրախոսականները	3
9.	Տրամադրել գնահատման թերթիկի օրինակներ	3
10.	Տրամադրել հարցաշարեր, թեստեր, ստուգողական աշխատանքներ և այլ գնահատման միջոցների օրինակներ /ըստ 3 ՄԿԾ-ների/	3
11.	ՄԿԾ-ների բոլոր մշակված ծրագրերը	3
12.	Դիպլոմային աշխատանքների օրինակներ և պետական ամփոփիչ քննության հարցատոմսերը	3
13.	Ամբիոնների նիստերի արձանագրությունները	3
14.	ՈւԽ կանոնադրությունը	4
15.	ՈւԽ աշխատանքային պլան	4
16.	ՈւԽ նիստերի արձանագրություններ	4
17.	Տրամադրել վերջին 4 տարվա շրջանավարտների զբաղվածությունը ըստ ՄԿԾ-ների	4
18.	Տրամադրել գործատու դասախոսների թիվը	5
19.	Տրամադրել դասալսումների ժամանակացույցը, արձանագրություններ կամ լրացված ձևաթղթեր	5
20.	Ներկայացնել նախահաշվով պլանավորված 4233 հոդվածի կատարումը երաշխավորող փաստաթուղթ	5
21.	Ներկայացնել դասախոսների կողմից մշակված մեթոդական ձեռնարկները	6
22.	Տրամադրել կարճաժամկետ ծրագրերը	7
23.	Կարճաժամկետ ծրագրերի ժամանակացույց և եկամուտների մասին հիմքեր	7
24.	Տրամադրել հասարակական կարծիքի ուսումնասիրության հարցումների արդյունքները և վերլուծությունը	8
25.	Տրամադրել բոլոր պայմանագրերը, որոնց հետ քոլեջը կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է:	9
26.	Տրամադրել կնքված համագործործակցության հուշագրերը	9
27.	Ներկայացնել ՈԱ հաշվետվությունները /վերջին հինգ տարիների/	10
28.	Տրամադրել ՈԱ կողմից իրականացված հարցաթերթիկները և դրանց վերլուծությունները	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Մասնագիտական կաբինետներ
3. Լաբորատորիաներ
4. Արհեստանոցներ
5. Գրադարան
6. Բուժկետ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ԵԻՊՔ**-Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ
2. **ԻՎ** - Ինքնավերլուծություն
3. **ՄԿԾ**- Մասնագիտական կրթական ծրագիր
4. **ՄԿՈՒ**- Մասնագիտական կրթություն և ուսուցում
5. **ՄՈՒՀ** -Մասնագիտական ուսումնական հաստատություն
6. **ՄԿՈՒՋԱԿ**- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
7. **ՊԻԳԲ** -Պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում
8. **ՊԿՉ** - պետական կրթական չափորոշիչ
9. **ՊՈԱԿ** - Պետական ոչ առևտրային կազմակերպություն
10. **ՌԾ**- Ռազմավարական ծրագիր
11. **ՈԱԱԿ** -Որակի ապահովման ազգային կենտրոն
12. **ՈԱԾ** -Որակավորումների ազգային շրջանակ
13. **ՈԱԿ**- Որակի ապահովման կենտրոն
14. **ՈԿՀ**- Որակի կառավարման համակարգ
15. **ՈՒԽ**- Ուսանողական խորհուրդ